ACP
Armenian Copper Programme cjsc

Արժեթղթի գրանցման հայտարարագիր

ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹ

«ԱՐՄԵՆԻԱՆ ՔԱՓԸՐ ԾՐՈԳՐԱՄ»
(թողարկողի անվանումը , (անուն, ազգանունը))

փակ բաժնետիրական ընկերություն
(կազմակերպական - իրավական ձևը)

թողարկողի պետական գրանցման ամսաթիվը 09.08.1997թ.

առաջարկում է գրանցել անվանական արժեկտրոնային պարտատոմս
(նշվում է արժեթղթերի դասը (տեսակը,)

արժեթղթերի ձևը ոչ փաստաթղթային , արժեթղթերի քանակը 10,000 (տաս հազար) հատ

անվանական արժեքը 50,000 (հիսուն հազար) ՀՀ դրամ

թողարկողի գործունեության հիմնական տեսակը Պղնձի խտանյութի վերամշակում և անգուտ պղնձի արտադրություն և իրացում, պղնձի հանքաքարի արդյունահանում և վերամշակում

Թողարկված (տեղաբաշխված) է համաձայն Բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովի 10.07.2007թ. թիվ 070710/01 որոշման
(նշվում է արժեթղթերի թողարկման մասին որոշում ընդունող իրավասու մարմնի անվանումը և որոշման ընդունման ամսաթիվը)

Հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Խանջյան 19
Հեռախոս՝ (+374 10) 54 01 85, Ֆաքս՝ (+374 10) 54 01 86,
Էլ-փոստ՝ info@acp.am, ինտերնետային կայքը՝ www.copper.am
(նշվում է թողարկողի գտնվելու վայրը, փոստային հասցեն և կապի միջոցները)

Մենք հավաստիացնում ենք, որ սույն հայտարարագրում պարունակվող տեղեկությունները ստույգ են և լիակատար գիտակցում ենք, որ նրանում որևէ էական փաստի սխալ ներկայացումը կամ բացթողումը կարող է հանգեցնել հայտարարագրի գրանցման մերժմանը և(կամ) ՀՀ օրենսդրությամբ սահմանված պատասխանատվության միջոցների կիրառմանը:

ստորագրող անձինք՝

Վալերի Մեջլումյան	Գործադիր վարչության նախագահ		
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Գագիկ Արզումանյան	Վարչության անդամ, Տնօրեն		
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Սահակ Կարապետյան	Վարչության անդամ		
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Արթուր Մկրտումյան	Վարչության անդամ		
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Նիկոլայ Ֆեոֆանով	Վարչության անդամ		
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)

Ռուբեն Պապոյան	Վարչության անդամ		
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Համլետ Հարությունյան	Վարչության անդամ, Գլխավոր հաշվապահ		
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)

Ստորագրությունները վավերացնում եմ՝

Գագիկ Արզումանյան	Տնօրեն		
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)

Կ.Տ.

Արժեթղթերի ազդագիր

«ԱՐՄԵՆԻԱՆ ՔԱՓԸՐ ՓՐՈԳՐԱՄ»
(թողարկողի անվանումը /անուն, ազգանունը)
փակ բաժնետիրական ընկերություն
(կազմակերպական - իրավական ձևը)

անվանական ոչ փաստաթղթային արժեկտրոնային պարտատոմս
(արժեթղթերի դասը (տեսակը) և ձևը)

արժեթղթերի քանակը **10,000 (տաս հազար) հատ**

անվանական արժեքը **50,000 (հիսուն հազար) ՀՀ դրամ**

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԸ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՉԻ ԿՐՈՒՄ ՍՈՒՅՆ ԱԶԴԱԳՐՈՒՄ ԶԵՏԵՂՎԱԾ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՍԿՈՒԹՅԱՆ ԵՎ ՃՇՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ: ԳՐԱՆՑՄԱՆ ՓԱՍՏԸ ՉԻ ՀԱՎԱՍՏՈՒՄ ՆԵՐԴՐՄԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅՈՒՆԸ:

Պարտատոմսերի տեղաբաշխման գինը որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$P=\frac{N}{(1+t*R/m)}*\left\{c*\sum\frac{1}{(1+R)^{j-1}}+\frac{1}{(1+R)^{n-1}}\right\}$$

որտեղ՝

P – Պարտատոմսի տեղաբաշխման գինն է,
N – Պարտատոմսի անվանական արժեքն է,
R – Պարտատոմսի դիմաց վճարվող կիսամյակային տոկոսադրույքի բացարձակ արժեքն է,
t – մինչև տվյալ արժեկտրոնի վճարումը մնացած օրերի քանակն է,
m – ընթացիկ կիսամյակում ընդգրկված օրերի քանակն է,
c – կիսամյակային վճարվող արժեկտրոնային տոկոսադրույքն է,
n – արժեկտրոնների վճարումների քանակն է,
j – արժեկտրոնի տվյալ հերթական համարն է, որը փոփոխվում է տվյալ պահից մինչև վերջնական մարում մնացած արժեկտրոնների վճարումների քանակից կախված:

Պարտատոմսերի տարեկան տոկոսադրույքը 10% է: Պարտատոմսերով նախատեսվում է կիսամյակային արժեկտրոնների վճարում՝ 5%-ի չափով: Պարտատոմսերի վաճառքից հասույթը նախնական հաշվարկներով կազմում է 500,000,000 (հինգ հարյուր միլիոն) ՀՀ դրամ:
Իրենց պատկանող արժեթղթերի վաճառքը առաջարկող բաժնային արժեթղթերի սեփականատերեր չկան:

Երաշխավոր՝ «Լեռնամետալուրգիայի ինստիտուտ» փակ բաժնետիրական ընկերություն:

Տեղաբաշխողներ՝

«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» փակ բաժնետիրական ընկերություն
(Գլխավոր տեղաբաշխող)

«Զարգացման Հայկական Բանկ» բաց բաժնետիրական ընկերություն
(Տեղաբաշխման խմբի անդամ)

«Ֆյուչր Կապիտալ Մարկետ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն
(Տեղաբաշխման խմբի անդամ)

Զեկուցագրում ներառված տեղեկությունների ցանկը

1. Տեղեկությունների ամփոփ նկարագիր.....5
2. Ռիսկային գործոններ.....7
3. Ընդհանուր տեղեկություններ Թողարկողի մասին.....8
4. Թողարկողի կառավարման մարմինները և կառավարմանը մասնակցող անձինք.....14
7. Տեղեկություններ թողարկված արժեթղթերի վերաբերյալ.....32
8. Տեղեկություններ Թողարկողի ֆինանսական վիճակի մասին.....35
9. Տեղեկություններ թողարկողի գործունեության վերաբերյալ.....41
10. Տեղեկություններ թողարկողի նախատեսվող գործունեության մասին.....55
11. Տեղեկություններ թողարկվող (առաջարկվող) արժեթղթերի վերաբերյալ.....56

Հավելվածներ.....61

1. Տեղեկությունների ամփոփ նկարագիր

«Արմենիան Քափիթլ Փրոգրամ» փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ Թողարկող) հիմնադրվել է 1997 թվականին, և մինչև անվանափոխությունը հայտնի է եղել որպես «Մանես և Վալլեքս» փակ բաժնետիրական ընկերություն (անվանափոխությունը կատարվել է 2001 թվականի հոկտեմբերի 18-ի Թողարկողի բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից ընդունված որոշմամբ):

Թողարկողի հիմնական գործունեությունն անզուտ պղնձի արտադրությունն ու իրացումն է, ինչպես նաև՝ պղնձի հանքաքարի արդյունահանումն ու վերամշակումը: Բացի այդ, Թողարկողը երկրաբանահետախուզական աշխատանքներ է իրականացնում պղնձի և պղնձի-ոսկու հանքերում՝ դրանցից հետագայում հանքարդյունահանում ծավալելու նպատակով: Թողարկողն իր գործունեությունը ծավալում է շուրջ մեկ տասնյակ լիցենզիաների հիման վրա, որոնք Թողարկողին իրավասություն են տալիս հանրապետության տարբեր մարզերում իրականացնել երկրաբանահետախուզական աշխատանքներ և հանքարդյունահանում:

Թողարկողն անզուտ պղնձի արտադրության ու իրացման ոլորտում Հայաստանում և հարավային Կովկասում չունի մրցակիցներ: Ներկայումս Թողարկողին է պատկանում տարածաշրջանում միակ պղնձաձուլական գործարանը, որը տեղակայված է Լոռու մարզի Ալավերդի քաղաքում և ունի ավելի քան 235 տարվա պատմություն: Ալավերդու պղնձաձուլական գործարանում թողարկվող արտադրանքի՝ անզուտ պղնձի, արտադրության համար որպես հումք է հանդիսանում պղնձի հանքաքար արդյունահանող և վերամշակող հայաստանյան մի քանի ընկերությունների կողմից մատակարարվող պղնձի խտանյութը: Մատակարարման ծավալները 2006 թվականին ունեցել են հետևյալ կառուցվածքը.

2006թ. մատակարարման կառուցվածքը



«ԶՊՄԿ»՝ Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ

Ներկայումս Թողարկողի կողմից թողարկվող անզուտ պղնձի արտադրանքի տարեկան ծավալը կազմում է շուրջ 9 հազ. տոննա, որը միջազգային շուկաներում չափազանց փոքր տեսակարար կշիռ ունի, հետևապես՝ Թողարկողն իրացման խնդիր գործնականում չունի:

Թողարկողն իր արտադրանքի իրացումը կազմակերպում է միայն արտասահմանում: Արտադրված անզուտ պղնձի ամբողջ ծավալը գնվում է Norddeutsche Affinerie AG ընկերության կողմից, որի հետ Թողարկողն ունի ավելի քան 5 տարվա համագործակցության փորձ: Նշված ընկերության հետ ստորագրված պայմանագրերն ապահովում են հաստատված պայմաններով անզուտ պղնձի ամբողջական իրացում՝ նույնիսկ շուկայի կոնյուկտուրայի փոփոխությունների պարագայում: Արտադրանքի տեղափոխումն իրականացվում է հստակ ձևավորված ուղիներով, որոնց միջոցով Ալավերդիում արտադրված անզուտ պղինձն արդեն 10 տարի մատակարարվում է եվրոպական շուկաներ:

Թողարկողի գործունեության ֆինանսական արդյունքների մասին համառոտ պատկերացում կարելի է կազմել ստորև ներկայացվող գծապատկերներից.





Ինչպես երևում է գծապատկերներից, Թողարկողի հասույթը ցուցաբերել է կայուն աճի միտում՝ 2004 թվականի համեմատությամբ 2006 թվականին ավելանալով շուրջ 63.9%-ով: Մինչդեռ զուտ շահույթի ցուցանիշը կայուն չի եղել: Ինչ վերաբերվում է 2005 թվականին արձանագրված վնասին, ապա դա մեծ մասամբ պայմանավորված է Թողարկողի ոչ բնականոն կորուստներ առաջացրած գործոններով:

Եթե մինչ այժմ Թողարկողն իր ֆինանսական ռեսուրսների պակասը համալրում էր տարբեր միջազգային և տեղական ֆինանսական կառույցներից ստացվող վարկերի հաշվին, ապա 2007 թվականին Թողարկողի կողմից ռազմավարական որոշում է ընդունվել՝ մուտք գործել արժեթղթերի շուկա և ֆինանսական միջոցներ հավաքագրել պարտատոմսերի թողարկման միջոցով:

Կարևորվում է այն հանգամանքը, որ վարկային պատմության, ֆինանսատնտեսական վիճակի վերլուծության և գործունեության որակական գնահատականների հիման վրա 2006 թվականին ՀՀ կենտրոնական բանկի կողմից Թողարկողին շնորհվել է ներդրումային համարվող Գ+ վարկանիշ:

Դա նշանակում է, որ Թողարկողի պարտատոմսերով ՀՀ ԿԲ-ն պատրաստակամ է ռեպո գործարքներ կնքել, որն էլ իր հերթին մեծապես կնպաստի պարտատոմսերի իրացվելիության ապահովմանը և ներդրողների համար պարտատոմսերի ձեռքբերման լրացուցիչ խթան կհանդիսանա:

Սույն ազդագրի շրջանակներում Թողարկողի կողմից նախատեսվում է թողարկել և տեղաբաշխել 50,000 (հիսուն հազար) ՀՀ դրամ անվանական արժեքով 10,000 (տաս հազար) հատ անվանական արժեկտրոնային պարտատոմսեր՝ 500,000,000 (հինգ հարյուր միլիոն) ՀՀ դրամ ընդհանուր ծավալով՝ 18 ամիս մարման ժամկետով և 10% տարեկան եկամտաբերությամբ: Պարտատոմսերի տեղաբաշխման արդյունքում հավաքագրված գումարն ուղղվելու է Թողարկողի շրջանառու միջոցների համալրմանը:

Սույն ազդագիրը հասցեագրված է Թողարկողի պարտատոմսերում ներդրումներ կատարելու ցանկություն ունեցող պոտենցիալ ներդրողներին: Այն նպատակ է հետապնդում բացահայտել Թողարկողի վերաբերյալ ողջ տեղեկատվությունը, որն էլ իր հերթին հնարավորություն կստեղծի ներդրումային կշռադատված որոշումների կայացման համար:

Թողարկողի գործունեության և ֆինանսական վիճակի մասին մանրամասն և ամբողջական տեղեկատվությունը ներկայացված է ազդագրի հաջորդ բաժիններում:

2. Ռիսկային գործոններ

Պարտատոմսերում ներդրումները սովորաբար կապված են որոշակի ռիսկերի հետ: Հետևաբար ներդրողները մինչև ներդրումային որոշում ընդունելը պետք է հանգամանորեն վերլուծեն ներդրման հետ կապված ռիսկերը, ինչպես նաև ազդագրում ներկայացված այլ տեղեկատվությունը:

Նշված ռիսկերից յուրաքանչյուրը կարող է հանգեցնել Թողարկողի ֆինանսական դրության կամ շուկայական իրավիճակի վատթարացմանը, որն էլ կարող է պատճառ հանդիսանալ Թողարկողի կողմից ստանձնած պարտավորությունների լրիվ կամ մասնակի չիրականացմանը կամ հետագայում, ներդրողների համար կարող է առաջացնել որոշակի խոչընդոտներ պարտատոմսեր իրացնելու գործընթացում: Ներդրողները պետք է հաշվի առնեն նաև այն հանգամանքը, որ ստորև ներկայացվող ռիսկերից բացի հնարավոր է նաև այլ խնդիրների առաջացում, որոնք հետագայում կարող են անցանկալի հետևանք ունենալ Թողարկողի ֆինանսական դրության և պարտատոմսերի իրացվելիության վրա: Այնուամենայնիվ, Թողարկողի կողմից որպես առավել էական ռիսկեր դիտարկվում են հետևյալները.

- *Աշխարհաքաղաքական ռիսկեր.* աշխարհաքաղաքական իրավիճակի անբարենպաստ փոփոխությունների արդյունքում հնարավոր է առաջանան այնպիսի բացասական գործոններ, որոնք կարող են անբարենպաստ ազդեցություն ունենալ տրանսպորտային ուղիների և երկրում ընդհանուր տնտեսական իրավիճակի վրա: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Թողարկողի արտադրանքն ամբողջությամբ արտահանվում է, վերոնշյալը կարող է բացասաբար անդրադառնալ Թողարկողի իրացման ծավալի վրա:

- *Գնաճային ռիսկ.* երկրում գնաճի բարձր մակարդակի առկայության դեպքում Թողարկողի կողմից իր պարտատոմսերի դիմաց առաջարկվող եկամտաբերությունը կարող է դառնալ ոչ շահավետ:

- *Արտարժութային ռիսկ.* Թողարկողի գործառնությունների մեծ մասն իրականացվում է արտարժույթով, հետևաբար, արտարժութային փոխարժեքների զգալի տատանումները կարող են մեծ ազդեցություն ունենալ (ինչպես դրական, այնպես էլ բացասական) Թողարկողի ֆինանսական արդյունքների վրա:

- *Գնային ռիսկ.* Միջազգային շուկայում պղնձի գների անկումը կարող է բացասական հետևանք ունենալ Թողարկողի գործունեության արդյունքների վրա՝ հաշվի առնելով վերջինիս կողմից իրականացվող հանքարդյունահանման գործունեությունը:

- *Նորմատիվ և օրենսդրական դաշտի փոփոխություններ.* Թողարկողի գործունեությունն առնչվում է մի շարք բնապահպանական խնդիրների հետ, հետևաբար, բնապահպանական նոր նորմերի ընդունումը և ավելի խիստ պահանջների սահմանումը բացասական ազդեցություն կարող են ունենալ ինչպես Թողարկողի գործունեության, այնպես էլ ընդհանուր շահույթի մակարդակի վրա:

- *Պարտատոմսերի իրացվելիության ռիսկ.* ՀՀ-ում կորպորատիվ պարտատոմսերի շուկան դեռևս գտնվում է կազմավորման փուլում, և բացակայում է այս գործիքների ակտիվ երկրորդային շուկան: Հետևապես, Թողարկողը չի կարող երաշխավորել, որ իր կողմից թողարկված պարտատոմսերը ներդրողները ցանկացած պահի կարող են իրացնել իրենց համար շահավետ գնով: Ֆինանսական շուկայում տոկոսադրույքների տատանումները ևս բացասաբար կարող են անդրադառնալ պարտատոմսերի եկամտաբերության և իրացվելիության վրա:

3. Ընդհանուր տեղեկություններ Թողարկողի մասին

3.1. Թողարկողի ֆիրմային անվանումն է՝

հայերեն՝ **«Արմենիան Քափըր Փրոգրամ» փակ բաժնետիրական ընկերություն**
ռուսերեն՝ **закрытое акционерное общество “Армениан Копр Програм’’**
անգլերեն՝ **“Armenian Copper Programme” closed joint stock Company**

Թողարկողի կրճատ անվանումն է՝

հայերեն՝ **«Էյ-Սի-Փի» ՓԲԸ**
ռուսերեն՝ **ЗАО “Эй-Си-Пи’’**
անգլերեն՝ **“ACP” CJSC**

Թողարկողի ֆիրմային անվանումը նման է «Արմենիան մոլիբդենիում փրոդաքշընն»՝ «Էյ Էմ Փի» կազմակերպության անվանմանը: Թողարկողը տվյալ ընկերության հետ որևէ կերպ փոխկապակցված չէ:

3.2. Թողարկողի կազմակերպական-իրավական ձևն է՝ փակ բաժնետիրական ընկերություն: Թողարկողը գրանցվել է 09.08.1997թ.՝ որպես «Մանես և Վալլեքս» փակ բաժնետիրական ընկերություն: «Մանես և Վալլեքս» ՓԲԸ-ի 2001թ. հոկտեմբերի 18-ին կայացած բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովի կողմից որոշում է կայացվել վերանվանել ընկերությունը և որպես նոր անվանում ընտրել «Արմենիան Քափըր Փրոգրամ»-ը՝ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ նախկին անվանումը շփոթություն է առաջացնում և՛ հայաստանյան, և՛ արտասահմանյան գործընկերների մոտ: Արդյունքում՝ 06.12.2001թ. Թողարկողը վերանվանվել է որպես «Արմենիան Քափըր Փրոգրամ» փակ բաժնետիրական ընկերություն:

3.3. Թողարկողի պետական գրանցման վկայականի առաջին գրանցման ամսաթիվն է 09.08.1997թ., գրանցման համարն է՝ 12.120.00448, իսկ գրանցման վկայականի սերիան և համարն է 01Ա 036409: Թողարկողի վերջին գրանցման ամսաթիվն է՝ 04.03.2005թ. (ներդիր 012՝ գործադիր մարմնի ղեկավարի (տնօրեն) գրանցում):

3.4. Տարբեր իրավասու մարմինների կողմից Թողարկողի ստացած համապատասխան գործունեությունների իրականացման լիցենզիաների վերաբերյալ տվյալները ներկայացված են ստորև բերված աղյուսակում.

N	Լիցենզավորվող գործունեությունը	Լիցեն-զիայի համարը	Տրման ամսաթիվը	Գործողության ժամկետը	Լիցենզավորող մարմնի անվանումը
1.	ՀՀ Լոռու մարզի Ալավերդու պղնձի հանքավայրում հանքարդյունահանման հատուկ լիցենզիա	ՀԱ-Լ-14/89	23.03.2004թ.	06.08.2001թ.-ից մինչև 06.08.2026թ.	ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն
2.	Լոռու մարզի Թեղուտի պղինձ-մոլիբդենային հանքավայրում հանքարդյունահանման հատուկ լիցենզիա	ՀԱ-Լ-14/90	23.03.2004թ.	08.02.2001թ.-ից մինչև 08.02.2026թ.	ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն
3.	Լոռվա մարզի Թեղուտի փիրուզի հանքավայրում (A-B-C-D եզրագծով տեղամաս) հանքարդյունա-հանման հատուկ լիցենզիա[1]	ՀԱ-Լ-14/136	04.05.2004թ.	19.07.2000թ.-ից մինչև 19.07.2025թ.	ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն

[1] Նշված լիցենզիան 04.05.2004թ.-ին տրվել է «Ֆիրմա ԱՌ-ՇԻՆ» ՍՊԸ-ին: ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարի 2006թ. մարտի 16-ի թիվ 63-Ա հրամանի համաձայն լիցենզիան և նրանով տրված հանքային իրավունքները փոխանցվել են «Արմենիան Քափըր Փրոգրամ» ՓԲԸ-ին:

N	Լիցենզավորվող գործունեությունը	Լիցեն-զիայի համարը	Տրման ամսաթիվը	Գործողության ժամկետը	Լիցենզավորող մարմնի անվանումը
4.	ՀՀ տարածքում պայթեցման աշխատանքների կատարման լիցենզիա	07 ՊԱ № 0002	29.03.2002թ.	անժամկետ	ՀՀ արդյունաբերու-թյան մեջ աշխատանքների անվտանգ կատարման և լեռնային հսկողության վարչություն
5.	ՀՀ տարածքում պայթուցիկ նյութերի կամ պայթեցման սարքավորումների առևտրի իրականացման լիցենզիա	ՊՆՊՍ № 07/05	15.09.2003թ.	անժամկետ	ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն
6.	Ալավերդու պղնձի հանքավայրում ընդերքն օգտակար հանածոների շահագործման նպատակով ուսումնասիրության հատուկ լիցենզիա	2	29.12.2005թ.	29.12.2005թ.-ից մինչև 01.09.2007թ.	ՀՀ բնապահպանության նախարարություն
7.	Լոռու մարզի Թեղուտի հանքային դաշտում ընդերքն օգտակար հանածոների շահագործման նպատակով ուսումնասիրության հատուկ լիցենզիա	21	29.12.2005թ.	29.12.2005թ.-ից մինչև 20.12.2010թ.	ՀՀ բնապահպանության նախարարություն
8.	Լոռու մարզի Մարցիգետի հանքային դաշտի ընդերքն օգտակար հանածոների շահագործման նպատակով ուսումնասիրության հատուկ լիցենզիա	22	29.12.2005թ.	29.12.2005թ.-ից մինչև 20.12.2010թ.	ՀՀ բնապահպանության նախարարություն
9.	Լոռու մարզի Մարցիգետի հանքային դաշտի Ձաղիձորի տեղամասում ընդերքն օգտակար հանածոների շահագործման նպատակով ուսումնասիրության լիցենզիա	72	20.12.2004թ.	20.12.2004թ.-ից մինչև 31.12.2007թ.	ՀՀ բնապահպանության նախարարություն
10.	Թեղուտի պղինձ-մոլիբդենային հանքավայրում ընդերքն օգտակար հանածոների շահագործման նպատակով ուսումնասիրության լիցենզիա	97	16.02.2005թ.	16.02.2005-ից մինչև 31.12.2007	ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն

3.5. Թողարկողին հարկային մարմնի կողմից հատկացված հարկատու անձի հաշվառման համարն է՝ 06605968:

3.6. Թողարկողի համար հաշվարկային և տարադրամային հաշիվներ են բացված «Անելիք Բանկ» ՍՊԸ, «Կասկադ Բանկ» ՓԲԸ, «Յունիբանկ» ՓԲԸ, «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ, «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ, «Կոնվերս Բանկ» ՓԲԸ, «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ, «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ բանկերում:

3.7. Թողարկողն ունի 1 մասնաճյուղ՝ Արցախյան մասնաճյուղը, որը ստեղծվել է 2002 թվականի հուլիսի 15-ին, և գտնվում է ԼՂՀ, ք.Ստեփանակերտ, Վաղարշ Վաղարշյան 81 հասցեում: Մասնաճյուղի տնօրենն է Արթուր Մկրտումյանը, որի լիազորություններն անժամկետ են:

3.8. Թողարկողը բաժնային արժեթղթերի նշանակալից կամ խոշոր սեփականատեր է հետևյալ ընկերություններում.

Իրավաբանական անձի ֆիրմային անվանումը և կազմակերպական-իրավական ձևը	Գտնվելու վայրը և փոստային հասցեն	Թողարկողին պատկանող բաժնային արժեթղթերի	
		քանակը	մասն. չափը
«Մանեսի ԳՄԳ» բաց բաժնետիրական ընկերություն	ՀՀ, Լոռու մարզ, ք. Ալավերդի, Կիրովի 4	6350	16.32%
«Թեղուտ» փակ բաժնետիրական ընկերություն	ՀՀ, ք. Երևան, Խանջյան 19	100	100%
«Գուգարքի ԳԵՈ» փակ բաժնետիրական ընկերություն	ՀՀ, Լոռու մարզ, գ. Մարգահովիտ	39001	100%

3.9. Թողարկողի 2004-2006թթ. ՀՀ հաշվապահական հաշվառման ստանդարտներին և ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան կազմված ֆինանսական հաշվետվությունների աուդիտն իրականացվել է «Սարոս-Աուդիտ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից, որի տվյալներն են.

Հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Բրյուսովի 26
Հեռ./Ֆաքս՝ 54 70 26
Էլ. փոստ՝ saros_audit@mail.ru

Բացի այդ, նույն ժամանակահատվածի Թողարկողի միջազգային ստանդարտներին համապատասխան կազմված ֆինանսական հաշվետվություններն աուդիտի են ենթարկվել «KPMG-Armenia» փակ բաժնետիրական ընկերության կողմից, որի տվյալներն են՝

հասցե՝ ՀՀ, 0010, Երևան, Մհեր Մկրտչյան 8,
հեռ.՝ (374-10) 566762,
ֆաքս՝(374-10) 566762,
Ինտերնետային կայք՝ http://www.kpmg.am:

Թողարկողի միջազգային ստանդարտներին համապատասխան կազմված տարեկան ֆինանսական հաշվետվությունները բացահայտված են Թողարկողի ինտերնետային կայքում (www.copper.am):

Հայտարարագրում փորձագետների կամ խորհրդատուների կողմից տրված կարծիքներ չկան:
Թողարկողին պարտատոմսերի թողարկման նախապատրաստման, այդ թվում՝ պարտատոմսերի ազդագրի և պարտատոմսերի գրանցման հայտարարագրի կազմման հարցերում խորհրդատվական ծառայություններ է մատուցել «ԱՐՄՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ն՝ համաձայն 07.02.2007թ. կնքված IB/07-001 պայմանագրի:

3.10. Թողարկողը արդյունաբերական, բանկային, ֆինանսական խմբերում, հոլդինգներում, կոնցեռններում և միություններում մասնակցություն չունի:

3.11. 2007 թվականի հուլիսի 1-ի դրությամբ Թողարկողն ունի թվով 1071 աշխատակից, որից 205-ն ընդգրկված են վարչական ապարատում: Հարկադիր պարապուրդում գտնվող աշխատակիցներ չունի:

3.12. Թողարկողի կանոնադրական կապիտալը կազմում է 3.069.715.000 (երեք միլիարդ վաթսունինը միլիոն յոթ հարյուր տասնհինգ հազար) ՀՀ դրամ, որը բաժնետերերի կողմից ամբողջությամբ (100%) վճարված է:

3.13. Թողարկողի անվանական սովորական բաժնետոմսերի սեփականատերերը 2-ն են:

3.14. 2007թ. հունվարի 1-ի դրությամբ Թողարկողի հիմնական միջոցների կառուցվածքը հետևյալն է.

հազ ՀՀ դրամ

Անվանումը	Սկզբնական արժեք	Հաշվեկշռային արժեք	Կուտակված մաշվածություն
Շենքեր	3,653,256.0	3,630,046.0	23,210
Կառուցվածքներ	1,614,954.0	1,614,954.0	0.0
Փոխանցող հարմարանքներ	113,390.0	113,390.0	0.0
Մեքենաներ և սարքավորումներ	1,818,813.0	1,818,813.0	0.0
Տրանսպորտային միջոցներ	455,417.0	455,417.0	0.0
Արտադր. և տնտես. գույք, գործիքներ	118,133.0	118,133.0	0.0
Ընդամենը այլ հիմնական միջոցներ	28,627.0	28,627.0	0.0
Ընդամենը շահագործման մեջ գտնվող հիմնական միջոցներ	***7,796,960.0***	***7,773,750.0***	***23,210***
Ընդամենը շահագործման մեջ չգտնվող հիմնական միջոցներ	***1,544,402.0***	***1,544,402.0***	***0.0***
Հողամասեր	***70,083.0***	***70,083.0***	***0.0***
Ընդամենը հիմնական միջոցներ	***9,411,445.0***	***9,388,235.0***	***23,210***

Վերը նշված աղյուսակում հիմնական միջոցների սկզբնական և հաշվեկռային արժեքների նման ներկայացումը պայմանավորված է նրանով, որ 2006թ. դեկտեմբերի 19-ին Թողարկողի և «Արթին Էնթրփրայս» ՍՊԸ-ի միջև կնքվել է Թողարկողի հիմնական միջոցների գնահատման և գույքագրման ծառայությունների մատուցման մասին պայմանագիր, ըստ որի իրականացվել է Թողարկողի հիմնական միջոցների արժեքի վերագնահատում 01.01.2007թ. դրությամբ: Ինչ վերաբերվում է Շենքեր խմբի կուտակված մաշվածությանը, ապա այն ներառում է միայն Լեռնա-մետալուրգիական ինստիտուտի վարձակալված շենքի մաշվածությունը, մասնավորապես՝

	Սկզբնական արժեք	Հաշվեկշռային արժեք
Լեռնամետալուրգիայի ինստիտուտի վարձ. շենք	***71,213.9 հազ. ՀՀ դրամ***	***48,003.4 հազ. ՀՀ դրամ***

Թողարկողի՝ արտադրության մեջ ներգրավված հիմնական գույքը տեղակայված է Ալավերդի քաղաքում և նրա մերձակայքում: Արտադրության մեջ ներգրավված հիմնական գույքը Թողարկողին թույլ է տալիս բավարար կերպով իրականացնել իր արտադրական կարողությունները: Թողարկողի շենքերի, շինությունների և տրանսպորտային միջոցների մանրամասն նկարագիրը ներկայացված է Հավելված 1-ում:

ՀՀ, ք. Երևան, Խանջյան 19 հասցեում գտնվող «Լեռնամետալուրգիական ինստիտուտ» ՓԲԸ-ի հին մասնաշենքի նկուղի (320.20 քմ), 1-ին (220.9 քմ) և 3-րդ (263 քմ) հարկերի տարածքները 18.02.2002թ. թիվ 020218/1 ոչ բնակելի տարածքի վարձակալության մասին պայմանագրով հանձնվել է Թողարկողին՝ մինչև 01.07.2002թ. 723,934.5 ՀՀ դրամ ամսական վարձավճարով (ներառյալ ԱԱՀ), իսկ 01.07.2002թ. 876,597.5 ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ) ամսական վարձավճարով (վարձավճարի չափի փոփոխությունը պայմանավորված է եղել այն հանգամանքով, որ նկուղային հարկի տարածքի վարձավճարի հաշվարկումը կատարվել է 01.07.2002թ.): Կողմերի համաձայնությամբ վարձավճարի չափը կարող է վերանայվել: Վարձավճարը յուրաքանչյուր ամսվա համար վճարվում է մինչև հաջորդող ամսվա 10-ը: Վարձավճարի վճարումն ուշացնելու դեպքում յուրաքանչյուր օրվա համար սահմանվում է տույժ՝ վճարվելիք գումարի 0.2%-ի չափով: Պայմանագիրը գործում է մինչև 2015 թվականի դեկտեմբերի 31-ը:

900,000 ԱՄՆ դոլարի չափով վարկ ստանալու համար 01.02.2007թ. «Անելիք բանկ» ՍՊԸ-ի հետ կնքված թիվ ՄՆ0748-1, ՄՆ0748-2, ՄՆ0748-3, ՄՆ0748-4, ՄՆ0748-5, ՄՆ0748-6, ՄՆ0748-7, ՄՆ0748-8 և ՄՆ0748-9 գրավի պայմանագրերով Թողարկողը գրավադրել է իրեն սեփականության իրավունքով պատկանող հետևյալ գույքը.

N	Գույքի նկարագիրը	Ընդհանուր մակերեսը, քմ	Հողատա-բածքը, հա	Գնահատված արժեք, մլն դրամ
1.	ք. Ալավերդի, Կիրովի 4 հասցեում գտնվող «Մանեսի գունավոր մետաղների գործարանը» (27.05.04թ. թիվ 1324388 ՍՎ)	58,283	33.0	344.5
2.	ք. Ալավերդի, Մանես ԳՄԳ, արտադրամաս և տնակ քիմ. մաքրման տարածքում (17.02.05թ. թիվ 1197577 ՍՎ)	441	0.1	2.5
3.	ք. Ալավերդի, Կախոյան 8, պղնձարջասպի թիվ 6 մասնաշենք և թիվ 5 կենցաղային շենք (14.08.03թ. թիվ 182079 ՍՎ)	2,529.3, *որից Կենցաղի շենք* 1018.3	0.2	16.0
4.	Օձուն գյուղի պիոներ ճամբար (27.05.04թ. թիվ 1324392 ՍՎ)	3,479	8.6	25.0
5.	ք. Ալավերդի Թբիլիսյան խճուղի մարզադաշտ (27.05.04թ. թիվ 1324389 ՍՎ)	191. 7	1.2	6.0
6.	ք. Ալավերդի, Կոշաբերդ փողոցում պահեստ (08.08.05թ. թիվ 1265063 ՍՎ)	3,477.8	0.6	20.0
7.	ք. Ալավերդի, Թբիլիսյան խճուղի, ճաշարան և բիսեթկա (26.05.02թ. թիվ 2275177 ՍՎ)	651.5	0.112	8.5
8.	Հաղպատի համայնք, Թբիլիսյան խճուղի ճաշարան և պրոֆիլակտորիա (27.05.04թ. թիվ 1324391 ՍՎ)	3,078	4.695	5.0
9.	ք. Ալավերդի, Մարքսի փողոց, Սան.Սարահարթ ճոպանուղի (24.05.2002թ. թիվ 2275178 ՍՎ)	760	0.2	26.0
	Ընդամենը	***72,891.3***	***48.7***	***453.5***

Նշված պայմանագրերով գրավատուին (Թողարկողին) իրավունք է վերապահվում՝

- տիրապետել և օգտագործել իր մոտ թողնված գրավադրված գույքը դրա նշանակությանը համապատասխան, այդ գույքից ստանալ պտուղներ և եկամուտներ, կառուցապատել այն,
- գրավի գույքի իրացումից ստացված հասույթը գրավառուի պայմանագրով նախատեսված պահանջի գումարին գերազանցելու դեպքում ստանալ դրանց տարբերության գումարը:

Գրավատուն (Թողարկողը) պարտավորվում է.

- ձեռնարկել բոլոր միջոցները գրավի գույքի պատշաճ պահպանման և նպատակային օգտագործման համար,
- գրավի գույքը կորցնելու, վնասվելու, ոչնչացվելու կամ փոփոխելու դեպքում ողջամիտ ժամկետում վերականգնել այն կամ փոխարինել համարժեք այլ գույքով,
- գրավի գույքը առանց գրավառուի թույլտվության հաջորդող գրավ չդնել,
- առանց գրավառուի գրավոր համաձայնության գրավի գույքը չօտարել, չհանձնել վարձակալության, ենթավարձակալության, անհատույց օգտագործման և չկառուցապատել կամ չտնօրինել այլ կերպ,
- գրավի գույքի նկատմամբ որևէ փոփոխություն կատարելու դեպքում նախապես հայտնել գրավառուին:

3.15. Թողարկողը զբաղվում է բնական ռեսուրսների արդյունահանմամբ և վերամշակմամբ: Բնական ռեսուրսների առանձին տեսակների վերաբերյալ տեղեկությունները ներկայացված են ստորև բերվող աղյուսակում.

	Բնական ռեսուրսի տեսակը	Գտնվելու վայրը	Պաշարների կանխատես-վող չափը	Օգտագործ-ման իրավունքի ժամկետները	Արդյունահանման և վերամշակման պայմանների համառոտ նկարագիրը
1.	Պղինձ	Լոռու մարզ, ք. Ալավերդի	62,000 տոննա պղինձ	25 տարի՝ 06.08.2001-06.08.2026	Պղնձի պարունակությամբ հանքաքարն արդյունահան-վում է, Ալավերդու գործարանում կատարվում է պղնձի խտանյութի, այնուհետև՝ անզուտ պղնձի վերամշակում:
2.	Պղինձ-մոլիբդեն	Լոռու մարզ, գ. Թեղուտ	1,600,000 տոննա պղինձ, 98,000 տոննա մոլիբդեն	25 տարի՝ 08.02.2001-08.02.2026	Թեղուտի պղնձա-մոլիբդենային հանքավայրը դեռևս չի շահագործվում, ավարտվել են նախագծա-յին աշխատանքները, իրականացվում են որոշ նախապատրաստական աշխատանքներ, բանակցություններ են վարվում շահագրգիռ կազմակերպությունների հետ՝ արտաքին ֆինանսավորում ներ-գրավելու նպատակով:
3.	Փիրուզ	Լոռու մարզ, գ. Թեղուտ	25,881 կգ	25 տարի՝ 19.07.2000-19.07.2025	Թեղուտի փիրուզի հանքավայրը դեռևս չի շահագործվում:

4. Թողարկողի կառավարման մարմինները և կառավարմանը մասնակցող անձինք

4.1. Թողարկողի կանոնադրության համաձայն՝ Թողարկողի կառավարման մարմիններն են Թողարկողի բաժնետերերի ընդհանուր ժողովը, գործադիր վարչությունը և տնօրենը:

Թողարկողի բաժնետերերի ընդհանուր ժողովը

1. Թողարկողի բաժնետերերի ընդհանուր ժողովը Թողարկողի կառավարման բարձրագույն մարմին է:
2. Թողարկողը պարտավոր է ամեն տարի գումարել բաժնետերերի ընդհանուր ժողով (Թողարկողի բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողով):
3. Թողարկողի բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովը գումարվում է հերթական ֆինանսական տարվա ավարտից երկու ամիս հետո՝ 90 (իննսուն) օրվա ընթացքում:

Թողարկողի բաժնետերերի ընդհանուր ժողովի իրավասությունները

1. Թողարկողի բաժնետերերի ընդհանուր ժողովի իրավասությանն են պատկանում.
   ա) Թողարկողի Կանոնադրության մեջ փոփոխությունների և լրացումների կատարումը, Թողարկողի Կանոնադրության (նոր խմբագրմամբ) հաստատումը,
   բ) Թողարկողի վերակազմակերպման մասին որոշման ընդունումը,
   գ) Թողարկողի լուծարումը, լուծարային հանձնաժողովի նշանակումը, միջանկյալ և ամփոփիչ լուծարային հաշվեկշիռների հաստատումը,
   դ) բաժնետոմսերի անվանական արժեքի ավելացման կամ լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխման ճանապարհով Թողարկողի կանոնադրական կապիտալի չափի մեծացումը,
   ե) բաժնետոմսերի անվանական արժեքի նվազեցման, բաժնետոմսերի ընդհանուր քանակի կրճատման նպատակով Թողարկողի տեղաբաշխված բաժնետոմսերի ձեռք բերման, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ և Թողարկողի Կանոնադրությամբ սահմանված կարգով Թողարկողի կողմից ձեռք բերված կամ հետ գնված բաժնետոմսերի մարման ճանապարհով Թողարկողի կանոնադրական կապիտալի չափի նվազեցումը,
   զ) Թողարկողի վարչության նախագահի ընտրությունը, տնօրենի նշանակումն ու գործադիր վարչության կազմավորումը, ինչպես նաև նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը,
   է) Թողարկողի վերստուգող հանձնաժողովի անդամների (վերստուգողի) նշանակումն ու նրանց (նրա) լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը: Թողարկողի վերստուգող հանձնաժողովի անդամների (վերստուգողի) ընտրությունը կատարվում է՝ բացառապես Թողարկողի բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովներում: Թողարկողի վերստուգող հանձնաժողովի անդամների (վերստուգողի) ընտրության հարցն Թողարկողի բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովներում կարող է քննարկվել, եթե Թողարկողի բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովը որոշում է ընդունել Թողարկողի վերստուգող հանձնաժողովի (վերստուգողի) կամ նրա առանձին անդամների լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին,
   ը) Թողարկողի աուդիտն իրականացնող անձի հաստատումը,
   թ) Թողարկողի տարեկան հաշվետվությունների, հաշվապահական հաշվեկշիռների, հաշիվների հաստատումը,
   ժ) Թողարկողի շահույթների և վնասների բաշխումը, տարեկան շահաբաժինների չափի հաստատումը, ինչպես նաև Թողարկողի մասնաճյուղերի և ներկայացուցչությունների աշխատանքի տարեկան արդյունքների հաստատումը,
   ժա) ընդհանուր ժողովի վարման կարգի սահմանումը և հաշվիչ հանձնաժողովի կազմավորումը,
   ժբ) Թողարկողի կողմից բաժնետերերին տեղեկությունների և նյութերի հաղորդման ձևի որոշումը, ներառյալ՝ զանգվածային լրատվության միջոցի ընտրությունը, եթե հաղորդումը պետք է իրականացվի հարպարակային հայտարարության ձևով,
   ժգ) բաժնետոմսերի անվանական արժեքի նվազեցումը (տարանջատումը) և ավելացումը (համախմբումը),
   ժդ) գործարքների կնքումը՝ Թողարկողի գործողություններում գործարք կնքելու շահագրգռվածության առկայության դեպքում,

ժե) ՀՀ օրենսդրությամբ և Թողարկողի Կանոնադրությամբ նախատեսված դեպքերում Թողարկողի գույքի օտարման և ձեռք բերման հետ կապված խոշոր գործարքների կնքումը.
ժզ) ՀՀ օրենսդրությամբ և Թողարկողի Կանոնադրությամբ նախատեսված դեպքերում Թողարկողի կողմից տեղաբաշխված բաժնետոմսերի ձեռք բերումը և հետգնումը,
ժէ) Թողարկողի ղեկավար պաշտոնատար անձանց աշխատանքի վարձատրության պայմանների որոշումը,
ժը) Թողարկողի կողմից դուստր և կախյալ ընկերություններ ստեղծելը, դուստ և կախյալ ընկերություններին մասնակցելը,
ժթ) Թողարկողի մասնաճյուղեր, ներկայացուցչություններ և հիմնարկներ ստեղծելն ու լուծարելը,
ի) ՀՀ օրենսդրությամբ և Թողարկողի Կանոնադրությամբ նախատեսված այլ որոշումներ ընդունելը, մասնավորապես՝ համաձայն Թողարկողի կանոնադրության 7.13 կետի՝ պարտատոմսերի, մուրհակների և այլ արժեթղթերի տեղաբաշխումն իրականացվում է Թողարկողի բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ:

2. ՀՀ օրենսդրությամբ և Թողարկողի Կանոնադրությամբ Թողարկողի բաժնետերերի ընդհանուր ժողովի բացառիկ իրավասությանը վերապահված հարցերը չեն կարող նրա կողմից փոխանցվել Թողարկողի գործադիր մարմինների իրավասությանը:

<u>Թողարկողի բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշումները</u>

1. Թողարկողի բաժնետերերի ընդհանուր ժողովում ձայնի իրավունքից օգտվում են.
   ա) Թողարկողի սովորական բաժնետոմսերի սեփականատեր հանդիսացող բաժնետերերը,
   բ) Թողարկողի արտոնյալ բաժնետոմսերի սեփականատեր հանդիսացող բաժնետերերը՝ ՀՀ օրենսդրությամբ և Թողարկողի Կանոնադրությամբ նախատեսված դեպքերում:
2. Ձայնի իրավունք տվող բաժնետոմս է համարվում այն սովորական կամ արտոնյալ բաժնետոմսը, որն իր սեփականատիրոջը տալիս է քննարկվող հարցի քվեարկությանը վճռորոշ ձայնով մասնակցելու իրավունք:
3. Թողարկողի բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշումներն ընդունվում են՝ ժողովին մասնակցող ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների պարզ մեծամասնությամբ:
4. Թողարկողի Կանոնադրության 16.1. կետի ա), բ), գ), դ), ժդ) ենթակետերով և 23.2 կետով նախատեսված հարցերի վերաբերյալ որոշումներն Թողարկողի բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից ընդունվում են ժողովին մասնակցող ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների երեք քառորդով:
5. Թողարկողի բաժնետերերի ընդհանուր ժողովի վարման կարգի մասին որոշումներ ընդունելու կարգը սահմանվում է Թողարկողի Կանոնոդրությամբ և Թողարկողի բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից հաստատված ներքին փաստաթղթերով:
6. Թողարկողի բաժնետերերի ընդհանուր ժողովն իրավունք չունի փոփոխել ժողովի օրակարգը, որոշումներ ընդունել օրակարգում չընդգրկված հարցերի վերաբերյալ:
7. Թողարկողի բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից ընդունված որոշումների մասին տեղեկությունները, ինչպես նաև քվեարկության արդյունքները պետք է հաղորդվեն Թողարկողի բաժնետերերին՝ ՀՀ օրենսդրությամբ և Թողարկողի Կանոնադրությամբ սահմանված կարգով, այդ որոշումներն ընդունելուց հետո 45 օրվա ընթացքում:
8. Թողարկողի բաժնետերն իրավունք ունի դատական կարգով բողոքարկել Թողարկողի բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից ՀՀ օրենսդրության պահանջների խախտմամբ ընդունած որոշումը, եթե նա չի մասնակցել ժողովին կամ այդ որոշմանը դեմ է քվեարկել և այդ որոշմամբ խախտվել են նրա իրավունքներն ու օրինական շահերը: Դատարանն իրավունք ունի ուժի մեջ թողնել Թողարկողի բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշումը, եթե բաժնետիրոջ քվեարկությանը մասնակցելը չէր կարող ազդել քվեարկության արդյունքների վրա, և (կամ) թույլ տված խախտումներն էական չէին, և որոշումը վնաս չէր պատճառել բաժնետիրոջը:
9. Թողարկողի բաժնետերերը, ինչպես նաև Թողարկողի բաժնետերերի ընդհանուր ժողովում խորհրդակցական ձայնով մասնակցելու իրավունք ունեցող ՀՀ օրենսդրությամբ և Թողարկողի Կանոնադրությամբ նախատեսված անձինք գրավոր ծանուցվում են Թողարկողի բաժնետերերի ընդհանուր ժողով գումարելու մասին:
   Թողարկողի բաժնետերերի ընդհանուր ժողովում խորհրդակցական ձայնի իրավունքով կարող են մասնակցել Թողարկողի բաժնետեր չհանդիսացող տնօրենը, նրա տեղակալը

(տեղակալները), գործադիր վարչության անդամները, ինչպես նաև Թողարկողի վերստուգող հանձնաժողովի անդամները (վերստուգողը) և ֆինանսատնտեսական գործունեության աուդիտն իրականացրած անձը:

10. Թողարկողի բաժնետերերի ընդհանուր ժողով գումարելու մասին ծանուցագիրը պետք է բովանդակի.
    ա) Թողարկողի անվանումը և գտնվելու վայրը,
    բ) Թողարկողի բաժնետերերի ընդհանուր ժողով գումարելու ամսաթիվը (օրը), ժամը և տեղը,
    գ) Թողարկողի բաժնետերերի ընդհանուր ժողովի օրակարգը,
    դ) Թողարկողի բաժնետերերի ընդհանուր ժողովում քննարկվելիք հարցերին վերաբերող տեղեկություններին և նյութերին բաժնետերերի ծանոթացման կարգը (այդ տեղեկություններն ու նյութերը պետք է Թողարկողի բաժնետերերին ներկայացվեն Թողարկողի բաժնետերերի ընդհանուր ժողովը նախապատրաստելու ընթացքում):
11. Թողարկողի բաժնետերերի ընդհանուր ժողովը նախապատրաստելու ընթացքում բաժնետերերին ներկայացվելիք տեղեկություններն ու նյութերն են.
    ա) Թողարկողի տարեկան հաշվետվությունը,
    բ) Թողարկողի տարեկան ֆինանսատնտեսական գործունեության արդյունքների վերաբերյալ Թողարկողի վերստուգող հանձնաժողովի (վերստուգողի) և Թողարկողի աուդիտն իրականացնող անձի եզրակացությունը,
    գ) Թողարկողի գործադիր վարչության, վերստուգող հանձնաժողովի անդամների (վերստուգողի) թեկնածուների մասին տեղեկությունները,
    դ) Թողարկողի Կանոնադրության փոփոխությունների և լրացումների նախագիծը կամ Թողարկողի Կանոնադրության նախագիծը՝ նոր խմբագրմամբ,
    ե) ՀՀ օրենսդրությամբ նախատեսված այլ տեղեկություններ:

<u>Թողարկողի բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովի</u>
<u>օրակարգի վերաբերյալ առաջարկությունները</u>

1. Թողարկողի բաժնետերը (բաժնետերերը), որը (որոնք) ձայնի իրավունք ունեցող բաժնետերերի առնվազն 2 (երկու) տոկոսի սեփականատերն է (են), Թողարկողի ֆինանսական տարվա ավարտից հետո 30 (երեսուն) օրվա ընթացքում իրավունք ունի (ունեն) երկուսից ոչ ավելի առաջարկություններ ներկայացնել Թողարկողի բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովի օրակարգի վերաբերյալ:
2. Թողարկողի բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովի օրակարգի վերաբերյալ առաջարկությունները ներկայացվում են գրավոր՝ նշելով առաջարկության հիմքերը, հարցն առաջարկող բաժնետիրոջ (բաժնետերերի) անունը և ազգանունը (անվանումը), նրան (նրանց) պատկանող բաժնետոմսերի քանակն՝ ըստ բաժնետոմսերի տեսակների և ձևերի:
3. Թողարկողի բաժնետերերի ընդհանուր ժողովի նախապատրաստման ընթացքում Թողարկողի վարչության նախագահը սահմանում է.
    ա) Թողարկողի բաժնետերերի ընդհանուր ժողով գումարելու ամսաթիվը (օրը), տեղը և ժամանակը,
    բ) Թողարկողի բաժնետերերի ընդհանուր ժողովի օրակարգը.
    գ) Թողարկողի բաժնետերերի ընդհանուր ժողով գումարելու մասին բաժնետերերին ծանուցելու կարգը.
    դ) Թողարկողի բաժնետերերի ընդհանուր ժողովի նախապատրաստման ընթացքում բաժնետերերին ներկայացվելիք տեղեկությունների և նյութերի ցանկը:

<u>Թողարկողի բաժնետերերի ընդհանուր ժողովի իրավազորությունը (քվորումը)</u>

1. Թողարկողի բաժնետերերի ընդհանուր ժողովն իրավազոր է (ունի քվորում), եթե ընդհանուր ժողովի մասնակիցների գրանցման ավարտի պահին գրանցվել են Թողարկողի ձայնի իրավունք տվող տեղաբաշխված բաժնետոմսերի 50-ից (հիսունից) ավելի տոկոսին համատեղ տիրապետող բաժնետերերը (նրանց ներկայացուցիչները): Եթե Թողարկողի բաժնետերերի ընդհանուր ժողովը տևում է 1 (մեկ) օրից ավելի, ապա յուրաքանչյուր օրվա համար կազմվում է ժողովի մասնակիցների գրանցման առանձին ցուցակ:
2. Քվորումի բացակայության դեպքում հայտարարվում է Թողարկողի բաժնետերերի ընդհանուր ժողով գումարելու ամսաթիվը: Քվորումի բացակայության պատճառով նոր ժողով գումարելու դեպքում օրակարգի փոփոխություն չի թույլատրվում:
3. Թողարկողի բաժնետերերի չկայացած ընդհանուր ժողովի փոխարեն գումարվող նոր ժողովն իրավազոր է (ունի քվորում), եթե ընդհանուր ժողովի մասնակիցների գրանցման ավարտի

պահին գրանցվել են Թողարկողի ձայնի իրավունք տվող տեղաբաշխված բաժնետոմսերի 30-ից (երեսունից) ավելի տոկոսին համատեղ տիրապետող բաժնետերերը (նրանց ներկայացուցիչները):

Քվեարկությունն Թողարկողի բաժնետերերի ընդհանուր ժողովում

1. Քվեարկությունը Թողարկողի բաժնետերերի ընդհանուր ժողովում իրականացվում է՝ «Թողարկողի մեկ ձայնի իրավունք տվող բաժնետոմս՝ մեկ ձայն» սկզբունքով:
2. «Թողարկողի մեկ ձայնի իրավունք տվող բաժնետոմս՝ մեկ ձայն» սկզբունքը կիրառելիս արտոնյալ բաժնետոմսերի տված ձայների քանակի հաշվարկն իրականացվում է Թողարկողի Կանոնադրության 17.1.; 17.2. և 17.3. կետերով սահմանված կարգով:
3. Քվեարկության արդյունքներով կազմվում է արձանագրություն, որը ստորագրում է հաշվիչ հանձնաժողովի նախագահը կամ հաշվիչ հանձնաժողովի լիազորությունն իրականացնող անձը:
4. Քվեարկության արդյունքների մասին արձանագրությունը կցվում է Թողարկողի բաժնետերերի ընդհանուր ժողովի արձանագրությանը:
5. Քվեարկության արդյունքները հրապարակվում են Թողարկողի բաժնետերերի ընդհանուր ժողովում:

Թողարկողի բաժնետերերի ընդհանուր ժողովի արձանագրությունը

1. Թողարկողի բաժնետերերի ընդհանուր ժողովի արձանագրությունը կազմվում է Թողարկողի բաժնետերերի ընդհանուր ժողովի ավարտից հետո՝ 15 (տասնհինգ) օրվա ընթացքում, երկու օրինակով, որոնք ստորագրում են ժողովի նախագահը և քարտուղարը:
2. Թողարկողի բաժնետերերի ընդհանուր ժողովի արձանագրության մեջ նշվում են.
   ա) Թողարկողի բաժնետերերի ընդհանուր ժողով գումարելու տեղը և ժամկետը,
   բ) Թողարկողի ձայնի իրավունք տվող տեղաբաշխված բաժնետոմսերի ձայների գումարային քանակը,
   գ) ժողովի նախագահը (նախագահությունը), քարտուղարը (քարտուղարությունը) և ժողովի օրակարգը,
   դ) արձանագրությունը պետք է բովանդակի ժողովում կայացած ելույթների հիմնական դրույթները, քվեարկության դրված հարցերը, այդ հարցերի վերաբերյալ քվեարկության արդյունքները, ժողովի կողմից ընդունված որոշումները.
3. Թողարկողի բաժնետերերն իրավունք ունեն ծանոթանալ Թողարկողի բաժնետերերի ընդհանուր ժողովի արձանագրություններին:

Թողարկողի բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովը

1. Թողարկողի բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովները գումարվում են Թողարկողի վարչության նախագահի կողմից՝ իր նախաձեռնությամբ, ինչպես նաև Թողարկողի վերստուգող հանձնաժողովի (վերստուգողի), Թողարկողի աուդիտն իրականացնող անձի կամ պահանջը ներկայացնելու պահին Թողարկողի առնվազն 10 (տաս) տոկոս ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի սեփականատեր հանդիսացող բաժնետիրոջ (բաժնետերերի) պահանջով:
2. Թողարկողի բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովը գումարվում է՝ արտահերթ ընդհանուր ժողովը գումարելու մասին պահանջ ներկայացվելու պահից 45 (քառասունհինգ) օրվա ընթացքում:
3. Թողարկողի բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովը գումարելու մասին ներկայացված պահանջում պետք է ձևակերպված լինեն այն հարցերը, որոնք առաջարկվում են Թողարկողի բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովի օրակարգում և դրանց քննարկման անհրաժեշտության հիմանվորումը:
4. Թողարկողի առնվազն 10 (տաս) տոկոս ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի սեփականատեր հանդիսացող բաժնետիրոջ (բաժնետերերերի) կողմից Թողարկողի բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողով գումարելու վերաբերյալ ներկայացվող պահանջը պետք է բովանդակի պահանջ ներկայացնող բաժնետիրոջ (բաժնետերերի) անունը և ազգանունը (անվանումը) և նրան (նրանց) պատկանող բաժնետոմսերի քանակը՝ ըստ բաժնետոմսերի տեսակների և ձևերի:
5. Թողարկողի բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողով գումարելու պահանջը պետք է ստորագրված լինի ժողովի գումարումը պահանջող անձի (անձանց) կողմից:

6. Թողարկողի բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողով գումարելու մասին որոշումը պետք է կայացվի Թողարկողի բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողով գումարելու մասին պահանջը ներկայացնելու պահից 10 (տաս) օրվա ընթացքում:
7. Թողարկողի վարչության նախագահն իրավունք չունի մերժել Թողարկողի բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողով գումարելու պահանջը:
8. Եթե Թողարկողի վարչության նախագահը Թողարկողի Կանոնադրության 22.6. կետում սահմանված ժամկետում Թողարկողի բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողով գումարելու մասին որոշում չի կայացնում, ապա ժողովը կարող է գումարվել արտահերթ ժողովը գումարելու պահանջ ներկայացրած անձանց կողմից:

Թողարկողի գործադիր մարմինը: Թողարկողի տնօրենը

1. Թողարկողի ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է Թողարկողի գործադիր մարմինը (տնօրենը):
2. Թողարկողի մոտ իր կանոնադրությամբ սահմանված կարգով ձևավորվում է գործադիր վարչություն, որը՝
   ա) հաստատում և փոփոխում է Թողարկողի ներքին կառուցվածքը.
   բ) Թողարկողի տնօրենի ներկայացմամբ հաստատում է Թողարկողի վարչության նախագահի հետ նախնական համաձայնեցված Թողարկողի գործունեության (զարգացման) կարճաժամկետ (1-3 ամիս) պլանները (ծրագրերը), հետևում դրանց կատարման ընթացքին և քննարկում դրանց արդյունքները:
3. Թողարկողի վարչության նախագահը.
   ա) Թողարկողի կանոնադրությամբ սահմանված կարգով գումարում է Թողարկողի բաժնետերերի ընդհանուր ժողովը, այդ նպատակով կազմակերպում է Թողարկողի բաժնետերերի ծանուցման և համապատասխան նյութերն ու փաստաթղթերի նախագծերը նրանց ուղարկելու գործընթացը.
   բ) նախագահում է Թողարկողի բաժնետերերի ընդհանուր ժողովի նիստերին, կազմակերպում է նիստերի արձանագրումը.
   գ) Թողարկողի անունից աշխատանքային պայմանագիր է կնքում Թողարկողի տնօրենի հետ.
   դ) Թողարկողի բաժնետերերի ընդհանուր ժողովի անունից պայմանագիր է կնքում Թողարկողի գործունեության աուդիտն իրականացնող անձի հետ.
   ե) սահմանված կարգով աշխատանքի է ընդունում, աշխատանքում տեղափոխում և աշխատանքից ազատում (հեռացնում) վարչության նախագահի աշխատակազմի ղեկավարին ու աշխատակազմի անդամներին, նրանց հանդեպ հանդես է գալիս որպես գործատու և կնքում է համապատասխան աշխատանքային պայմանագրեր, նրանց նկատմամբ կիրառում է խրախուսման և կարգապահական պատասխանատվության միջոցներ.
   զ) Թողարկողի տնօրենի ներկայացմամբ նշանակում է տնօրենի տեղակալներին, ինչպես նաև հաստատում է Թողարկողի կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներին, նրանց հետ կնքում է համապատասխան աշխատանքային պայմանագրեր.
   է) Թողարկողը (Թողարկողի շահերը) ներկայացնում է Հայաստանի Հանրապետության և արտասահմանյան դատական մարմիններում, այդ նպատակով տալիս է լիազորագրեր.
   ը) Թողարկողի անունից կնքում և կատարում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված խոշոր գործարքները.
   թ) սույն կանոնադրությամբ սահմանված կարգով հրավիրում և վարում է Թողարկողի գործադիր վարչության նիստերը, ստորագրում է գործադիր վարչության որոշումներն ու նիստերի արձանագրությունները:
4. Թողարկողի գործադիր մարմնի իրավասությանն են պատկանում Թողարկողի կառավարման և ընթացիկ գործերի վարման այն բոլոր հարցերը, որոնք Թողարկողի բաժնետերերի ընդհանուր ժողովի բացառիկ իրավասությանը չեն պատկանում:
5. Թողարկողի գործադիր մարմինը կազմակերպում է Թողարկողի բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշումների կատարումը:
6. Թողարկողի տնօրենը.
   ա) առանց լիազորագրի գործում է Թողարկողի անունից.
   բ) Թողարկողը (Թողարկողի շահերը) ներկայացնում է Հայաստանի Հանրապետությունում և արտասահմանում, բացառությամբ դատական մարմիններում ներկայացուցչությունից.
   գ) Թողարկողի անունից կնքում և կատարում է գործարքներ, բացառությամբ այն գործարքների, որոնց կնքման համար հարկավոր է Թողարկողի վարչության նախագահի

նախնական համաձայնությունը: Թողարկողի վարչության նախագահի նախնական համաձայնությունը պահանջվում է ներքոհիշյալ գործարքների կնքման ժամանակ՝

1) մուրհակների հանձնման, ձեռք բերման և ակցեպտավորման.
2) պարտատոմսերի, բաժնետոմսերի ու այլ արժեթղթերի, ինչպես նաև կանոնադրական կապիտալում բաժնեմասի ձեռք բերման.
3) երաշխավորության հանձնման.
4) գումարային (տոկոսների հաշվուամամբ) փոխառության (վարկի) ներգրավման և/կամ փոխառության տրամադրման, որը գերազանցում է գործարքի կնքման պահին գործող օրենսդրությամբ սահմանված նվազագույն աշխատավարձի 50000-ապատիկը.
5) պահանջի իրավունքի զիջման և/կամ Թողարկողի կնքած պայմանագրով պարտքի փոխանցման, եթե տվյալ պայմանագրով պարտավորության չափը գերազանցում է գործարքի կնքման պահին գործող օրենսդրությամբ սահմանված նվազագույն աշխատավարձի 50000-ապատիկը.

դ) տալիս է Թողարկողի անունից ներկայացուցչության իրավունքի լիազորագրեր, այդ թվում վերալիազորման իրավունքով, բացառությամբ այն լիազորագրերի, որոնք կապված են դատական մարմիններում Թողարկողի շահերը ներկայացնելու հետ.

ե) ապահովում է Թողարկողի ընթացիկ և հեռանկարային ծրագրերի իրականացումը.

գ) ապահովում է Թողարկողի բաժնետերերի ընդհանուր ժողովի քննարկմանը ներկայացված հարցերով անհրաժեշտ նյութերի և առաջարկությունների նախապատրաստումը, ինչպես նաև ժողովի ընդունած որոշումների հետագա իրականացումը.

է) տնօրինում է Թողարկողի գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները.

ը) բանկերում բացում է Թողարկողի հաշվարկային (այդ թվում՝ տարադրամային) և այլ հաշիվներ.

թ) իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս է կատարման համար պարտադիր ցուցումներ, վերահսկում է դրանց կատարումը.

ժ) սահմանված կարգով աշխատանքի է ընդունում, աշխատանքում տեղափոխում և աշխատանքից ազատում (հեռացնում) Թողարկողի աշխատակիցներին, նրանց հանդեպ հանդես է գալիս որպես գործատու և կնքում է համապատասխան աշխատանքային պայմանագրեր, նրանց նկատմամբ կիրառում է խրախուսման և կարգապահական պատասխանատվության միջոցներ, բացառությամբ այն աշխատակիցների, որոնց հետ պայմանագրերը սույն կանոնադրությամբ սահմանված կարգով կնքում է Թողարկողի նախագահը.

ժա) իրականացնում է Թողարկողի և իր միջև կնքված պայմանագրով սահմանված այլ իրավունքներ և պարտականություններ:

7. Թողարկողի գործադիր մարմինների կազմավորումը, նրանց լիազորությունների վաղակետ դադարեցումը կատարվում է Թողարկողի բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ:
8. Թողարկողի վարչության նախագահի, տնօրենի և գործադիր վարչության անդամների իրավունքները և պարտականությունները սահմանվում են ՀՀ օրենսդրությամբ, սույն Կանոնադրությամբ, Թողարկողի հետ նրանց կնքած պայմանագրով և Թողարկողի գործունեության ներքին փաստաթղթերով:
9. Թողարկողի անունից պայմանագիրը ստորագրվում է Թողարկողի բաժնետերերի ընդհանուր ժողովի համաձայնությամբ:
10. Թողարկողի տնօրենը և գործադիր վարչության անդամները կարող են այլ կազմակերպություններում վճարովի պաշտոններ զբաղեցնել՝ միայն Թողարկողի բաժնետերերի ընդհանուր ժողովի համաձայնությամբ:
11. Թողարկողի բաժնետերերի ընդհանուր ժողովն իրավունք ունի ցանկացած ժամանակ լուծել տնօրենի և գործադիր վարչության անդամների հետ կնքված պայամանագրերը:

<u>Թողարկողի գործադիր վարչությունը</u>

1. Թողարկողի գործադիր վարչության քանակական կազմը և անդամներին հաստատում է Թողարկողի բաժնետերերի ընդհանուր Ժողովը՝ Թողարկողի վարչության Նախագահի ներկայացմամբ:
2. Թողարկողի գործադիր վարչությունը գործում է գործադիր վարչության գործունեության կանոնակարգի հիման վրա, որը հաստատում է Թողարկողի բաժնետերերի ընդհանուր ժողովը:
3. Թողարկողի գործադիր վարչության նիստերն արձանագրվում են: Թողարկողի գործադիր վարչության նիստերի արձանագրությունները տրամադրվում են վերստուգող հանձնաժողովին (վերստուգողին), Թողարկողի աուդիտն իրականացնող անձին՝ նրանց պահանջով:

4. Թողարկողի գործադիր վարչության նիստերը հրավիրում և վարում է Թողարկողի վարչության նախագահը, որը ստորագրում է գործադիր վարչության որոշումները և նիստի արձանագրությունները:

Թողարկողի տնօրենի, գործադիր վարչության անդամների պատասխանատվությունը

1. Թողարկողի վարչության նախագահը, տնօրենը, Թողարկողի գործադիր վարչության անդամներն իրենց լիազորությունների ժամկետում պետք է գործեն բարեխիղճ և խելամիտ՝ ելնելով Թողարկողի շահերից:
2. Թողարկողի վարչության նախագահը, տնօրենը, Թողարկողի գործադիր վարչության անդամներն ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով պատասխանատվություն են կրում իրենց գործողությունների (անգործության) հետևանքով Թողարկողին պատճառած վնասների համար: Պատասխանատվությունից ազատվում են Թողարկողի գործադիր վարչության այն անդամները, ովքեր չեն մասնակցել Թողարկողին վնասներ պատճառած որոշման ընդունմանը:
3. Թողարկողի գործադիր վարչության անդամի հրաժարականը կամ պաշտոնից ազատվելը նրան չի ազատում Թողարկողին պատճառած վնասի համար նախատեսված պատասխանատվությունից:
4. Եթե Թողարկողին վնաս է պատճառվել գործադիր վարչության մի քանի անդամների գոծողությունների հետևանքով, ապա նրանք Թողարկողի առջև համապարտ պատասխանատվություն են կրում:
5. Թողարկողը կամ Թողարկողի այն բաժնետերը (բաժնետերերը), որը (որոնք) համատեղ տնօրինում է (են) Թողարկողի տեղաբաշխված սովորական բաժնետոմսերի մեկ և ավելի տոկոսին, իրավունք ունի (ունեն) Թողարկողի վարչության նախագահի, տնօրենի և Թողարկողի գործադիր վարչության անդամների դեմ դատարանում հայց հարուցել՝ Թողարկողին պատճառված վնասները փոխհատուցելու պահանջով:

Թողարկողի ֆինանսատնտեսական գործունեության վերահսկողությունը

1. Թողարկողի ֆինասատնտեսական գործունեության վերահսկողությունն իրականացնում է վերստուգող հանձնաժողովը (վերստուգողը):
2. Թողարկողի վերստուգող հանձնաժողովի անդամների թվաքանակը սահմանվում է Թողարկողի բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից:
3. Վերստուգող հանձնաժողովի անդամները (վերստուգողը) ընտրվում են Թողարկողի բաժնետերերի ընդհանուր ժողովում՝ երեք տարի ժամանակով:
4. Թողարկողի բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ վերստուգող հանձնաժողովի լիազորությունները կարող են դրվել վերստուգողի վրա:
5. Թողարկողի վերստուգող հանձնաժողովն (վերստուգողն) իրավունք ունի ցանկացած ժամանակ կատարել Թողարկողի ֆինասատնտեսական գործունեության ստուգումներ և ծանոթանալ Թողարկողի գործունեության բոլոր փաստաթղթերին:
6. Թողարկողի վերստուգող հանձնաժողովի (վերստուգողի) պահանջով Թողարկողի տնօրենը և գործադիր վարչության անդամները պարտավոր են տալ անհրաժեշտ պարզաբանումներ (բացատրություններ):
7. Թողարկողի վերստուգող հանձնաժողովը (վերստուգողը) ստուգում է Թողարկողի տարեկան հաշվետվությունները և հաշվապահական հաշվեկշիռը, դրանց վերաբերյալ տալիս է եզրակացություն:
8. Թողարկողի բաժնետերերի ընդհանուր ժողովն իրավունք չունի հաստատել Թողարկողի տարեկան հաշվետվությունները, հաշվապահական հաշվեկշիռը, եթե չկա Թողարկողի վերստուգող հանձնաժողովի (վերստուգողի) եզրակացությունը:
9. Թողարկողի վերստուգող հանձնաժողովը (վերստուգողը) պարտավոր է պահանջել Թողարկողի բաժնետերերի արտահերթ ժողով, եթե Թողարկողի և (կամ) նրա բաժնետերերի շահերին վտանգ է սպառնում, կամ եթե հայտնաբերել է Թողարկողի պաշտոնատար անձանց կողմից կատարված չարաշահումներ:
10. Տարեկան ֆինանսական հաշվետվության ստուգման և հաստատման համար Թողարկողն իրավունք ունի, իսկ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերում՝ նաև պարտավոր է հրավիրել աուդիտոր:
11. Թողարկողի վերստուգող հանձնաժողովի (վերստուգողի) անդամների և աուդիտորի ծախսերի փոխհատուցման կարգը, ինչպես նաև նրանց վարձատրության չափը սահմանում է Թողարկողի բաժնետերերի ընդհանուր ժողով:

4.2. Ստորև ներկայացված են Թողարկողի կառավարման մարմիններում ընդգրկված անձանց վերաբերյալ տեղեկություններ.

Անուն, Ազգանուն Մասնակցությունը կառավարման մարմիններում	Ծնն. տարեթիվը և քաղաքաց.	Մասնագիտությունը և որակավորումը, բնակության վայրը, անձնագրի սերիան և համարը	Վերջին 3 տարիների ընթացքում զբաղ.պաշտ., այդ թվում համատեղությամբ, ժամանակագրական կարգով՝ նշելով կազմ. անվանումները, որտեղ այդ անձը պաշտոն է զբաղեցրել	Վերջին 3 տարիների ընթացքում Թողարկողի մոտ վարձ. չափը (տարին, գումարը՝ դրամով)	Տվյալ անձին պատկանող Թողարկողի բաժնային արժեթղթերի քանակը	Մասնակցությունը այլ բաժնային արժեթղթերում	Փաստաթղթերը, որոնց համաձայն տվյալ անձը հանդիսանում է Թողարկողի կառավարմանը մասնակցող անձ, նրա գործողությունների լիազորության ժամկետները
Մեջլումյան Վալերի Ջանիբեկի Գործադիր վարչության նախագահ	02.04.1951թ. ՌԴ քաղաքացի	մաթեմատիկոս բնակ. ՀՀ-ում, ք.Երևան, Բայրոնի փող. 3-30 ՌԴ անձնագիր՝ 45 02 386952 ՀՀ-ում ունի կացության հատուկ կարգավիճակ, AF 0203692	2003թ.-ից առ այսօր զբաղեցնում է Թողարկողի Վարչության նախագահի պաշտոնը: Համատեղությամբ աշխատում է՝ ա) «Վալլեքս Էֆ.Էմ. Իստաբլիշմենթ» Ընկերությունում՝ որպես Վարչական խորհրդի անդամ (1993թ.- առ այսօր), բ) «Բեյզ Մեթըլս» ՓԲԸ-ում՝ որպես գործադիր վարչության նախագահ (2002թ.- առ այսօր), գ) «Վալլեքս Գրուպ» ՓԲԸ-ում՝ որպես գործադիր վարչության նախագահ (2005թ.- առ այսօր), դ) «Լեռնամետալուրգիայի ինստիտուտ» ՓԲԸ-ում՝ որպես խորհրդի և գործադիր վարչության նախագահ (2004թ.- առ այսօր), ե) «Վալլեքս Մայնինգ» ՍՊԸ-ում՝ որպես նախագահ (2004թ.- առ այսօր), ե) «Վալլեքս Այթի» ՍՊԸ-ում՝ որպես տնօրեն (2002թ.- առ այսօր), զ) «Թեղուտ» ՓԲԸ-ում՝ որպես խորհրդի և գործադիր վարչության նախագահ (2006թ.- առ այսօր) է) «Մանես ԳՄԳ» ԲԲԸ-ում՝ որպես Խորհրդի նախագահ (2002թ.- առ այսօր)	2004թ.՝ 3,600 հազ. ՀՀ դրամ 2005թ.՝ 3,600 հազ. ՀՀ դրամ 2006թ.՝ 3,600 հազ. ՀՀ դրամ	19.26% (591,340 հատ բաժնետոմս)	1)[2] 9.26%, 2) 5%, 3) 4.34% 4) 0.085% 5) 5%	Թողարկողի 15.04.2003թ. բաժնետերերի ժողովի թիվ 26 արձանագրություն: Գործող աշխատանքային պայմանագիր՝ N 060728, կնքված 28.06.2006թ.: Պայմանագիրը կնքված է անորոշ ժամկետով:

[2] «Մասնակցությունը այլ բաժնային արժեթղթերում» սյունակում պարոն Մեջլումյանի մասնակցությունը ներկայացված է համապատասխանաբար հետևյալ ընկերություններում՝ 1) «Բեյզ Մեթըլս» ՓԲԸ, 2) «Վալեքս Մայնինգ» ՍՊԸ, 3) «Վալեքս Գրուպ» ՓԲԸ և 4) «Վալեքս Այթի» ՍՊԸ, 5) «Վերդ» ՍՊԸ:

Անուն, Ազգանուն Մասնակցություն կառավարման մարմիններում	Ծնն. տարեթիվը և քաղաքաց.	Մասնագիտություն և որակավորումը, բնակության վայրը, անձնագրի սերիան և համարը	Վերջին 3 տարիների ընթացքում զբաղ.պաշտ., այդ թվում համատեղությամբ, ժամանակագրական կարգով՝ նշելով կազմ. անվանումները, որտեղ այդ անձը պաշտոն է զբաղեցրել	Վերջին 3 տարիների ընթացքում Թողարկողի մոտ վարձ. չափը (տարին, գումարը՝ դրամով)	Տվյալ անձին պատկանող Թողարկողի բաժնային արժեթղթերի քանակը	Մասնակցությունը այլ բաժնային արժեթղթերում	Փաստաթղթերը, որոնց համաձայն տվյալ անձը հանդիսանում է Թողարկողի կառավարմանը մասնակցող անձ, նրա գործողությունների լիազորության ժամկետները
Արզումանյան Գագիկ Ռազմիկի Վարչության անդամ Տնօրեն	07.11.1973թ. ՀՀ	Տնտեսագետ *Հաշվառման հասցե* ՀՀ ք.Գավառ Հացառատ թաղ., *Բնակության հասցե* ՀՀ ք.Երևան, Այգեստան 9-րդ փող. 67շ, բն 14 AG 0570000	01.04.2004թ.-ից առ այսօր զբաղեցնում է Թողարկողի տնօրենի պաշտոնը (մինչև 01.04.2004թ. նա զբաղեցրել է գործադիր տնօրենի պաշտոնը) Համատեղությամբ աշխատում է՝ ա) «Բեյզ Սեթըլս» ՓԲԸ-ում՝ որպես գործադիր վարչության փոխնախագահ (2002թ.- առ այսօր), բ) «Վալեքս Գրուպ» ՓԲԸ-ում՝ որպես գործադիր վարչության անդամ, գ) «Լեռնամետալուրգիայի ինստիտուտ» ՓԲԸ-ում՝ որպես գործադիր վարչության փոխնախագահ (2004թ.- առ այսօր), դ) «Թեղուտ» ՓԲԸ-ում՝ որպես խորհրդի և գործադիր վարչության փոխնախագահ (2006թ.- առ այսօր) ե) «Մանեքս ԳՄԳ» ԲԲԸ-ում՝ որպես Խորհրդի անդամ (02.03.2004թ.- առ այսօր),	2004թ.՝ 3,600 հազ. ՀՀ դրամ 2005թ.՝ 3,400 հազ. ՀՀ դրամ 2006թ.՝ 3,500 հազ. ՀՀ դրամ	-	-	Թողարկողի 15.04.2003թ. բաժնետերերի ժողովի թիվ 26 արձանագրություն: Թողարկողի գործադիր վարչության նախագահի 01.04.2004թ. N 083Տ/Կ հրաման: Գործող աշխատանքային պայմանագիր՝ N 060731/1, կնքված 31.07.2006թ.: Պայմանագիրը կնքված է անորոշ ժամկետով:

Անուն, Ազգանուն Մասնակցություն կառավարման մարմիններում	Ծնն. տարեթիվը և քաղաքաց.	Մասնագիտություն և որակավորումը, բնակության վայրը, անձնագրի սերիան և համարը	Վերջին 3 տարիների ընթացքում զբաղ.պաշտ., այդ թվում համատեղությամբ, ժամանակագրական կարգով՝ նշելով կազմ. անվանումները, որտեղ այդ անձը պաշտոն է զբաղեցրել	Վերջին 3 տարիների ընթացքում Թողարկողի մոտ վարձ. չափը (տարին, գումարը՝ դրամով)	Տվյալ անձին պատկանող Թողարկողի բաժնային արժեթղթերի քանակը	Մասնակցությունը այլ բաժնային արժեթղթերում	Փաստաթղթերը, որոնց համաձայն տվյալ անձը հանդիսանում է Թողարկողի կառավարմանը մասնակցող անձ, նրա գործողությունների լիազորության ժամկետները
Կարապետյան Սահակ Սարգսի Վարչության անդամ Գործադիր վարչության նախագահի աշխատակազմի ղեկավար-գլխավոր իրավախորհրդատու	22.07.1974թ. ՀՀ	Իրավաբան ՀՀ ք.Երևան, Ա.Բաբաջանյան փող. 77 -16 AG 0555195	01.04.2003թ.-ից առ այսօր զբաղեցնում է Թողարկողի Նախագահի աշխատակազմի ղեկավար - գլխավոր իրավախորհրդատուի պաշտոնը: Համատեղությամբ աշխատում է՝ ա) «Վալլեքս Գրուպ» ՓԲԸ-ում՝ որպես գործադիր վարչության անդամ, բ) «Լեռնամետալուրգիայի ինստիտուտ» ՓԲԸ-ում՝ որպես խորհրդի անդամ և գործադիր վարչության նախագահի աշխատակազմի ղեկավար (2004թ.- առ այսօր), գ) «Վալլեքս Հաուս» ՓԲԸ-ում՝ որպես տնօրեն (2005թ.- առ այսօր), դ) «Վալլեքս Տուր» ՓԲԸ-ում՝ որպես տնօրեն (2005թ.- առ այսօր), ե) «Թեղուտ» ՓԲԸ-ում՝ որպես խորհրդի անդամ (2006թ.- առ այսօր) զ) «Բեյզ Մեթըլս» ՓԲԸ-ում՝ որպես Երևանի մասնաճյուղի տնօրեն (2004թ.- առ այսօր) է) «Վալլեքս Մայնինգ» ՍՊԸ-ում՝ որպես նախագահի աշխատակազմի ղեկավար (2004թ.- առ այսօր),	2004թ.՝ 3,300 հազ. ՀՀ դրամ 2005թ.՝ 3,700 հազ. ՀՀ դրամ 2006թ.՝ 3,200 հազ. ՀՀ դրամ	-	-	Թողարկողի 15.04.2003թ. բաժնետերերի ժողովի թիվ 26 արձանագրություն: Թողարկողի գլխավոր տնօրենի 31.03.2003թ. N 013S/Կ հրաման: Գործող աշխատանքային պայմանագիր՝ N060731/4, կնքված 31.07.2006թ.: Պայմանագիրը կնքված է անորոշ ժամկետով:

Անուն, Ազգանուն Մասնակցություն կառավարման մարմիններում	Ծնն. տարեթիվը և քաղաքաց.	Մասնագիտություն և որակավորումը, բնակության վայրը, անձնագրի սերիան և համարը	Վերջին 3 տարիների ընթացքում զբաղ.պաշտ., այդ թվում համատեղությամբ, ժամանակագրական կարգով՝ նշելով կազմ. անվանումները, որտեղ այդ անձը պաշտոն է զբաղեցրել	Վերջին 3 տարիների ընթացքում Թողարկողի մոտ վարձ. չափը (տարին, գումարը՝ դրամով)	Տվյալ անձին պատկանող Թողարկողի բաժնային արժեթղթերի քանակը	Մասնակցությունը այլ բաժնային արժեթղթերում	Փաստաթղթերը, որոնց համաձայն տվյալ անձը հանդիսանում է Թողարկողի կառավարմանը մասնակցող անձ, նրա գործողությունների լիազորության ժամկետները
Սկրտումյան Արթուր Աշոտի Վարչության անդամ Տնօրենի տեղակալ-լեռնահանքային վարչության պետ (Միաժամանակ հանդիսանում է Թողարկողի միակ մասնաճյուղի տնօրենը)	26.06.1966թ. ՀՀ	Ինժեներ-մետալուրգ ՀՀ, ք.Ալավերդի, Շահումյան թաղ. 8-20 AC 0614627	15.04.2003թ.-01.04.2004թ. զբաղեցրել է գործադիր տնօրենի տեղակալի պաշտոնը: 01.04.2004թ. առ այսօր զբաղեցնում է Տնօրենի տեղակալ-լեռնահանքային վարչության պետի պաշտոնը Համատեղությամբ աշխատում է՝ ա) «Բեյզ Մեթըլս» ՓԲԸ-ում՝ որպես գործադիր վարչության փոխնախագահ (2002թ.- առ այսօր), բ) «Լեռնամետալուրգիայի ինստտուտ» ՓԲԸ-ում՝ որպես գործադիր վարչության փոխնախագահ (2004թ.- առ այսօր), գ) «Թեղուտ» ՓԲԸ-ում՝ որպես գործադիր վարչության փոխնախագահ (2006թ.- առ այսօր)	2004թ.՝ 3,300 հազ. ՀՀ դրամ 2005թ.՝ 3,300 հազ. ՀՀ դրամ 2006թ.՝ 3,200 հազ. ՀՀ դրամ	-	-	Թողարկողի 15.04.2003թ. բաժնետերերի ժողովի թիվ 26 արձանագրություն: Թողարկողի գործադիր վարչության նախագահի 01.04.2004թ. N 083S/Կ հրաման: Գործող աշխատանքային պայմանագիր՝ N060731/2, կնքված 31.07.2006թ.: Պայմանագիրը կնքված է անորոշ ժամկետով: Մասնաճյուղի տնօրեն է՝ համաձայն Թողարկողի Գլխավոր տնօրենի 19.07.2002թ. թիվ 028 S հրամանի:

Անուն, Ազգանուն Մասնակցություն կառավարման մարմիններում	Ծնն. տարեթիվը և քաղաքաց.	Մասնագիտություն և որակավորումը, բնակության վայրը, անձնագրի սերիան և համարը	Վերջին 3 տարիների ընթացքում զբաղ.պաշտ., այդ թվում համատեղությամբ, ժամանակագրական կարգով՝ նշելով կազմ. անվանումները, որտեղ այդ անձը պաշտոն է զբաղեցրել	Վերջին 3 տարիների ընթացքում Թողարկողի մոտ վարձ. չափը (տարին, գումարը՝ դրամով)	Տվյալ անձին պատկանող Թողարկողի բաժնային արժեթղթերի քանակը	Մասնակցությունը այլ բաժնային արժեթղթերում	Փաստաթղթերը, որոնց համաձայն տվյալ անձը հանդիսանում է Թողարկողի կառավարմանը մասնակցող անձ, նրա գործողությունների լիազորության ժամկետները
Ֆեոֆանով Նիկոլայ Պյոտրի Վարչության անդամ Ալավերդու տարածաշրջանային տնօրեն-արտադրական վարչության պետ	23.09.1947թ. ՀՀ	Ինժեներ ՀՀ, ք.Ալավերդի, Կախոյան փող. 5-24 AG 0637287	01.04.2004թ. մինչև 23.05.2005թ. զբաղեցրել է տնօրենի առաջին տեղակալ-արտադրական վարչության պետի պաշտոնը: 23.05.2005թ. -առ այսօր հանդիսանում է Ալավերդու տարածաշրջանային տնօրեն-արտադրական վարչության պետ: Համատեղությամբ աշխատում է՝ ա) «Թեղուտ» ՓԲԸ-ում՝ որպես խորհրդի անդամ (2006թ.- առ այսօր) բ) «Մանեքս ԳՄԳ» ԲԲԸ-ում՝ որպես Խորհրդի անդամ (1999թ.- առ այսօր)	2004թ.՝ 3,500 հազ. ՀՀ դրամ 2005թ.՝ 3,400 հազ. ՀՀ դրամ 2006թ.՝ 3,400 հազ. ՀՀ դրամ	-	-	Թողարկողի 15.04.2003թ. բաժնետերերի ժողովի թիվ 26 արձանագրություն: Թողարկողի գործադիր վարչության նախագահի 23.05.2004թ. N 157S/Կ հրաման: Գործող աշխատանքային պայմանագիր՝ N 060731/3, կնքված31.07.2006թ.: Պայմանագիրը կնքված է անորոշ ժամկետով:
Պապոյան Ռուբեն Գարեգինի Վարչության անդամ Թեղուտի տարածաշրջանային տնօրեն - մետալուրգիական վարչության պետ	26.06.1961թ. ՀՀ	Ինժեներ-մետալուրգ ՀՀ ք.Ալավերդի, Սանահին-Սարահարթ թաղ., 1/16 շենք, բն. 32 AE 0591832	25.12.2003թ. մինչև 23.05.2005թ. զբաղեցրել է մետալուրգիական վարչության պետի պաշտոնը: 23.05.2005թ. -առ այսօր զբաղեցնում է Թեղուտի տարածաշրջանային տնօրեն - մետալուրգիական վարչության պետի պաշտոնը: Համատեղությամբ աշխատում է՝ ա) «Թեղուտ» ՓԲԸ-ում՝ որպես գործադիր վարչության անդամ (2006թ.- առ այսօր)	2004թ.՝ 3,800 հազ. ՀՀ դրամ 2005թ.՝ 3,800 հազ. ՀՀ դրամ 2006թ.՝ 3,700 հազ. ՀՀ դրամ	-	-	Թողարկողի 15.04.2003թ. բաժնետերերի ժողովի թիվ 26 արձանագրություն: Թողարկողի գործադիր վարչության նախագահի 23.05.2004թ. N 157S/Կ հրաման: Գործող աշխատանքային պայմանագիր՝ N 060731/5, կնքված 31.07.2006թ.: Պայմանագիրը կնքված է անորոշ ժամկետով:

Անուն, Ազգանուն Մասնակցություն կառավարման մարմիններում	Ծնն. տարեթիվը և քաղաքաց.	Մասնագիտություն և որակավորումը, բնակության վայրը, անձնագրի սերիան և համարը	Վերջին 3 տարիների ընթացքում զբաղ.պաշտ., այդ թվում համատեղությամբ, ժամանակագրական կարգով՝ նշելով կազմ. անվանումները, որտեղ այդ անձը պաշտոն է զբաղեցրել	Վերջին 3 տարիների ընթացքում Թողարկողի մոտ վարձ. չափը (տարին, գումարը՝ դրամով)	Տվյալ անձին պատկանող Թողարկողի բաժնային արժեթղթերի քանակը	Մասնակցությունը այլ բաժնային արժեթղթերում	Փաստաթղթերը, որոնց համաձայն տվյալ անձը հանդիսանում է Թողարկողի կառավարմանը մասնակցող անձ, նրա գործողությունների լիազորության ժամկետները
Հարությունյան Համլետ Վարչության անդամ Գլխավոր հաշվապահ	28.11.1961թ. ՀՀ	Հաշվապահ ՀՀ ք. Ալավերդի, Սայաթ-Նովա 1-42 AC 0496320	10.08.1997թ.-մինչև 31.01.2007թ զբաղեցրել է Գլխավոր հաշվապահի տեղակալի պաշտոնը: 01.02.2007թ. առ այսօր զբաղեցնում է Թողարկողի Գլխավոր հաշվապահի պաշտոնը:	2004թ.՝ 4,100 հազ. ՀՀ դրամ 2005թ՝ 4,500 հազ. ՀՀ դրամ 2006թ.՝ 4,700 հազ. ՀՀ դրամ	-	-	Թողարկողի 15.04.2003թ. բաժնետերերի ժողովի թիվ 26 արձանագրություն: Թողարկողի տնօրենի 31.01.2007թ. N1 հրաման: Գործող աշխատանքային պայմանագիր՝ N010705/96, կնքված 30.06.2005թ. (կից N1, 2, 3, 4 և 5 լրացուցիչ համաձայնագրեր): Պայմանագիրը կնքված է անորոշ ժամկետով:
Լուսինե Վլադիմիրի Մեջլումյան Վերստուգող	20.11.1980թ. ՀՀ	Տնտեսագետ ՀՀ, ք.Ալավերդի, Սայաթ-Նովա 5-12 AC 0283288	15.04.2003թ. առ այսօր զբաղեցնում է Թողարկողի Վերստուգողի պաշտոնը: Համատեղությամբ աշխատում է՝ ա) «Վալլեքս Գրուպ» ՓԲԸ, գործադիր վարչության անդամ (24.02.2005թ. - մինչ այժմ) բ) «Վալլեքս Գրուպ» ՓԲԸ տնտեսագետ (21.10.2002թ. – 24.02.2005թ.) գ) «Լեռնամետալուրգիայի ինստիտուտ» ՓԲԸ, խորհրդի անդամ (25.08.2005թ. առ այսօր):	-	-	-	Թողարկողի 15.04.2003թ. բաժնետերերի ժողովի թիվ 26 արձանագրություն:

4.3. 2004-2006թթ. ընթացքում կառավարմանը մասնակցող անձի դեմ (կամ այն կազմակերպության դեմ, որտեղ այդ անձը նշված ժամանակաշրջանում կառավարմանը մասնակցող անձ է կամ եղել է) կամ իր կողմից սնանկացման (անվճարունակության) միջնորդությունների ներկայացման, դատարանի որոշման (դատավճռի) հիման վրա կամ պետական որևէ մարմնի կողմից նրա (կամ այն կազմակերպության դեմ, որտեղ այդ անձը նշված ժամանակաշրջանում կառավարմանը մասնակցող անձ է կամ եղել է) նկատմամբ պատասխանատվության միջոցներ չեն կիրառվել՝ բացառությամբ սույն ազդագրի 9.2 կետով ներկայացված պատասխանատվության միջոցների:

4.4. Թողարկողի գործադիր վարչության նախագահի և վերտուգողի միջև առկա է ազգակցական կապ, մասնավորապես՝ վերստուգող Լ.Մեջլումյանը հանդիսանում է գործադիր վարչության նախագահ Վ.Մեջլումյանի եղբոր դուստրը: Կառավարմանը մասնակցող մյուս անձանց միջև ազգակցական կապեր առկա չեն:

4.5. Թողարկողը չունի կառավարման մարմինների կազմում չընդգրկված այնպիսի աշխատակիցներ, որոնք կարող են Թողարկողի ներկա կամ ապագա գործունեության վրա էական ազդեցություն ունենալ:

5. Տեղեկություններ Թողարկողի բաժնային արժեթղթերի նշանակալից, բայց ոչ խոշոր, սեփականատերերի մասին

5.1. Թողարկողի բաժնային արժեթղթերի նշանակալից սեփականատեր է հանդիսանում ՌԴ քաղաքացի Վալերի Մեջլումյանը (ՌԴ քաղաքացի, անձնագիր 45 02 386952, տրված 26.04.2002թ. 772-028 կողմից: ՀՀ-ում ունի կացության հատուկ կարգավիճակ, AF 0203692, տրված 16.07.2001թ., ՀՀ-ում բնակության վայրն է՝ ք. Երևան, Բայրոնի փող. 3-30): 2003 թվականից առ այսօր Վ.Մեջլումյանը զբաղեցնում է Թողարկողի Վարչության նախագահի պաշտոնը, ինչպես նաև համատեղությամբ պաշտոններ է զբաղեցնում Թողարկողի փոխկապակցված անձանց կառավարման մարմիններում (մանրամասնությունները ներկայացված են նախորդ բաժնի Թողարկողի կառավարմանը մասնակցող անձանց վերաբերյալ աղյուսակում): Վ.Մեջլումյանին պատկանում է Թողարկողի սովորական բանժնետոմսերի 19.26%-ը (թվով 591,340 հատ բաժնետոմս):

5.2. Թողարկողը չունի բաժնային արժեթղթերի նշանակալից, բայց ոչ խոշոր սեփականատեր հանդիսացող իրավաբանական անձ:

6. Տեղեկություններ Թողարկողի հետ փոխկապակցված անձանց մասին

6.1. Ստորև ներկայացվում են Թողարկողի հետ փոխկապակցված անձանց վերաբերյալ տեղեկությունները՝

1. Թողարկողի հետ փոխկապակցված իրավաբանական անձ է հանդիսանում «Vallex F.M. Establishment» ընկերությունը, որին պատկանում է Թողարկողի բաժնետոմսերի 80.74%-ը (թվով 2,478,375 հատ բաժնետոմս): Ընկերությունը հիմնադրվել է Լիխտենշտեյնի իշխանությունում՝ գրանցման համար՝ H.850/31, հասցե՝ Լիխտենշտեյնի իշխանություն, ք.Վադուց, Աուբունդտ 36: Ընկերության տնօրենն է Սիլվիո Վոգտը, որի լիազոր ներկայացուցիչն է Թողարկողի գործադիր վարչության նախագահի աշխատակազմի ղեկավար Սահակ Կարապետյանը՝ համաձայն 26.12.2005թ. թիվ 051226/SK-1-06 լիազորագրի: Այլ անձանց կապիտալում Ընկերության մասնակցությունների վերաբերյալ տեղեկությունները ներկայացված են ստորև ներկայացված աղյուսակում.

N	Անվանումը	Մասնակցության չափը
1.	«Վալլեքս Գրուպ» ՓԲԸ	95.66%
2.	«Վալլեքս Մայնինգ» ՍՊԸ	95%
3.	«Բեյզ Մեթըլս» ՓԲԸ	87.74%
4.	«Վալլեքս Տուր» ՓԲԸ	90%
5.	«Վալլեքս Այթի» ՍՊԸ	99.83%
6.	«Լեռնամետալուրգիայի ինստիտուտ» ՓԲԸ	5.03%
7.	«Վալլեքս Հաուս» ՓԲԸ	0.025%
8.	«Մանեսի ԳՄԳ» ԲԲԸ	10%
9.	«Վալլեքս Էֆ. Էմ. Էստ.» ՍՊԸ	100%

2. Թողարկողի հետ փոխկապակցված անձ է հանդիսանում նաև Թողարկողի նշանակալից սեփականատեր Վալերի Մեջլումյանը, քանի որ Թողարկողի և նրա որոշ փոխկապակցված (այդ թվում՝ մատակարար հանդիսացող) անձանց որոշումների վրա էականորեն ազդելու փաստացի կամ պայմանագրով ամրագրված հնարավորություն ունի (մասնավորապես՝ նա հանդիսանում է Թողարկողի, «Բեյզ Մեթըլս» ՓԲԸ-ի գործադիր վարչության նախագահի, ինչպես նաև Թողարկողի խոշոր սեփականատեր «Vallex F.M. Establishment» ընկերության վարչական խորհրդի անդամը): Վ.Մեջլումյանի վերաբերյալ տվյալները ներկայացված են 5.1. կետում:

3. Թողարկողի հետ փոխկապակցված իրավաբանական անձ է հանդիսանում «Թեղուտ» ՓԲԸ-ն, որի բաժնետոմսերի 100%-ի սեփականատեր է հանդիսանում Թողարկողը: Ընկերությունը հիմնադրվել է 06.04.2006թ., իրավաբանական անձի կարգավիճակ է ստացել 22.05.2006թ., պետական գրանցման համար՝ 286.120.06078, պետական գրանցման վկայական՝ 03 Ա 072031, իրավաբանական հասցե՝ ՀՀ, ք.Երևան 0010, Խանջյան 19: Միաժամանակ, «Թեղուտ» ՓԲԸ-ի կառավարման մարմիններում ընդգրկված են Թողարկողի կառավարման մարմիններում ընդգրկված հետևյալ պաշտոնատար անձինք՝

(1) Վալերի Մեջլումյան՝ Խորհրդի նախագահ, գործադիր վարչության նախագահ,
(2) Գագիկ Արզումանյան՝ Խորհրդի փոխնախագահ, Գործադիր վարչության փոխնախագահ,
(3) Սահակ Կարապետյան՝ Խորհրդի անդամ,
(4) Նիկոլայ Ֆեոֆանով՝ Խորհրդի անդամ,
(5) Արթուր Սկրտումյան՝ Գործադիր վարչության փոխնախագահ,
(6) Ռուբեն Պապոյան՝ Գործադիր վարչության անդամ:

4. Թողարկողի հետ փոխկապակցված իրավաբանական անձ է հանդիսանում «Գուգարքի ԳԵՌ» ԲԲԸ-ն, որի բաժնետոմսերի 100%-ի սեփականատերը Թողարկողն է: Ընկերությունը հիմնադրվել է 01.11.2006թ., իրավաբանական անձի կարգավիճակ է ստացել 26.01.2007թ., պետական գրանցման համար՝ 62.130.00419, պետական գրանցման վկայական՝ 03 Ա 074173, իրավաբանական հասցե՝ ՀՀ, Լոռու մարզ, գյուղ Մարգահովիտ: Ընկերության գործադիր տնօրենն է Ֆելիքս Լազարյանը:

5. Թողարկողի հետ փոխկապակցված անձ է հանդիսանում «Վալլեքս Մայնինգ» ՍՊԸ-ն, որի բաժնետոմսերի 95%-ի սեփականատերն է «Vallex F.M. Establishment» ընկերությունը՝ Թողարկողի հետ գտնվելով ընդհանուր վերահսկողության տակ: Ընկերության գտնվելու վայրը և

իրավաբանական հասցեն է՝ ՀՀ, ք.Երևան 0010, Խանջյան 19, գրանցված 29.08.1997թ., գրանցման համար՝ 62.110.00184, գրանցման վկայականի համար՝ 01 Ա 036992: Ընկերության նախագահն է Վալերի Մեջլումյանը: Սահակ Կարապետյանը տվյալ ընկերությունում հանդիսանում է նախագահի աշխատակազմի ղեկավար՝ 2004 թվականից:

6. Թողարկողի հետ փոխկապակցված անձ է հանդիսանում «Վալլեքս Գրուպ» ՓԲԸ-ն, որի բաժնետոմսերի 95.66%-ի սեփականատերն է «Vallex F.M. Establishment» ընկերությունը՝ Թողարկողի հետ գտնվելով ընդհանուր վերահսկողության տակ: Ընկերության գտնվելու վայրը և իրավաբանական հասցեն է՝ ՀՀ, ք.Երևան 0010, Խանջյան 19, գրանցված 05.02.1998թ., գրանցման համար՝ 282.120.03129, գրանցման վկայականի համար՝ 01 Ա 040127: Ընկերության կառավարման մարմիններում ընդգրկված են Թողարկողի կառավարման մարմիններում ընդգրկված հետևյալ պաշտոնատար անձինք՝

(1) Վալերի Մեջլումյան՝Գործադիր վարչության նախագահ,
(2) Գագիկ Արզումանյան՝ Գործադիր վարչության անդամ,
(3) Սահակ Կարապետյան՝ Գործադիր վարչության անդամ:

«Վալլեքս Գրուպ» ՓԲԸ-ի գործադիր վարչությունում որպես անդամներ ընդգրկված են Լուսինե Մեջլումյանը և Գեորգի Մեջլումյանը, որոնք Թողարկողի գործադիր վարչության նախագահ Վալերի Մեջլումյանի հետ ունեն ազգակցական կապ (Գեորգի Մեջլումյանը Վ.Մեջլումյանի ընտանիքի անդամ է, իսկ Լուսինե Մեջլումյանը՝ Վ. Մեջլումյանի եղբոր դուստրը):

7. Թողարկողի հետ փոխկապակցված անձ է հանդիսանում «Բեյզ Մեթըլս» ՓԲԸ-ն (հիմնադրվել է վերակազմավորման ձևով «Բեյզ Մեթըլս» ՍՊԸ-ի վերակազմակերպման արդյունքում), որի սովորական և արտոնյալ բաժնետոմսերի 87.74%-ի սեփականատերն է «Vallex F.M. Establishment» ընկերությունը՝ Թողարկողի հետ գտնվելով ընդհանուր վերահսկողության տակ: Ընկերության գտնվելու վայրը և իրավաբանական հասցեն է՝ ԼՂՀ, ք.Ստեփանակերտ, Ազատամարտիկների 35ա, գրանցված 16.10.2006թ., գրանցման համար՝ 443.120.11184, գրանցման վկայականի համար՝ 02 Ա 001753: Ընկերության կառավարման մարմիններում ընդգրկված են Թողարկողի կառավարման մարմիններում ընդգրկված հետևյալ պաշտոնատար անձինք՝

(1) Վալերի Մեջլումյան՝ Գործադիր վարչության նախագահ,
(2) Գագիկ Արզումանյան՝ Գործադիր վարչության փոխնախագահ,
(3) Արթուր Սկրտումյան՝ Գործադիր վարչության փոխնախագահ,
(4) Սահակ Կարապետյանը՝ Երևանի մասնաճյուղի տնօրեն:

8. Թողարկողի հետ փոխկապակցված անձ է հանդիսանում «Վալլեքս Տուր» ՓԲԸ-ն, որի բաժնետոմսերի 90%-ի սեփականատերն է «Vallex F.M. Establishment» ընկերությունը՝ Թողարկողի հետ գտնվելով ընդհանուր վերահսկողության տակ: Ընկերության գտնվելու վայրը և իրավաբանական հասցեն է՝ ՀՀ, ք.Երևան 0010, Խանջյան 19, գրանցված 03.08.2005թ., գրանցման համար՝ 286.120.05782, գրանցման վկայականի համար՝ 03 Ա 069462: Ընկերության տնօրենն է Սահակ Կարապետյանը, որը միաժամանակ զբաղեցնում է Թողարկողի Վարչության նախագահի աշխատակազմի ղեկավար-գլխավոր իրավախորհրդատուի պաշտոնը:

9. Թողարկողի հետ փոխկապակցված անձ է հանդիսանում «Վալլեքս Էֆ. Էմ. Էստ.» ՍՊԸ-ն, որի բաժնետոմսերի 100%-ի սեփականատերն է «Vallex F.M. Establishment» ընկերությունը՝ Թողարկողի հետ գտնվելով ընդհանուր վերահսկողության տակ: Ընկերության գտնվելու վայրը և իրավաբանական հասցեն է 117630, ՌԴ, ք. Մոսկվա, Ստարոկալուժսկոյե շոսսե 62, Պետ. գրանցման վկայական N 052.185, գրանցված 18.11.1998թ: Գլխավոր տնօրեն՝ Ակիմով Մարատ Գրիգորիի:

10. Թողարկողի հետ փոխկապակցված անձ է հանդիսանում «Վալլեքս ԱյԹի» ՍՊԸ-ն, որի բաժնետոմսերի 99.83%-ի սեփականատերն է «Vallex F.M. Establishment» ընկերությունը՝ Թողարկողի հետ գտնվելով ընդհանուր վերահսկողության տակ: Ընկերության գտնվելու վայրը և իրավաբանական հասցեն է՝ ՀՀ, ք.Երևան 0010, Խանջյան 19, գրանցված 04.02.2002թ., գրանցման համար՝ 286.110.04470, գրանցման վկայականի համար՝ 03 Ա 053290: Ընկերության տնօրենն է Վալերի Մեջլումյանը, որը միաժամանակ զբաղեցնում է Թողարկողի Վարչության նախագահի պաշտոնը:

11. Թողարկողի հետ փոխկապակցված անձ է հանդիսանում «Լեռնամետալուրգիայի ինստիտուտ» ՓԲԸ-ն, գտնվելու վայրը և իրավաբանական հասցեն՝ ՀՀ, ք. Երևան 0010, Խանջյան 19, գրանցված 06.08.2003թ., գրանցման համար՝ 286.120.05068, գրանցման վկայականի համար՝ 03 Ա 061305: Ընկերության կառավարման մարմիններում ընդգրկված են Թողարկողի կառավարման մարմիններում ընդգրկված հետևյալ պաշտոնատար անձինք՝

(1) Վալերի Մեջլումյան՝ Խորհրդի նախագահ, գործադիր վարչության նախագահ,
(2) Սահակ Կարապետյան՝ Խորհրդի անդամ, Գործադիր վարչության նախագահի աշխատակազմի ղեկավար,
(3) Գագիկ Արզումանյան՝ Գործադիր վարչության փոխնախագահ,
(4) Արթուր Մկրտումյան՝ Գործադիր վարչության փոխնախագահ:

«Լեռնամետալուրգիայի ինստիտուտ» ՓԲԸ-ի խորհրդում որպես խորհրդի անդամներ ընդգրկված են Լուսինե Մեջլումյանը և Գեորգի Մեջլումյանը, որոնք Թողարկողի գործադիր վարչության նախագահ Վալերի Մեջլումյանի հետ ունեն ազգակցական կապ (Գեորգի Մեջլումյանը Վ.Մեջլումյանի ընտանիքի անդամ է, իսկ Լուսինե Մեջլումյանը՝ Վ.Մեջլումյանի եղբոր դուստրը):

12. Թողարկողի հետ փոխկապակցած անձ է հանդիսանում նաև «Վալլեքս Հաուս» ՓԲԸ-ն: Ընկերության գտնվելու վայրը և իրավաբանական հասցեն է՝ ՀՀ, ք. Երևան 0010, Խանջյան 19, գրանցված 03.08.2005թ., գրանցման համար՝ 286.120.05783, գրանցման վկայականի համար՝ 03 Ա 069463: Ընկերության տնօրենն է Սահակ Կարապետյանը, որը միաժամանակ զբաղեցնում է Թողարկողի Վարչության նախագահի աշխատակազմի ղեկավար-գլխավոր իրավախորհրդատուի պաշտոնը:

13. Թողարկողի հետ փոխկապակցած անձ է հանդիսանում նաև «Մանեսի գունավոր մետաղների գործարան» ԲԲԸ-ն: Ընկերության գտնվելու վայրը և իրավաբանական հասցեն է՝ ՀՀ, ք.Ալավերդի, Կիրովի 4, գրանցված 08.02.1996թ., գրանցման համար՝ 12.130.00212, գրանցման վկայականի համար՝ 01 Ա 022645: Ընկերության տնօրենն է Աղվան Հովհաննիսյանը: Ընկերության խորհրդի կազմում ընդգրկված են Թողարկողի հետևյալ պաշտոնատար անձինք՝

(1) Վալերի Մեջլումյան՝ Խորհրդի նախագահ (Վ.Մեջլումյանը ներկայացնում է «Վալլեքս Ֆ.Մ. Էստ» ՍՊԸ-ն, որը տիրապետում է «Մանեսի գունավոր մետաղների գործարան» ԲԲԸ-ի բաժնետոմսերի 10%-ը),
(2) Գագիկ Արզումանյան՝ Խորհրդի անդամ, (Գ.Արզումանյանը ներկայացնում է Թողարկողին, որը տիրապետում է «Մանեսի գունավոր մետաղների գործարան» ԲԲԸ-ի բաժնետոմսերի 1.26%-ը),
(3) Նիկոլայ Ֆեոֆանով՝ Խորհրդի անդամ:

«Մանեսի գունավոր մետաղների գործարան» ԲԲԸ-ի խորհրդում որպես խորհրդի անդամներ ընդգրկված են Լենա Մեջլումյանը և Վլադիմիր Մեջլումյանը, որոնք Թողարկողի գործադիր վարչության նախագահ Վալերի Մեջլումյանի հետ ունեն ազգակցական կապ (Լենա Մեջլումյանը Վ.Մեջլումյանի ընտանիքի անդամ է, որը տիրապետում է «Մանեսի գունավոր մետաղների գործարան» ԲԲԸ-ի բաժնետոմսերի 65.1%-ին, իսկ Վլադիմիր Մեջլումյանը՝ Վ.Մեջլումյանի եղբայրը):

7. Տեղեկություններ թողարկված արժեթղթերի վերաբերյալ

7.1. Թողարկված արժեթղթերի մասին տեղեկություններն են.

Թողարկողի կողմից նախկինում թողարկվել են միայն ոչ փաստաթղթային անվանական սովորական բաժնետոմսեր:

Թողարկողի կողմից թողարկված բաժնետոմսերը չեն գրանցվել, հետևաբար բաժնետոմսերի գրանցման համարները և տարբերակիչ ծածկագրերը բացակայում են:

Թողարկողի կողմից թողարկված բաժնետոմսերը որևէ պետական մարմնի կողմից չեն գրանցվել:

Քանի որ Թողարկողի կողմից կանոնադրական կապիտալի ավելացման նպատակով լրացուցիչ թողարկվող բաժնետոմսերի քանակը նախատեսված է եղել տեղաբաշխել միայն առկա բաժնետերերի շրջանակներում, ուստի որպես տեղաբաշխման սկզբի և ավարտի ամսաթվեր կարելի է դիտարկել ստորև ներկայացված աղյուսակի «Թողարկման հիմքեր» սյունակում նշված բաժնետերերի ժողովների գումարման օրերը:

Թողարկված բաժնետոմսերը մարման ժամկետ չունեն:

Ստորև բերված աղյուսակում ներկայացված են լրացուցիչ բաժնետոմսերի թողարկումների և դրանց շրջանակում տեղաբաշխման ենթակա բաժնետոմսերի ծավալների վերաբերյալ տեղեկություններ:

Թողարկման համարը	Թողարկման ենթակա բաժնետոմսերի քանակը	Ընդհանուր ծավալը	Թողարկման հիմքերը
1-ին թողարկում (հիմնադրման պահին)	37,250 հատ սովորական բաժնետոմս	37,250,000 ՀՀ դրամ	01.08.1997թ. հիմնադիր ժողովի որոշում
2-րդ թողարկում	502,750 հատ սովորական բաժնետոմս	502, 750,000 ՀՀ դրամ	01.09.1997թ. և 24.01.1998թ. բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովների որոշումներ
3-րդ թողարկում	1,231,210 հատ սովորական բաժնետոմս	1,231,210,000 ՀՀ դրամ	28.12.2001թ. և 11.02.2002թ. բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովների որոշումներ
4-րդ թողարկում	493,225 հատ սովորական բաժնետոմս	493,225,000 ՀՀ դրամ	15.03.2002թ. և 15.07.2002թ. բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովների որոշումներ
5-րդ թողարկում	696,216 հատ սովորական բաժնետոմս	696,216,000 ՀՀ դրամ	24.09.2002թ. և 05.10.2002թ. բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովների որոշումներ
6-րդ թողարկում	109,064 հատ սովորական	109,064,000 ՀՀ դրամ	02.12.2002թ. և 05.11.2003թ.

Թողարկման համարը	Թողարկման ենթակա բաժնետոմսերի քանակը	Ընդհանուր ծավալը	Թողարկման հիմքերը
	բաժնետոմս		բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովների որոշումներ
ԸՆԴԱՄԵՆԸ	**3,069,715 հատ սովորական բաժնետոմս**	**3,069,715,000 ՀՀ դրամ**	

Քանի որ Թողարկողի կողմից կանոնադրական կապիտալի ավելացման նպատակով լրացուցիչ թողարկվող բաժնետոմսերի քանակը նախատեսված է եղել տեղաբաշխել միայն առկա բաժնետերերի շրջանակներում, ուստի թողարկումների ծավալները պայմանավորված են եղել իրենց կողմից կատարված ներդրումների ծավալով, այսինքն՝ լրացուցիչ բաժնետոմսերի թողարկված և փաստացի տեղաբաշխված բաժնետոմսերի միջև քանակային տարբերություններ չեն եղել: Ներկայացված աղյուսակի «թողարկման ենթակա բաժնետոմսերի քանակը» սյունակում նշված տվյալները հանդես են գալիս նաև որպես փաստացի տեղաբաշխված բաժնետոմսերի քանակ:

Թողարկողի մեկ բաժնետոմսի անվանական արժեքը 1,000 դրամ է:

Թողարկողի սովորական բաժնետոմսերի սեփականատերերի իրավունքներն ու պարտականությունները սահմանված են ՀՀ օրենսդրությամբ և Թողարկողի կանոնադրությամբ: Ըստ այդմ՝ Թողարկողի յուրաքանչյուր սովորական բաժնետոմս իր սեփականատեր բաժնետիրոջը տալիս է միևնույն իրավունքները: Սովորական բաժնետոմսի սեփականատեր բաժնետերն իրավունք ունի.

ա) մասնակցել Թողարկողի բաժնետերերի ընդհանուր ժողովին՝ վերջինիս իրավասությանը պատկանող բոլոր հարցերի նկատմամբ վճռորոշ ձայնի իրավունքով,
բ) մասնակցել Թողարկողի կառավարմանը,
գ) ստանալ շահաբաժիններ,
դ) ձեռք բերել Թողարկողի կողմից լրացուցիչ տեղաբաշխվող բաժնետոմսերը,
ե) ստանալ Թողարկողի գործունեության վերաբերյալ ցանկացած տեղեկատվություն՝ բացառությամբ գաղտնի փաստաթղթերից, այդ թվում՝ Թողարկողի կանոնադրությամբ սահմանված կարգով ծանոթանալ հաշվապահական հաշվեկշռին, հաշվետվություններին, Թողարկողի տնտեսական գործունեությանը,
զ) Թողարկողի կանոնադրական կապիտալի առնվազն 5 (հինգ) տոկոս կազմող ձայնի իրավունք տվող սեփականատերը (սեփականատերերը) կարող է (են) պահանջել աուդիտոր՝ Թողարկողի գործունեությանը վերաբերող հաշվետվությունները և գաղտնիք ներկայացնող փաստաթղթերը ստուգելու նպատակով: Ստուգման հետ կապված ծախսերը փոխհատուցում է (են) ստուգումը պահանջող բաժնետերը (բաժնետերերը),
է) Թողարկողի բաժնետերերի ընդհանուր ժողովում իր իրավունքները ներկայացնելու համար լիազորել երրորդ անձի,
ը) Թողարկողի բաժնետերերի ընդհանուր ժողովում հանդես գալ առաջարկություններով,
թ) Թողարկողի բաժնետերերի ընդհանուր ժողովում քվեարկել իրեն պատկանող բաժնետոմսերի ձայների չափով,
ժ) դատարանում հայց հարուցել՝ ընդհանուր ժողովի կողմից ընդունված և ՀՀ օրենսդրությանը հակասող որոշումները վերացնելու պահանջով,
ժա) Թողարկողի լուծարման դեպքում ստանալ Թողարկողի գույքի իր հասանելիք մասը,
ժբ) Թողարկողի միջոցների հաշվին Թողարկողի կանոնադրական կապիտալի չափի ավելացման դեպքում անվճար ստանալ համապատասխան քանակությամբ սովորական բաժնետոմսեր,
ժգ) վաճառել կամ ՀՀ օրենսդրությամբ և Թողարկողի կանոնադրությամբ չարգելված այլ ձևով օտարել իրեն սեփականության իրավունքով պատկանող բաժնետոմսը,
ժդ) ձեռք բերել Թողարկողի մյուս բաժնետերերի կողմից օտարվող բաժնետոմսերը՝ օգտվելով նախապատվության իրավունքից: Բաժնետերերի կողմից բաժնետոմսերը ձեռք բերելու

նախապատվության իրավունքից չօգտվելու դեպքում այդպիսի իրավունք ձեռք է բերում Թողարկողը,

ժե) օգտվել ՀՀ օրենսդրությամբ և Թողարկողի կանոնադրությամբ նախատեսված այլ իրավունքներից:

Սովորական բաժնետոմսերի սեփականատերերին չի կարող տրամադրվել լրացուցիչ ձայնի իրավունք: Սովորական բաժնետոմսերի դիմաց շահաբաժինների վճարումները Թողարկողի կողմից չեն երաշխավորվում:

Թողարկողի բաժնետերերը պարտավոր են.

ա) սահմանված կարգով կատարել դրամական և գույքային ներդրումներ,

բ) կատարել Թողարկողի հանդեպ իրենց ստանձնած պարտավորությունները,

գ) չհրապարակել Թողարկողի գործունեության վերաբերյալ գաղտնիք պարունակող տեղեկությունները,

դ) կրել ՀՀ օրենսդրությամբ և Թողարկողի կանոնադրությամբ նախատեսված այլ պարտականությունները:

Թողարկողի բաժնետերերը ստանձնում են նաև հետևյալ պատասխանատվությունը.

- Թողարկողի հանդեպ իր ստանձնած պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Թողարկողի ընդհանուր ժողովը կարող է առաջարկել բաժնետիրոջը Թողարկողի կանոնադրությամբ սահմանված կարգով դուրս գալ ընկերությունից և (կամ) հատուցել վնասները.
- Բաժնետիրոջ կողմից իր պարտավորությունները խախտելու հետևանքով Թողարկողին պատճառված գույքային և այլ վնասը նրա կողմից հատուցվում է Թողարկողի բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից սահմանված չափերով, եղանակներով և ժամկետներում:
- Վնասի հատուցման կապակցությամբ վեճ առաջանալու դեպքում հարցը լուծվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Թողարկողի բաժնետոմսերի դիմաց վճարվում են շահաբաժիններ՝ բաժնետերերի տարեկան ժողովով սահմանված կարգով: Շահաբաժինների վճարումը կախված է Թողարկողի կողմից ստացված շահույթի մակարդակից: Շահաբաժինները վճարվում են ՀՀ դրամով և անկանխիկ եղանակով:

Վերջին երեք տարիների ընթացքում Թողարկողի բաժնետոմսերի դիմաց շահաբաժիններ չեն վճարվել: Շահաբաժինների չվճարումը պայմանավորված է Թողարկողի շահույթի վերաներդրման ուղղությամբ որդեգրած մոտեցումներով, որն իր արտացոլումն է գտել Թողարկողի բաժնետերերի 28.12.1998թ. ընդհանուր ժողովի թիվ 5.1 որոշման մեջ:

Թողարկողի արժեթղթերը չեն վաճառվում ֆոնդային բորսայում: Վերջին մեկ տարվա ընթացքում Թողարկողի արժեթղթերը արտաբորսայում նույնպես չեն վաճառվել:

7.2. Թողարկողի կողմից արժեթղթերի փոխարկում, բաժանում, համախմբում, ձեռքբերում, հետգնում կամ մարում չի իրականացվել: Սակայն որպես փոխարկման փաստ կարելի է արձանագրել Թողարկողի անվանափոխությունը, որի վերաբերյալ որոշում է ընդունվել 18.10.2001թ. Թողարկողի բաժնետերերի ընդհանուր ժողովում, իսկ Թողարկողի կանոնադրության համապատասխան փոփոխությունները ՀՀ պետական ռեգիստրում գրանցվել են 06.12.2001թ.:

Թողարկողի 11.02.2002թ. բաժնետերերի ընդհանուր ժողովում կանոնադրության մեջ փոփոխություններ կատարելու վերաբերյալ որոշում է ընդունվել, ըստ որի սահմանվել է, որ Թողարկողի բաժնետոմսերը ոչ փաստաթղթային են: Միաժամանակ, Թողարկողը 14.02.2002թ. անվանական արժեթղթերերի սեփականատերերի ռեեստրի վարման պայմանագիր է կնքել Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա ԻԿԿ-ի հետ, որով վերջինիս է հանձնվել Թողարկողի բաժնետոմսերի սեփականատերերի ռեեստրի վարումը: Թողարկողի բաժնետոմսերի սեփականատերերի ռեեստրը մինչ օրս վարվում է Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա ԻԿԿ-ում:

8. Տեղեկություններ Թողարկողի ֆինանսական վիճակի մասին

8.1.Թողարկողի տարեկան և միջանկյալ ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են կից հավելվածում (տես Հավելված 2):

8.2. Թողարկողի ֆինանսական վիճակի և գործունեության արդյունքների մասին թողարկողի կառավարմանը մասնակցող առնվազն երկու անձի վերլուծությունները.

ա) Ստորև ներկայացվում է Թողարկողի ոչ ընթացիկ ակտիվների կառուցվածքը (աղյուսակներում բոլոր ֆինանսական ցուցանիշները ներկայացված են հազար դրամներով):

Աղյուսակ 1. Թողարկողի ոչ ընթացիկ ակտիվների կառուցվածքը

	01.01.07թ.	01.01.06թ.	01.01.05թ.
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	9,388,235	4,800,185	5,039,063
Անավարտ ոչ ընթացիկ նյութական ակտիվներ	15,287	32,800	
Ոչ նյութական ակտիվներ	46,465	1,259	2,519
Բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ներդրումներ	35,747	25,647	25,747
Այլ ոչ ընթացիկ ակտիվներ	2,433,088	682,430	501,884
	11,918,822	***5,542,321***	***5,569,213***

Թողարկողի ընդհանուր ակտիվները 01.01.2007թ. դրությամբ կազմել են 17,898.2 մլն ՀՀ դրամ: Թողարկողի ոչ ընթացիկ ակտիվները 01.01.2007թ., 01.01.2006թ. և 01.01.2005թ. դրությամբ կազմում են ընդհանուր ակտիվների համապատասխանաբար շուրջ 66.6%, 47.5% և 55.8%-ը: 01.01.2007թ. դրությամբ Թողարկողի ոչ ընթացիկ ակտիվները նախորդ տարվա նկատմամբ ավելացել են շուրջ 115.1%-ով, ինչը հիմնականում պայմանավորված է 2006 թվականին հիմնական միջոցների և այլ ոչ ընթացիկ ակտիվների զգալի աճով: Ընդ որում, հիմնական միջոցների ավելացումը մեծապես պայմանավորված է դրանց վերագնահատմամբ:

31.12.2006թ. դրությամբ հիմնական միջոցների ծավալը կազմում է 9,388.2 մլն դրամ կամ ընդհանուր ակտիվների շուրջ 52.5%-ը: Ստորև ներկայացվում է հիմնական միջոցների կառուցվածքը և դրանց փոփոխությունների մեկնաբանությունները.

Աղյուսակ 2. Թողարկողի հիմնական միջոցների կառուցվածքը

N	Հիմնական միջոցներ (Զուտ հաշվեկշռային արժեք)	01.01.2007թ. դրությամբ	01.01.2006թ. դրությամբ	Փոփ. (%)	Մեկնաբանություններ
1.	Շենքեր	3,630,046	1,766,470	105.50%	Հիմնական միջոցների նման աճը հիմնականում պայմանավորված է 01.01.2007թ. դրությամբ Թողարկողի հիմնական միջոցների արժեքի վերագնահատմամբ (2006թ. դեկտեմբերի 19-ին Թողարկողի և «Արթին Էնթրփրայս» ՍՊԸ-ի միջև կնքվել է Թողարկողի հիմնական միջոցների գնահատման և գույքագրման ծառայությունների մատուցման մասին պայմանագիր)
2.	Մեքենասարքավորումներ, Կառուցվածքներ, Փոխանցող հարմարանքներ	3,541,527	1,226,769	188.69%	
3.	Տրանսպորտային միջոցներ	455,417	70,387	547.02%	
4.	Արտադրատնտեսական գույք, գործիքներ	118,133	44,517	165.37%	
5.	Այլ հիմնական միջոցներ	28,627	53,562	-46.55%	
6.	Շահագործման մեջ չգտնվող հիմն. միջոցներ	1,544,402	1,638,480	-5.74%	
7.	Հողամասեր	70,083	-	100.00%	
Ընդամենը		**9,388,235**	**4,800,185**	**95.58%**	

Այլ ոչ ընթացիկ ակտիվների մեջ նշանակալի մասնաբաժինը պատկանում է Թեղուտում կապիտալացվող ծախսերին՝ մոտ 63%:

Աղյուսակ 3. Այլ ոչ ընթացիկ ակտիվների կազմը
2007թ. հունվարի 1-ի դրությամբ

	01.01.07թ.	Տես. կշիռը
Այլ ոչ ընթացիկ ակտիվներ		
Ներդրումային գույք	148,478	6.1
Կանխավճար ոչ ընթացիկ ակտիվների ձեռքբերման համար	11,748	0.5
Ալավերդու հանքի կապիտալացված ծախսեր	736,296	30.3
Թեղուտի հանքի կապիտալացված ծախսեր	1,536,566	63.2
	2,433,088	*100*

Հիմնական միջոցների հաշվեկշռային և շուկայական արժեքների միջև տարբերություններն էական չեն, քանի որ 01.01.2007թ. դրությամբ հաշվեկշռում հիմնական միջոցներն արտացոլված են վերագնահատված արժեքներով:

Թողարկողի ընթացիկ ակտիվների կառուցվածքը ներկայացված է Աղյուսակ 4-ում.

Աղյուսակ 4. Թողարկողի ընթացիկ ակտիվների կառուցվածքը

Ընթացիկ ակտիվներ	01.01.2007թ.	01.01.2006թ.	01.01.2005թ.
Նյութեր	2,181,039	2,225,954	1,619,468
Արագամաշ առարկաներ	36,085	27,296	18,101
Անավարտ արտադրություն	272,813	69,288	101,805
Արտադրանք	364,818	490,768	374,678
Ապրանքներ	55	34	
Տրված ընթացիկ կանխավճարներ	137,003	950,794	589,591
Դեբիտորական պարտքեր վաճառքների գծով	1,016,989	481,097	125,094
Կարճաժամկետ դեբիտորական պարտքեր բյուջեի գծով	1,227,245	1,602,974	882,937
Այլ դեբիտորական պարտքեր	6,042	9,069	6,987
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	133,726	123,388	673,209
Այլ ընթացիկ ակտիվներ	603,557	136,113	15,639
	5,979,372	6,116,775	4,407,509

Թողարկողի ընթացիկ ակտիվները 01.01.2005թ., 01.01.2006թ. և 01.01.2007թ. դրությամբ կազմում են ընդհանուր ակտիվների համապատասխանաբար շուրջ 44.2%, 52.5% և 33.4%-ը: 2006թ.-ին ընդհանուր ակտիվների կազմում ընթացիկ ակտիվների տեսակարար կշռի նվազումը պայմանավորված է ինչպես ընդհանուր ակտիվների աճով, այնպես էլ ոչ ընթացիկ ակտիվների կազմում հիմնական միջոցների զգալի աճով:

Պաշարների տեսակարար կշիռը Թողարկողի ընթացիկ ակտիվներում վերջին երեք տարիներին կայուն է եղել: Այսպես, 01.01.2007թ., 01.01.2006թ. և 01.01.2005թ. դրությամբ պաշարները կազմել են ընթացիկ ակտիվների համապատասխանաբար 47.7%, 46% և 47.9%-ը:

Ընթացիկ ակտիվների կազմում զգալի տեսակարար կշիռ են կազմում նաև դեբիտորական պարտքերը: Մասնավորապես՝ 01.01.2007թ., 01.01.2006թ. և 01.01.2005թ. դրությամբ դեբիտորական պարտքերը կազմել են ընթացիկ ակտիվների համապատասխանաբար 39.9%, 49.8% և 36.4%-ը: 01.01.2006թ. դրությամբ դեբիտորական պարտքերի մեծ տեսակարար կշիռը հիմնականում պայմանավորված է բյուջեի գծով դեբիտորական պարտքի համեմատաբար մեծ ծավալով: 01.01.2007թ.-ին նախորդ տարվա համեմատ զգալիորեն ավելացել է վաճառքների գծով դեբիտորական պարտքը՝ մոտ 111.4%-ով:

բ) Վերջին երկու տարիներին Թողարկողի ընթացիկ ակտիվները և ընթացիկ պարտավորությունները էապես չեն փոփոխվել, սակայն 01.01.2005թ. համեմատությամբ 01.01.2007թ. ընթացիկ ակտիվները և պարտավորություններն ավելացել են համապատասխանաբար 35.7% և 77.9%-ով:

Ստորև ներկայացվում է ընթացիկ ակտիվների և ընթացիկ պարտավորությունների հարաբերակցությունը՝ վերջին երեք տարիների համար:

Աղյուսակ 5. Թողարկողի ընթացիկ ակտիվների և պարտավորությունների դինամիկան

	01.01.2007	01.01.2006	01.01.2005
Ընթացիկ ակտիվներ	5,979,372	6,116,775	4,407,509
Ընթացիկ պարտավորություններ	3,977,890	3,983,115	2,236,190
Ընթացիկ ակտիվներ/ Ընթացիկ պարտավորություններ	**1.50**	**1.54**	**1.97**

01.01.2007թ. դրությամբ Թողարկողի ընթացիկ ակտիվները նախորդ տարվա համեմատությամբ նվազել են 137,403 հազ. ՀՀ դրամով: Փոփոխությունն, այնուհանդերձ, էական չէ՝ շուրջ 2.2%:

Ընթացիկ ակտիվների, այդ թվում՝ նրա առանձին տարրերի միտումների վերաբերյալ վերլուծությունը ներկայացված է նախորդ բաժնում:
Ընթացիկ պարտավորությունների վերաբերյալ վերլուծությունը ներկայացված է հաջորդ բաժնում:

գ) Թողարկողի պարտավորություններն իրենցից ներկայացնում են ընթացիկ և ոչ ընթացիկ պարտավորությունների ամբողջությունը: 01.01.2007թ., 01.01.2006թ. և 01.01.2005թ. դրությամբ Թողարկողի ընդհանուր պարտավորությունները կազմել են ակտիվների համապատասխանաբար 24.5%, 38.5% և 27.9%-ը: 01.01.2006թ. համեմատությամբ 01.01.2007թ.-ին պարտավորությունների տեսակարար կշռի նվազումը հիմնականում պայմանավորված է հիմնական միջոցների վերագնահատումից առաջացած դրական տարբերությամբ:

Ոչ ընթացիկ պարտավորություններ
Թողարկողի ոչ ընթացիկ պարտավորությունները վերջին երեք տարիներին ցուցաբերել են նվազման միտում: Մասնավորապես՝ 01.01.2007թ., 01.01.2006թ. և 01.01.2005թ. դրությամբ դրանք կազմել են ընդհանուր պարտավորությունների համապատասխանաբար 9.2%, 11.2% և 19.8%-ը: Ստորև ներկայացված է Թողարկողի ոչ ընթացիկ պարտավորությունների կառուցվածքը:

Աղյուսակ 6. Թողարկողի ոչ ընթացիկ պարտավորությունների կառուցվածքը

	01.01.2007	01.01.2006	01.01.2005
Հետաձգված հարկային պարտավորություններ	324,648	501,036	550,543
Ակտիվներին վերաբերող շնորհներ	78,973	-	-
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ	**403,621**	**501,036**	**550,543**

Ընթացիկ պարտավորություններ
Թողարկողի պարտավորությունների կազմում գերակշռում են ընթացիկ պարտավորությունները: Այսպես, ընթացիկ պարտավորությունները 01.01.2007թ., 01.01.2006թ. և 01.01.2005թ. դրությամբ կազմել են ընդհանուր պարտավորությունների համապատասխանաբար 90.8%, 88.8% և 80.2%-ը: Ստորև ներկայացված է Թողարկողի ընթացիկ պարտավորությունների կառուցվածքը:

Աղյուսակ 7. Թողարկողի ընթացիկ պարտավորությունների կառուցվածքը

	01.01.2007	%	01.01.2006	%	01.01.2005	%
Կարճաժամկետ բանկային վարկեր	1,650,340	*41.5%*	1,595,915	*40.1%*	1,131,106	*50.6%*
Կրեդիտորական պարտքեր գնումների գծով	2,045,662	*51.4%*	1,360,225	*34.1%*	681,499	*30.5%*
Ստացված ընթացիկ կանխավճարներ	89,874	*2.3%*	935,956	*23.5%*	36,484	*1.6%*
Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր բյուջեին	70,336	*1.8%*	22,449	*0.6%*	236,506	*10.6%*
Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր պարտադիր սոց. ապ. գծով	32,400	*0.8%*	10	*0.0%*	5,609	*0.3%*
Կրեդիտորական պարտքեր աշխատավարձի և աշխ. այլ	69,045	*1.7%*	50,535	*1.3%*	42,388	*1.9%*

կարճաժամկետ հատուցումների գծով						
Այլ կրեդիտորական պարտքեր	20,233	*0.5%*	18,025	*0.5%*	17,019	*0.8%*
Այլ ընթացիկ պարտավորություններ				*0.0%*	85,579	*3.8%*
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ	**3,977,890**	***100%***	**3,983,115**	***100%***	**2,236,190**	***100%***

Ընթացիկ պարտավորությունների կազմում մեծ տեսակարար կշիռ ունեն կարճաժամկետ բանկային վարկերը և գնումների գծով կրեդիտորական պարտքերը:
Կարճաժամկետ բանկային վարկերն իրենցից ներկայացնում են Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի հետ 2002 թվականին կնքված վրակային պայմանագրով տրամադրված գումարները, որոնց նկատմամբ կիրառվել է LIBOR-ի հետ կապակցված լողացող տոկոսադրույք: Նշված վարկը 2007թ. առաջին եռամսյակում ամբողջությամբ մարվել է:

Առանձին հարկատեսակների գծով կրեդիտորական պարտքերը բյուջեին 2004-2006թթ. եղել են հետևյալը.

Աղյուսակ 8. Թողարկողի՝ բյուջեի նկատմամբ ունեցած պարտավորությունների դինամիկան

Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր բյուջեին	**01.01.07թ.**	**%**	**01.01.06թ.**	**%**	**01.01.05թ.**	**%**
Շահութահարկ					206,040	87.1%
Եկամտահարկ	11,200	15.9%			15,293	6.5%
Գույքահարկ					3,807	1.6%
Հողի հարկ					25	0.0%
Տույժեր	9,101	12.9%				
Տուգանքներ	17,784	25.3%				
Բնապահպանական վճարներ	30,398	43.2%	21,145	94.2%	10,745	4.5%
Բնօգտագործման վճարներ	1,853	2.6%	1,304	5.8%	596	0.3%
Ընդամենը	**70,336**	100%	**22,449**	100%	**236,506**	100%

Կրեդիտորական պարտքերի մարումը հիմնականում նախատեսվում է իրականացնել համապատասխան պայմանագրերով սահմանված ժամկետներում:

դ) 2007թ-ին Թողարկողի իրականացրած բյուջետավորման գործընթացի արդյունքներով նախատեսվել են մոտ 3.3 մլն ԱՄՆ դոլարի կապիտալ ծախսեր, որոնք հիմնականում ուղղվելու են հորատման աշխատանքներին, Ալավերդու հանքում և ֆաբրիկայում արտադրական հզորությունների գործարկմանը, ինչպես նաև սարքավորումների ձեռքբերմանը:

2007թ. հունվար-հունիս ամիսներին, արդեն իսկ կատարվել են մոտ 838.2 մլն դրամի կապիտալ ծախսեր (որը կազմում է նախատեսված ծախսերի մոտ 70%-ը): Կապիտալ ծախսերի ֆինանսավորման աղբյուր է հանդիսանալու Թողարկողի շահույթը: Ստորև բերված աղյուսակում ներկայացված է 2007թ. բյուջետավորման գործընթացի արդյունքում ամրագրված կապիտալ ծախսերի կառուցվածքը:

Աղյուսակ 9. Թողարկողի կապիտալ ծախսերի կառուցվածքը

Ներդրումային ուղղություն	**Գումար, հազ. ԱՄՆ դոլար** [3]	**%**
Հորատման աշխատանքներ	1,445	43.6%
Ալավերդու հանքի կապիտալ ծախսեր	1,400	42.2%
Անալիզներ	85	2.5%

[3] Բյուջետային քննարկումներում ամրագրվել է 1 ԱՄՆ դոլարի դիմաց 360 դրամ փոխարժեք:

Ներդրումային ուղղություն	Գումար, հազ. ԱՄՆ դոլար [3]	%
Նախագծային աշխատանքներ	68	2.1%
Շինարարական աշխատանքներ	61	1.8%
Ալավերդու ֆաբրիկայի կապիտալ ծախսեր	60	1.8%
Գիտահետազոտական աշխատանքներ	31	1.0%
Այլ կապիտալ ծախսեր	165	5.0%
Ընդամենը կապիտալ ծախսեր	**3,315**	**100.0%**

Սեփական կապիտալի և պարտավորությունների միջև էական փոփոխություններ չեն կանխատեսվում:

ե) Թողարկողի գործունեության արդյունքների վերաբերյալ ամփոփ տվյալները ներկայացված են հաջորդ աղյուսակում.

Աղյուսակ 10. Թողարկողի հիմնական ֆինանսական ցուցանիշները

	2006թ.	2005թ.	2004թ.
Արտադրանքի,ապրանքների, աշխատանքների և ծառայությունների իրացումից հասույթ	32,073,155	21,719,302	19,571,587
Համախառն շահույթ (վնաս)	2,780,325	2,298,638	3,850,896
Գործառնական շահույթ(վնաս)	1,253,703	625,822	2,966,009
Զուտ շահույթ(վնաս) նախքան շահութահարկի գծով ծախսի նվազեցումը	2,316,716	91,027	2,861,997
Զուտ շահույթ(վնաս) շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո	**2,376,457**	**(31,005)**	**2,566,825**

Ցուցանիշների վերլուծությունը ցույց է տալիս, որ չնայած նշված ժամանակահատվածում Թողարկողի իրացումից հասույթը ցուցաբերել է կայուն աճի միտում՝ 2006թ.-ին և 2005թ.-ին 2004թ.-ի նկատմամբ ավելանալով համապատասխանաբար 63.9%-ով և 10.9%-ով, սակայն 2005 թվականին Թողարկողը վնասով է աշխատել: Վնասի առաջացումը պայմանավորված է եղել Թողարկողի ոչ բնականոն կորուստներ առաջացրած գործոններով:

Ինչ վերաբերվում է 2005 և 2006 թվականներին գործառնական շահույթի և զուտ շահույթի միջև առկա զգալի տարբերություններին, ապա պետք է նշել, որ դա պայմանավորված է նշված ժամանակահատվածում այլ ոչ գործառնական գործունեությունից ստացված արդյունքով: Մասնավորապես՝ 2006 թվականին դրա զգալի մասը պայմանավորված է ոչ ընթացիկ նյութական ակտիվների և ոչ նյութական ակտիվների վերաչափումից և արտարժույթի փոխարժեքային տարբերություններից ստացված շահույթով, որը կազմել է համապատասխանաբար 641,321 հազ. ՀՀ դրամ և 768,985 հազ. ՀՀ դրամ: Մինչդեռ 2005 թվականին ոչ ընթացիկ նյութական ակտիվների և ոչ նյութական ակտիվների վերաչափումից առաջացել է բացասական տարբերություն՝ 607,687 հազ. ՀՀ դրամի չափով, իսկ արտարժույթի փոխարժեքային տարբերություններից ստացված շահույթը կազմել է 113,864 հազ. ՀՀ դրամ:

զ) 2006 թվականին Թողարկողի հասույթի ծավալը կազմել է 32,073.1 մլն դրամ և 2005 թվականի տարեկան հասույթի (21,719.3 մլն դրամ) համեմատությամբ աճել է շուրջ 47.7%-ով, իսկ 2004 թվականի հասույթի (19,571.6 մլն դրամ) համեմատությամբ՝ շուրջ 63.9%-ով: Հասույթի նման աճը պայմանավորված է համաշխարհային շուկայում պղնձի գների աճով:

է) Քանի որ Թողարկողը անզուտ պղնձի իրացումը կազմակերպում է արտաքին շուկաներում, ուստի պետք է փաստել, որ համաշխարհային շուկայում գների փոփոխությունն ուղղակիորեն ազդում է Թողարկողի հասույթի ծավալների վրա: Համաշխարհային շուկայում գների միտումները մանրամասնորեն ներկայացված են Թողարկողի գործունեության նկարագրի մասում: Ինչ վերաբերվում է Թողարկողի հասույթի ու եկամտի վրա սղաճի ազդեցությանը, ապա այն էական չէ:

ը) 01.04.2007թ. և 01.07.2007թ. դրությամբ Թողարկողի հաշվապահական հաշվեկշիռն ունի հետևյալ տեսքը,

Աղյուսակ 11. Թողարկողի հաշվապահական հաշվեկշիռը 2007թ. I և II եռամսյակներին

	01.04.2007թ.	%-ային փոփոխ. 01.01.2007թ.	01.07.2007թ.	%-ային փոփոխ. 01.01.2007թ.
Ոչ ընթացիկ ակտիվներ	12,591,236	5.6%	12,937,769	8.5%
Ընթացիկ ակտիվներ	5,761,019	-3.7%	7,617,830	27.4%
Ընդամենը ակտիվներ	**18,352,255**	**2.5%**	**20,555,599**	**14.8%**
Սեփական կապիտալ	**14,078,796**	**4.2%**	**16,353,210**	**21.0%**
Ոչ ընթացիկ պարտավորություններ	726,433	80.0%	862,155	113.6%
Ընթացիկ պարտավորություններ	3,547,026	-10.8%	3,340,234	-17.0%
Ընդամենը պարտավորություններ	**4,273,459**	**-2.5%**	**4,202,389**	**-4.1%**

2007թ. առաջին և երկրորդ եռամսյակի ֆինանսական արդյունքները հետևյալն են.

Աղյուսակ 12. Թողարկողի 2007թ. առաջին երկու եռամսյակների հիմնական ֆինանսական ցուցանիշները

	01.04.2007թ.	01.07.2007թ.
Հասույթ	3,938,706	6,836,769
Համախառն շահույթ	851,679	2,621,004
Զուտ շահույթ	498,542	2,274,414

Ցուցանիշների վերլուծությունը ցույց է տալիս, որ 01.07.2007թ. դրությամբ Թողարկողի ակտիվների 01.01.2007թ. համեմատությամբ էական փոփոխություններ են կրել ինչպես ոչ ընթացիկ (8.5% աճ), այնպես էլ ընթացիկ ակտիվների (27.4% աճ) ուղղությամբ: Ոչ ընթացիկ ակտիվների փոփոխությունը հիմնականում պայմանավորված է այլ ոչ ընթացիկ ակտիվների աճով, իսկ ընթացիկ ակտիվների աճը՝ բյուջեի գծով կարճաժամկետ դեբիտորական պարտքերի աճով: Ավելին, էական փոփոխություններ են կատարվել պարտավորությունների կառուցվածքում: Այսպես, ոչ ընթացիկ պարտավորությունների կազմում երկարաժամկետ բանկային վարկեր և փոխառություններ հոդվածը աճել է 113%-ով՝ շուրջ 458.5 մլն ՀՀ դրամի չափով, որը պայմանավորված է եղել այդ ժամանակահատվածում առևտրային բանկերից երկարաժամկետ վարկերի ստացմամբ: Թողարկողի ընթացիկ պարտավորությունները նույն ժամակահատվածում նվազել են շուրջ 17%-ով: Դա հիմնականում պայմանավորված է եղել Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի կողմից տրամադրված վարկի ամբողջ ծավալի մարմամբ և նոր կարճաժամկետ փոխառությունների ներգրավմամբ (321,273 հազ. դրամի չափով բանկային վարկ և 851,087 հազ. դրամ փոխառություններ ձեռք բերելու միջոցով):
Ընթացիկ իրացվելիության ցուցանիշը 01.07.2007թ. դրությամբ կազմում է 2.28:
Ինչ վերաբերվում է սեփական կապիտալի փոփոխությանը (21%-ի աճին), ապա այն պայմանավորված է եղել Թողարկողի կողմից նշված ժամանակահատվածում ստացած զուտ շահույթով, որը կազմել է 2,274,414 հազ. դրամ:

(զ) Աուդիտորների հետ հաշվապահական հաշվառման և ֆինանսական տեղեկատվության բացահայտման հետ կապված անհամաձայնություններ չեն եղել:

Մենք՝ սույն վերլուծությունը կատարող Թողարկողի տնօրեն Գ.Արզումանյանը և գլխավոր հաշվապահ Հ.Հարությունյանը, տալիս ենք մեր համաձայնությունը, որպեսզի այս վերլուծությունն օգտագործվի հայտարարագրի մեջ, որի համար ստորագրում ենք՝

«Արմենիան Քափըր Փրոգրամ» ՓԲԸ
Տնօրեն՝ Գագիկ Արզումանյան

Գլխավոր հաշվապահ՝ Համլետ Հարությունյան

29.08.2007թ.

9. Տեղեկություններ թողարկողի գործունեության վերաբերյալ

9.1 Թողարկողի գործունեության նկարագրությունը.

9.1.1. Թողարկողի կողմից իրականացվող գործունեությունը հիմնականում ներառում է հետևյալ ոլորտները.

1) պղնձի խտանյութի վերամշակում և անզուտ պղնձի արտադրություն և իրացում,
2) պղնձի հանքաքարի արդյունահանում և վերամշակում:

Անզուտ պղնձի արտադրության և իրացման բնագավառում Թողարկողի ներկա արտադրական կարողությունները թույլ են տալիս վերամշակել տարեկան մոտ 50 հազ. տոննա խտանյութ և արտադրել մինչև 9000 տոննա անզուտ պղինձ (անզուտ պղնձի արտադրության ծավալը կախված է վերամշակվող խտանյութի մեջ պղնձի պարունակությունից, ինչը ներկայումս, կախված մատակարարներից, տատանվում է 14%-ից մինչև 28%-ի սահմաններում): Պղնձի խտանյութի վերամշակումն իրականացվում է Ալավերդու պղնձաձուլական գործարանում: Արտադրված անզուտ պղինձն ամբողջությամբ իրացվում է եվրոպական շուկաներում:

Ալավերդու հանքավայրից հանքաքարի արդյունահանումը և վերամշակումը Թողարկողը վերսկսել է 2007 թվականին: Տարվա ընթացքում նախատեսվում է արդյունահանել և վերամշակել մինչև 52 հազ. տոննա հանքաքար: Իսկ 2008 թվականին արդեն նախատեսվում է արդյունահանել մինչև 85 հազ. տոննա ծավալով վերամշակվող հանքաքար:

Թողարկողի կողմից իրականացվող գործունեության հիմնական ոլորտները Հայաստանի տնտեսության ավանդական ճյուղերից են և ունեն հարյուրավոր տարիների պատմություն, մասնավորապես՝ Թողարկողին պատկանող՝ Ալավերդի քաղաքում տեղակայված պղնձաձուլական գործարանն ունի ավելի քան 235 տարվա պատմություն:

Թողարկողի կողմից իրականացվող գործունեության հիմնական ոլորտների զարգացման միտումները հետևյալն են.

Համաշխարհային շուկաներում մետալուրգիական գործունեությամբ զբաղվող ընկերությունների ծառայությունների պայմանները (վերամշակման և զտման սակագները) վերջին տասնամյակի ընթացքում անկման միտումներ են գրանցել: Հայաստանում դա նույնպես անդրադարձել է Թողարկողի գործունեության այդ հատվածի վրա: Մյուս կողմից, թանկացման միտումներ են արձանագրում էներգակիրները, որոնք այս պարագայում կարևոր արտադրական գործոն են: Անորոշ են բնապահպանական խնդիրների լուծման հնարավորությունները: Ներկա բնապահպանական տեխնոլոգիաները տնտեսապես արդյունավետ են այնպիսի արտադրական մասշտաբների դեպքում, որոնք տասնյակ անգամ գերազանցում են Թողարկողի մետալուրգիական գործունեության ներկա ծավալը:

Ինչ վերաբերվում է հանքաքարի արդյունահանման և վերամշակման ոլորտին, ապա պետք է նշել, որ համաշխարհային շուկաներում մետաղների գների միտումները բարենպաստ են ոլորտում ներդրումների և արտադրության ընդլայնման համար: Վերջին 3 տարիների ընթացքում պղնձի գները միջազգային շուկաներում աճել են ավելի քան 2 անգամ: Դա նոր հնարավորություններ և հեռանկարներ է բացում Թողարկողի հանքարդյունաբերական գործունեության համար, հաշվի առնելով նաև հանրապետությունում մեծությամբ երկրորդ՝ Թեղուտի հանքավայրի շահագործման իրավունքների առկայությունը:

Թողարկողն անզուտ պղնձի արտադրության ոլորտում տարածաշրջանում մրցակիցներ չունի: Այն տարածաշրջանում միակ ընկերությունն է, որը զբաղվում է պղնձի խտանյութի վերամշակմամբ և անզուտ պղնձի արտադրությամբ:

Պղնձի հանքաքարի արդյունահանման ծավալներով Թողարկողը հանրապետությունում մեծ կշիռ չունի: 2007 թվականի ընթացքում նախատեսվում է արդյունահանել մինչև 50 հազ. տոննա հանքաքար, կամ մոտ 870 տոննա պղինձ, երբ ՀՀ-ում արտադրվում է մոտ 20 հազ. տոննա պղինձ խտանյութում:

9.1.2. Թողարկողի կողմից ներկայացվող արտադրանքն ամբողջությամբ իրացվում է արտաքին շուկաներում: Թողարկվող արտադրանքը՝ անզուտ պղինձն իրացվում է համաշխարհային շուկայում բարձր համբավ ունեցող գերմանական Norddeutsche Affinerie AG ընկերությանը: Նշված ընկերության և Թողարկողի միջև 2006 թվականին կնքված պայմանագրքով արդեն իսկ համաձայնություն է ձեռք բերվել 2007 և 2008 թվականներին արտադրվող անզուտ պղնձի իրացման վերաբերյալ: Առաքումն իրականացվում է լոտերով (մոտ 330 մետրիկ տոննա ծավալով): Խտանյութի մատակարարումն իրականացվում է DES Համբուրգի նավահանգիստ պայմանով՝ համաձայն ԻՆԿՈՏԵՐՄՍ 2000-ի պայմանների:

Թողարկողի կողմից առաջարկվող պղնձի արտադրանքի տարեկան ծավալը (մինչև 9 հազ. տոննա) չափազանց փոքր տեսակարար կշիռ ունի միջազգային շուկաներում նույն արտադրանքի առևտրի ծավալների համեմատությամբ, և այդ իմաստով Թողարկողը գործնականում իրացման շուկաների խնդիր ունենալ չի կարող:

Վերջին տարիներին այս ոլորտում համաշխարհային շուկաների հիմնական միտումները հետևյալն են.

- 2006թ.-ին 2005թ. համեմատ տեղի է ունեցել մետաղների գների էական աճ[4] (ընդ որում՝ առավել մեծ չափով աճել են պղնձի գները),
- նկատվում է հանքարդյունահանողների կողմից արտադրական հզորությունների ընդլայնում,
- մետաղածուլական գործունեությամբ զբաղվողների շահույթի մարժան նվազում է, մասնավորապես, եթե նախկինում վերամշակողին մնում էր պղնձի արժեքի մոտ 50%-ը, ապա այժմ՝ մոտ 15%-ը,
- համաշխարհային շուկայում նոր հիմնադրվող արտադրությունների համար նվազագույն արտադրական հզորություն է համարվում տարեկան 200,000 տոննա պղնձի վերամշակումը:

Ստորև ներկայացվում է Լոնդոնի մետաղների բորսայում պղնձի գների միտումները 2006-2007թթ. (գները ներկայացված են 1 ֆունտի կտրվածքով).



Աղբյուրը՝ www.DollarDaze.org

9.1.3. Ինչպես արդեն նշվեց, Թողարկողն իր արտադրանքն իրացնում է արտաքին շուկաներում՝ մեկ գնորդի, որի հետ 2007-2008թթ. համար Թողարկողը կնքել է իրացման պայմանագիր, ինչն էլ երաշխավորում է Թողարկողի ողջ արտադրանքի իրացումը: Գնորդի հետ տարիների ընթացքում ձևավորված հուսալի առևտրային հարաբերությունները փաստում են, որ Թողարկողն առաջիկա տարիներին իրացման շուկաների խնդիր ունենալ չի կարող:

Այնուամենայնիվ, Թողարկողի կողմից ներկայացվող արտադրանքի բնույթն այնպիսին է, որ անհրաժեշտության դեպքում որևէ նոր գնորդի հետ կարճաժամկետ հատվածում նոր առևտրային

[4] 2005թ. մետաղների միջին տարեկան գները հետևյալն էին՝ սեւ պղինձ՝ 3979 ԱՄՆ դոլար (մետրիկ տոննա), ոսկի՝ 445 ԱՄՆ դոլար (տրոյական ունցիա), արծաթ՝ 7.3 ԱՄՆ դոլար (տրոյական ունցիա): 2006թ. ընթացքում արձանագրվել է մետաղների տարեկան միջին գների կտրուկ աճ՝ սեւ պղինձ՝ 6722 ԱՄՆ դոլար (մետրիկ տոննա), ոսկի՝ 604 ԱՄՆ դոլար (տրոյական ունցիա), արծաթ՝ 11.6 ԱՄՆ դոլար (տրոյական ունցիա):

հարաբերությունների հաստատումը խնդիր չի ներկայացնում: Ընդհանուր առմամբ, Թողարկողն արտադրանքի իրացման որևէ խնդրի չի հանդիպում, այլ սահմանափակված է միայն արտադրական հնարավորություններով:

Թողարկողի կողմից ներկայումս առկա բնապահպանական խնդիրների լուծման նպատակով դիտարկվում են նոր տեխնոլոգիաների ներդրման հնարավորությունները: Այս առումով հարկ է նշել, որ պղծի խտանյութ վերամշակող ժամանակակից տեխնոլոգիաները թույլ են տալիս լուծել բնապահպանական խնդիրը, սակայն նախագծված են նվազագույնը 80 հազ. տոննա անզուտ պղնձի արտադրության համար: Հայաստանում պղնձի համապատասխան արտադրության դեպքում, մասնավորապես՝ Թեղուտի հանքավայրի շահագործումից հետո (ինչը թույլ կտա լուծել հումքի ապահովման խնդիրը) հնարավոր կլինի դիտարկել նաև Հայաստանում նման գործարանի կառուցման հեռանկարները:

9.1.4. Արժեթղթերը գրանցման ներկայացնելու պահին նախորդող 3 ֆինանսական տարիներից յուրաքանչյուրի ընթացքում Թողարկողի եկամտի 10 տոկոսից ավելին ապահովվել է պղնձի խտանյութի վերամշակման, անզուտ պղնձի արտադրության և իրացման գործունեությունից: Ստորև ներկայացված է Թողարկողի արտադրության իրացման ծավալները:

Թողարկողի գործունեությունը բնութագրող ցուցանիշներ			
	2004թ.	2005թ.	2006թ.
Անզուտ պղնձի արտադրություն (տ)	9,375	9,801	8,784
Անզուտ պղնձի արտահանում (տ)	9,219	9,781	8,610
Հասույթը (մլն դրամ)	**19,571**	**21,719**	**32,073**

Թողարկողը չի զբաղվում սեզոնային բնույթ ունեցող գործունեության տեսակներով:

9.1.5. Թողարկողի արտադրանքի իրացման գործընթացում ներգրավված չեն միջնորդ կազմակերպություններ:

Թողարկողի արտադրանքը հումքային ապրանք է, որի նկատմամբ պահանջարկը միջազգային շուկայում ունի ավելացման միտումներ: Հաշվի առնելով բորսայական գների հնարավոր տատանումները՝ գնային ռիսկերից խուսափելու նպատակով Թողարկողը գնորդի և մատակարարների հետ երկարաժամկետ պայմանագրեր է կնքում, որոնք թույլ են տալիս համապատասխանեցնել գնորոշման ժամանակաշրջանները: Գնորդի դեպքում վճարման պայմանները սահմանվում են հետևյալ հիմնական կետերով՝

- գնորդն իրականացնում է նախնական արժեքի 95%-ի չափով կանխավճար՝ առաքմանը հաջորդող 3 բանկային օրվա ընթացքում,
- գնորոշման ժամանակաշրջան է համարվում ապրանքի նավահանգիստ հասնելու հաջորդող ամսվա միջին բորսայական գինը, որի հիման վրա կնքվում է վերջնահաշվարկի ակտը:

Մատակարարների հետ պայմանագրերը ներառում են հետևյալ կետերը՝

- մատակարարված խտանյութի դիմաց իրականացվում է վճարում՝ նախնական հաշիվների հիման վրա,
- գնորոշման ժամանակաշրջան է համարվում ամսական խմբաքանակի մատակարարման ամսվան հաջորդող մինչև չորրորդ ամիսը, որի հիման վրա կնքվում է վերջնահաշվարկի ակտը:

Արտադրանքի արտահանման տրանսպորտային սխեման հետևյալն է. անզուտ պղինձը երկաթուղային տրանսպորտով Ալավերդուց տեղափոխվում է Փոթիի նավահանգիստ, որտեղից էլ ծովային փոխադրումով առաքվում Համբուրգ՝ գնորդ կազմակերպությանը:

Ստորև ներկայացվում է Թողարկողի ապրանքաշրջանառության նկարագիրը.



9.1.6. Գերմանական Norddeutsche Affinerie AG ընկերության կողմից գնվում է Թողարկողի կողմից արտադրվող ամբողջ արտադրանքը: Վերջին երեք տարիներին իրացման ընդհանուր ծավալում այդ ընկերության մասնաբաժինը կազմել է 100%:

9.1.7. ՀՀ-ում և տարածաշրջանում Թողարկողը մրցակիցներ չունի: Իսկ համաշխարհային շուկայում Թողարկողի կողմից առաջարկվող արտադրանքի ծավալներն աննշան են նույն ոլորտում գործող այլ կազմակերպությունների կողմից առաջարկվող արտադրանքի ծավալների համեմատությամբ:

Ինչ վերաբերվում է պղնձի հանքաքարի արդյունահանմանը, Թողարկողին որպես մրցակիցներ կարելի է դիտարկել «Բեյզ Մեթըլս» ՓԲԸ-ին, «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ի, «Ախթալայի ԼՀԿ» ՓԲԸ-ին: Պղնձի հանքաքարի հիմնական արդյունահանողներ են համարվում ծավալները «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ն (որին մոտավոր գնահատականներով բաժին է ընկնում պղնձի հանքաքարի արդյունահանման մոտ 70%-ը) և «Բեյզ Մեթըլս» ՓԲԸ-ն (որին բաժին է ընկնում պղնձի հանքաքարի արդյունահանման մոտ 20%-ը):

Թողարկողի կողմից կիրառվող մրցակցային հիմնական մեթոդների մանրամասն նկարագրությունը տրված է սույն բաժնի 9.1.5 կետում:

9.1.7. Թողարկողի կողմից արտադրվող արտադրանքի՝ անզուտ պղնձի համար հումք է հանդիսանում պղնձի խտանյութը, որը Թողարկողը հիմնականում ձեռք է բերում «Բեյզ Մեթըլս» ՓԲԸ-ից և «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ից: Նշված ընկերությունների մասնաբաժինները մատակարարումների ընդհանուր ծավալում 2006թ. տվյալներով համապատասխանաբար կազմել են 47% և 46%:

Թողարկողի կողմից ձեռք բերվող պղնձի խտանյութի գինը կախված է մետաղների համաշխարհային բորսայական գներից: Մատակարարումների ամսական միավորների քանակ համապատասխան պայմանագրերով ամրագրված չէ, սակայն սահմանված է խտանյութի մատակարարման տարեկան ծավալ: Մատակարարումների խմբաքանակի դիմաց վճարումն իրականացվում է վերջնահաշվարկի ակտի հիման վրա, իսկ մինչ այդ կատարվում է նախնական վճարում ապրանքագրի ներկայացումից հետո մինչև 15 բանկային օրվա ընթացքում:

Ներմուծման հիման վրա մատակարարումներն ընդհանուր մատակարարումների կազմում նշանակալի տեսակարար կշիռ չունեն:

Մոտ ապագայում Թողարկողը չի կանխատեսում մատակարարումների որևէ խափանում:

9.1.8. Թողարկողի կողմից արտադրվող անզուտ պղինձն ամբողջությամբ արտահանվում է և Թողարկողի մոտ առաջանում են վճարած ավելացված արժեքի հարկի գումարները պետական բյուջեից ետ ստանալու պահանջներ: ԱԱՀ-ի գումարների վերադարձի ներկա ընթացքը ցույց է տալիս, որ սա այն հիմնական հարցն է, որտեղ պետությունը կարող է Թողարկողի գործունեության վրա ունենալ էական ազդեցություն (դրական կամ բացասական):

Անզուտ պղնձի արտադրությանը վերաբերող մասով պետությունը կարող է նաև էական ազդեցություն ունենալ բնապահպանական պահանջների, մասնավորապես՝ շրջակա միջավայր վնասակար նյութերի արտանետումների համար բնապահպանական պահանջների կարգավորման միջոցով:

Հարկ է նշել, որ Թողարկողը ՀՀ բնապահպանության նախարարությունից ստացել է թույլտվություն, որը սահմանում է օդային ավազան արտանետումների չափաքանակները և Թողարկողի բնապահպանական ծրագրով ամրագրված միջոցառումների ցանկն ու ժամանակացույցը: Այդ որոշումը գործում է մինչև 2010թ. հուլիս ամիսը:

9.1.9. Ստորև բերվող աղյուսակում ներկայացվում են նախորդ երեք ֆինանսական տարիներից յուրաքանչյուրի համար Թողարկողի կողմից հարկային պարտավորությունների դիմաց հաշվարկված և վճարված գումարները՝ ըստ առանձին տարիների և հարկատեսակների.

ՀՀ դրամ

Հարկատեսակը	2006թ.		2005թ.		2004թ.	
	Հաշվարկ-ված	Վճարված	Հաշվարկ-ված	Վճարված	Հաշվարկ-ված	Վճարված
Շահութահարկ	141,012,700	256,546,600	384,380,900	443,655,300	296,931,100	141,422,000
Եկամտահարկ	121,722,610	106,250,000	74,380,070	13,202,600	66,397,365	63,257,365
Գույքահարկ	3,251,100	7,320,000	2,983,800	10,493,800	16,606,700	12,384,900
Հողի հարկ	284,184	284,184	284,184	311,700	284,184	256,668
Սոց.ապ.	126,150,000	157,961,388	142,973,699	110,492,637	115,027,503	99,759,415
Բնապահպանու-թյան վճար	130,340,100	121,369,000	76,829,300	66,428,400	33,478,700	27,493,000
Բնօգտագործ-ման վճար	1,057,100	507,000	2,508,700	1,802,000	1,627,800	0.0
		Բյուջեի պարտքը Թողարկողի նկատմամբ		Բյուջեի պարտքը Թողարկողի նկատմամբ		Բյուջեի պարտքը Թողարկողի նկատմամբ
ԱԱՀ		3,128,904,125		3,820,053,000		5,397,347,228

Աղյուսակում նշված գումարները չեն ներառում հարկային մարմինների կողմից արձանագրված տույժերն ու տուգանքները: Դրանց վերաբերյալ ամբողջական տեղեկատվությունը ներկայացված է սույն գլխի 9.2 ենթակետում:

9.1.10. Թողարկողն օգտվում է «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 39 հոդվածով օտարերկյա ներդրումներով ընկերությունների համար սահմանված արտոնությունից, համաձայն որի՝ մինչև 2008թ. ֆինանսական տարվա վերջը Թողարկողի շահութահարկի գումարը նվազեցվում է 50%-ի չափով՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ 2000թ.-ին Թողարկողի կանոնադրական կապիտալում օտարերկրյա ներդրողների փաստացի կատարած ներդրման ընդհանուր արժեքը գերազանցում է 500 մլն դրամը:

9.2. Թողարկողի նկատմամբ Պետական մարմինների կողմից կիրառված պատասխանատվության միջոցների մասին տեղեկությունները՝

ՀՀ ԿԱ հարկային պետական ծառայության կողմից իրականացած ստուգման արդյունքում, որն ընդգրկել է 01.01.2002թ.-ից մինչև 31.03.2006թ. ընկած ժամանակահատվածը և նպատակ է ունեցել

ստուգել բյուջեի հետ փոխհարաբերությունների ճշտությունը, 2006թ. հոկտեմբերի 27-ին կազմվել է ստուգման ՍԱ/137437 ակտը, համաձայն որի Թողարկողի նկատմամբ կիրառվել են հետևյալ պատասխանատվության միջոցները.

հազ. դրամ

	Լրացուցիչ գանձման ենթակա հարկի գումար	Հաշվարկված օրական տույժեր	Հաշվարկված տուգանքի գումար
Շահութահարկի գծով	4,860.0	2,660.8	2,916.0
Ավելացված արժեքը հարկի գծով	16,914.5	-	8,457.2
Եկամտահարկի գծով	13,978.2	7,451.2	8,386.9
Ընդամենը	***35,752.7***	***10,112***	***19,760.1***

Այլ պետական մարմինների կողմից կիրառված պատասխանատվության միջոցների վերաբերյալ տեղեկությունները ներկայացված են ստորև բերված աղյուսակում.

N	Պատասխանատվության միջոց կիրառող պետական մարմինների անվանումները և հիմքերը	Հետևանքը
1.	**ՀՀ սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամի** կողմից 29.09.2004թ. թիվ 7976 հանձնարարականի համաձայն անցկացվել է ծրագրային ստուգում:	Ստուգման արդյունքում 29.10.2004թ. կազմվել է թիվ 7976 ակտը՝ Թողարկողից 319,400 (երեք հարյուր տասնինը հազար չորս հարյուր) ՀՀ դրամ տույժ գանձելու մասին:
2.	**ՀՀ աշխատանքի պետական տեսչության** կողմից ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 07.02.2006թ. թիվ 240 հանձնարարագրի հիման վրա 2006 թվականի փետրվարի 23-ից մինչև փետրվարի 28-ը անցկացվել է ծրագրային ստուգում, որի արդյունքում արձանագրվել է աշխատանքային ժամերի հաշվառման կարգի խախտում:	28.02.2006թ. թիվ 240 ստուգման ակտի հիման վրա Թողարկողե ենթարկվել է վարչական տույժի՝ 100,000 (հարյուր հազար) ՀՀ դրամ չափով:
3.	**ՀՀ Սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամի** կողմից 19.04.2006թ. թիվ 1010878 հանձնարարականի համաձայն անցկացվել է ծրագրային ստուգում:	Ստուգման արդյունքում 28.04.2006թ. կազմվել է թիվ 1010878 ակտը՝ Թողարկողից 301,400 (երեք հարյուր մեկ հազար չորս հարյուր) ՀՀ դրամ տույժ գանձելու մասին:
4.	Ռնապահպանական վճարների վճարման ժամկետների ուշացում:	Թողարկողը 30.09.2006թ. վճարել է 280,300 դրամի չափով տույժ:
5.	**ՀՀ աշխատանքի պետական տեսչության** կողմից ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 01.03.2007թ. թիվ 1072 հանձնարարագրի հիման վրա 2007 թվականի մարտի 5-ից մինչև մարտի 23-ը անցկացվել է ծրագրային ստուգում, որի արդյունքում արձանագրվել է գրանցամատյանների վարման կարգի խախտում:	30.03.2007թ. թիվ 128 որոշման հիման վրա Թողարկողը ենթարկվել է վարչական տույժի 100 000 (հարյուր հազար) ՀՀ դրամի չափով:

Թողարկողի նկատմամբ բոլոր պատասխանատվության միջոցները (տույժերն ու տուգանքները) ամբողջությամբ բավարարված (վճարված) են:

9.3. Թողարկողի մասնակցությամբ դատավարությունների վերաբերյալ տեղեկությունները.

N	Դատավարության հիմքը	Հետևանքը
2004 թվականի ընթացքում		
Ընդդեմ Թողարկողի		

N	Դատավարության հիմքը	Հետևանքը
1.	*«Ստատոր» արտադրական կոոպերատիվ՝ սերվիտուտի և վնասի հատուցման պահանջի մասին*	Թողնվել է առանց քննության՝ գործի քննության տեղի և ժամի մասին պատշաճ ծանուցված հայցվորի գործի քննությանը չներկայանալու պատճառով:
2.	*Ռուզաննա Մանյան՝ աշխատանքում վերականգնելու և հարկադիր պարապուրդի վճարման պահանջի մասին*	Վերականգնվել է աշխատանքում, հարկադիր պարապուրդի և կատարված ծախսերի հատուցման համար վճարվել է 49.000 (քառասունինը հազար) ՀՀ դրամ:
3.	*«Արդէներգո» արտադրական կոոպերատիվ՝ ք. Ալավերդի Սպանդարյան փող. 11 շենքի շրջակայքում հասարակության համար խիստ վտանգավոր գործունեության դադարեցման պահանջի մասին*	Դատարանի կողմից հայցը մերժվել է անհիմն լինելու պատճառաբանությամբ:
4.	*Գուրգեն Բաբաջանյան և մյուսներ՝ հավելավճարի և գիշերային ժամանակի վճարի պահանջի մասին, հայցագինը՝ 16.448.967 դրամ*	Հայցը մերժվել է անհիմն լինելու պատճառաբանությամբ:
5.	*«Բաբիտ» ՍՊԸ՝ Ալավերդու պղնձի հանքում կատարված լրահետախուզման աշխատանքների վրա ծախսված 105.703.500 դրամ գումարի հատուցման պահանջի մասին*	Թողնվել է առանց քննության՝ գործի քննության տեղի և ժամի մասին պատշաճ ծանուցված հայցվորի գործի քննությանը չներկայանալու պատճառով:
6.	*Հենրիկ Գալինյան՝ աշխատանքում վերականգնելու և հարկադիր պարապուրդի վճարման պահանջի մասին*	Հայցը մերժվել է անհիմն լինելու պատճառաբանությամբ:
7.	*Արարատ Միսկարյան և մյուսներ՝ աշխատանքում վերականգնելու և հարկադիր պարապուրդի վճարման պահանջի մասին*	Հայցը մերժվել է անհիմն լինելու պատճառաբանությամբ:
Թողարկողի կողմից հարուցված		
8.	*Ընդդեմ ՀՀ պետական ռեգիստրի և «Արմենիան Քափըր Փրոգրամ» ՓԲԸ արհեստակցական կազմակերպության՝ «Արմենիան Քափըր Փրոգրամ» ՓԲԸ արհեստակցական կազմակերպության պետական գրանցումն անվավեր ճանաչելու պահանջի մասին*	Գործի դատական քննության ընթացքում «Արմենիան Քափըր Փրոգրամ» ՓԲԸ արհեստակցական կազմակերպությունն օրենսդրությամբ սահմանված կարգով անվանափոխվել է, որից հետո հայցը թողնվել է առանց քննության:
2005 թվականի ընթացքում Թողարկողը որևէ դատավարության չի մասնակցել:		
2006 թվականի ընթացքում		
Ընդդեմ Թողարկողի		
9.	*«Ավիա-սերվիս» ՀՁ ՓԲԸ՝ 186731,35 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամի բռնագանձման պահանջի վերաբերյալ*	Հայցը բավարարվել է և «Ավիա-սերվիս» ՀՁ ՓԲԸ-ին վճարվել է 186,731.35 (մեկ հարյուր ութսունվեց հազար յոթ հարյուր երեսունմեկ ամբողջ 35/100) ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ:
10.	*«Հայկական Երկաթուղի» ՓԲԸ՝ փաստացի պահվող գույքի հաշվին 39.376.680 դրամի չափով պահանջները բավարարելու մասին*	Հայցը մերժվել է անհիմն և ոչ պատշաճ պատասխանողի դեմ հարուցված լինելու պատճառաբանությամբ: Գործով բերված վճռաբեկ բողոքով վճիռը բեկանվել է և ուղարկվել նոր քննության: Վերաքննիչ ատյանի դատավարության կարգով գործի քննության տեղի և ժամի մասին պատշաճ ծանուցված հայցվորի գործի քննությանը չներկայանալու պատճառով հայցը թողնվել է առանց քննության:
2007 թվականի ընթացքում		

N	Դատավարության հիմքը	Հետևանքը
Ընդդեմ Թողարկողի		
11.	*«Բաբիտ» ՍՊԸ՝ Ալավերդու պղնձի հանքում կատարված լրահետախուզման աշխատանքների վրա ծախսված 105.703.500 դրամ գումարի հատուցման պահանջի մասին*	Դեռևս 2004 թվականից գործի քննության տեղի և ժամի մասին պատշաճ ծանուցված հայցվորի գործի քննությանը չներկայանալու պատճառով առանց քննության թողնված գործի քննությունը հայցվորի դիմումի հիման վրա վերսկսվել է, սակայն նշանակված առաջին իսկ նիստին գործի քննության տեղի և ժամի մասին պատշաճ ծանուցված հայցվորի գործի քննությանը չներկայանալու պատճառով նորից թողնվել է առանց քննության:
Թողարկողի կողմից հարուցված		
12.	*Ընդդեմ ՀՀ ԿԱ ՀՊԾ խոշոր հարկ վճարողների հարկային տեսչության՝ պղնձի խտանյութի մատակարարման հարկային հաշիվներում առանձնացված և 01.11.2003-01.03.2004թթ. ժամանակահատվածում վերահաշվարկված 93.136.000 դրամ ԱԱՀ-ի դեբետագրված և պղնձի ջարդոնի ձեռք բերման հարկային հաշիվներում առանձնացված 263.302.000 դրամ ԱԱՀ-ի դեբետագրված գումարները, ընդհանուր 356.438.000 դրամ, վերադարձման կամ հաշվանցման ենթակա չհամարելու պատասխանողի անգործությունն օրենքին հակասող ճանաչելու պահանջի մասին*	Հիշյալ քաղ. գործի քննությունը դեռևս շարունակվում է, սակայն պետք է հիշատակել, որ նշված գործի վերաբերյալ դատարանի որոշումը որևէ պարտավորություն չի առաջացնելու Թողարկողի համար և որևէ կերպ բացասական ազդեցություն չի ունենա Թողարկողի գործունեության վրա:

9.4. Շրջակա միջավայրի աղտոտման հետ կապված խնդիրների, ինչպես նաև թողարկողի կապիտալ ներդրումների, ստացվող շահույթի և մրցակցության վրա օրենքով սահմանված նորմերի պահպանման ազդեցության վերաբերյալ տեղեկություններ:

Թողարկողի գործունեության արդյունքում արտանետումներ են առաջանում օդային ավազան և արտահոսքեր՝ ջրային ավազան: Օդային ավազան հիմնական արտանետումներն են անօրգանական փոշին (տարեկան մոտ 140տ) և ծծմբի անհիդրիդը (տարեկան մինչև 27,000 տ): Ջրային ավազանի աղտոտումը գոյանում է մետաղներ և SO4 պարունակող օգտագործվող ջրերի արտահոսքերի դեպքում (տարեկան մոտ 68,000 մ^3 ջուր):

Ալավերդու պղնձաձուլական գործարանի բնապահպանական ազդեցության նվազեցման նպատակով Թողարկողի կողմից նախատեսվում է մի շարք միջոցառումների իրականացում: Նախատեսվում է ներդնել գազերի թաց մաքրման համակարգ, գործարանում վերականգնման աշխատանքներ են իրականացվում երկու էլեկտրազատիչների վրա, որոնք նույնպես օգտագործվելու են գազերի մաքրման համակարգում: Հաջորդ քայլը՝ գազերի քիմիական մաքրման համակարգի ներդրումն է, որի արդյունքում կարելի է ակնկալել արտանետվող ծծմբային գազերի ծավալի նվազեցում մինչև 70 տոկոսով: Այս տարբերակի վերաբերյալ որոշակի վերլուծություններ Թողարկողին ներկայացվել են նաև արևմտյան փորձագետների կողմից:

Թողարկողի կողմից 2006թ.-ին վճարված բնապահպանական վճարները ներկայացված են ստորև.

Բնապահպանական վճարի անվանումը	Գումարը (դրամ)
Օդային ավազանի վնասակար նյութերի արտանետման համար բնապահպանական վճար	128,189,000
Ջրային ավազանի վնասակար նյութերի և միացությունների արտանետման համար բնապահպանական վճար	938,900
Մակերևութային ջրի օգտագործման համար	751,000

Բնապահպանության նախարարության որոշման համաձայն թույլատրելի չափաքանակները նվազելու են՝ ավելացնելով գազերի արտանետման բնապահպանական վճարների գումարը 2008թ. մոտ 10%-ով, իսկ 2009թ.՝ ներկա մակարդակի նկատմամբ մոտ 2 անգամ: Դա իր հերթին բացասաբար կանդրադառնա Թողարկողի շահույթի մակարդակի վրա:

9.5. Թողարկողի և իր փոխկապակցված անձանց միջև կնքված գործարքների վերաբերյալ տեղեկություններ.

1) Թողարկողը 18.02.2002թ. ոչ բնակելի տարածքի վարձակալության մասին թիվ 020218/1 պայմանագրով վարձակալել է ՀՀ, ք. Երևան, Խանջյան 19 հասցեում գտնվող շենքի նկուղի (320.20քմ), 1-ին (220.9քմ) և 3-րդ հարկերի (263քմ) տարածքները՝ իր հետ փոխկապակցված անձ հանդիսացող «Լեռնամետալուրգիայի ինստիտուտ» ՓԲԸ-ից: Ամսական վարձավճարի չափը մինչև 01.07.2002թ. կազմել է 723,934.5 ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ), իսկ 01.07.2002թ.-ից՝ 876,597.5 ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ): Վարձավճարի չափի փոփոխությունը պայմանավորված է եղել այն հանգամանքով, որ նկուղային հարկի տարածքի վարձավճարի հաշվարկումը սկսվել է 01.07.2002թ.-ից: Կողմերի համաձայնությամբ վարձավճարի չափը կարող է վերանայվել: Վարձավճարը վճարվում է յուրաքանչյուր ամսվա համար մինչև հաջորդող ամսվա 10-ը: Վարձավճարի վճարումն ուշացնելու դեպքում յուրաքանչյուր օրվա համար սահմանվում է տույժ՝ վճարվելիք գումարի 0.2%-ի չափով: Պայմանագիրը գործում է մինչև 2015 թվականի դեկտեմբերի 31-ը:

2) 01.01.2006թ. Թողարկողն իր փոխկապակցված անձ «Վալլեքս Մայնինգ» ՍՊԸ-ի հետ կնքել է քվարցային հանքաքարի մատակարարման մասին թիվ 060101/1 պայմանագիրը, համաձայն որի՝ «Վալլեքս Մայնինգ» ՍՊԸ-ն պարտավորվել է Թողարկողի սեփականությանը հանձնել խոշոր կտորներով ոսկի պարունակող քվարցային հանքաքար (առնվազն 6,000 ԹՄՏ): Պայմանագրով սահմանվում է ձեռք բերման գնի որոշման ժամանակահատված, համաձայն որի՝ յուրաքանչյուր ամսվա մատակարարված խմբաքանակի գնորոշման ժամանակահատված է համարվում հաջորդող երկրորդ կամ երրորդ ամիսը (գնորոշման ժամանակահատվածի ընտրությունը պատկանում է Թողարկողին), որի վերաբերյալ Թողարկողը ծանուցում է «Վալլեքս Մայնինգ» ՍՊԸ-ին՝ երկրորդ ամսվա վերջին օրացուցային օրվա ընթացքում: Յուրաքանչյուր ամսվա մատակարարված հանքաքարի գինը որոշվում է նրա կազմում ընդգրկված ոսկու՝ գնորոշման ժամանակահատվածում Լոնդոնի մետաղների բորսայի (LME) գնանշումների համաձայն: Մեկ ՉՄՏ հանքաքարի արժեքը որոշվում է որպես նրանում առկա ոսկու՝ պայմանագրով սահմանված կարգով որոշված գնի հանրագումարի և հանքաքարի զտման համար կատարված ծախսերի տարբերություն: Հաշվարկված գնին ավելացվում է ավելացված արժեքի հարկը՝ օրենսդրությամբ սահմանված չափով: Հանքաքարի մատակարարման խմբաքանակի դիմաց վճարումն իրականացվում է վերջնահաշվարկի ակտի հիման վրա, իսկ մինչ այդ կատարվում է նախնական վճարում հանքաքարի մատակարումից հետո 15 բանկային օրվա ընթացքում: Պայմանագիրը գործել է մինչև 31.12.2006թ.:

3) 04.01.2006թ. Թողարկողն իր փոխկապակցված անձ հանդիսացող «Լեռնամետալուրգիայի ինստիտուտ» ՓԲԸ-ի հետ կնքել է հորատման աշխատանքների կատարման մասին թիվ 060104 պայմանագիրը, համաձայն որի «Լեռնամետալուրգիայի ինստիտուտ» ՓԲԸ-ն պարտավորվել է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով Թողարկողի շահագործմանը տրամադրված՝ ՀՀ Լոռու մարզի Թեղուտ գյուղի հարևանությամբ գտնվող Թեղուտի պղնձամոլիբդենային հանքավայրում իրականացնել սյունակային հորատման աշխատանքներ և Թողարկողին հանձնել համապատասխան քանակի հորատհանուկ (հորատման աշխատանքների ընդհանուր ծավալը կազմել է մոտ 4500 մետր): Հորատանցքերի յուրաքանչյուր մետրի հորատման աշխատանքների իրականացման արժեքը 33,000 դրամ է: Վճարումներն իրականացվել են 2 փուլով՝ յուրաքանչյուր եռամսյակը մեկ: Պայմանագիրը գործել է մինչև 30.06.2006թ.:

4) 04.01.2006թ. Թողարկողն իր փոխկապակցված անձ հանդիսացող «Վալլեքս Մայնինգ» ՍՊԸ-ի հետ կնքել է արտադրության միջոցի ենթավարձակալության թիվ 060104/1 պայմանագիրը, համաձայն որի Թողարկողը «Վալլեքս Մայնինգ» ՍՊԸ-ին ենթավարձակալության է հանձնել «Գուգարքի ԳԵՌ» ՊՓԲԸ-ին պատկանող Փայտասղոցարանը՝ 10,000 դրամ ամսական վարձավճարով (ներառյալ ԱԱՀ): Պայմանագիրը գործել է մինչև 31.12.2006թ.:

5) 04.01.2006թ. Թողարկողն իր փոխկապակցված անձ հանդիսացող «Վալլեքս Մայնինգ» ՍՊԸ-ի հետ կնքել է տրանսպորտային միջոցների ենթավարձակալության թիվ 060104/3 պայմանագիրը,

համաձայն որի Թողարկողը «Վալլեքս Մայնինգ» ՍՊԸ-ին ենթավարձակալության է հանձնել «Գուգարքի ԳԵՈ» ՊՓԲԸ-ին պատկանող ՄԱԶ-5334 մակնիշի ավտոկռունկ, ՄԱԶ-5549 մակնիշի ինքնաթափ, ԱԴ-60/7-400 մակնիշի էլ. ագրեգատ՝ համապատասխանաբար 10,000, 10,000 և 6,000 (ընդհանուր՝ 26,000) դրամ ամսական վարձավճարով (ներառյալ ՀՀ օրենսդրությամբ սահմանված հարկերն ու պարտադիր վճարները): Պայմանագիրը գործել է մինչև 31.12.2006թ.:

6) 04.01.2006թ. Թողարկողն իր հետ փոխկապակցված անձ հանդիսացող «Վալլեքս Մայնինգ» ՍՊԸ-ի հետ կնքել է տրանսպորտային միջոցների ենթավարձակալության թիվ 060104/4 պայմանագիրը, համաձայն որի Թողարկողը «Վալլեքս Մայնինգ» ՍՊԸ-ին ենթավարձակալության է հանձնել «Գուգարքի ԳԵՈ» ՊՓԲԸ-ին պատկանող ԳԱԶ-66, ԳԱԶ-53-27, ՈՒԱԶ-31512 մակնիշի ավտոմեքենաները և Т-3 կոնբինացված տրակտորը՝ համապատասխանաբար 10,000, 10,000, 8,000 և 10,000 (ընդհանուր՝ 38,000) դրամ ամսական վարձավճարով (ներառյալ ՀՀ օրենսդրությամբ սահմանված հարկերն ու պարտադիր վճարները): Պայմանագիրը գործել է մինչև 31.12.2006թ.:

7) Թողարկողը 04.01.2006թ. իր փոխկապակցված անձ «Վալլեքս Մայնինգ» ՍՊԸ-ի հետ կնքել է տեխնիկական միջոցի ենթավարձակալության թիվ 060104/5 պայմանագիրը, համաձայն որի Թողարկողը «Վալլեքս Մայնինգ» ՍՊԸ-ին ենթավարձակալության է հանձնել «Գուգարքի ԳԵՈ» ՊՓԲԸ-ին պատկանող ԷՕ-3323Ա մակնիշի էքսկավատոր՝ 15,000 դրամ ամսական վարձավճարով (ներառյալ ՀՀ օրենսդրությամբ սահմանված հարկերն ու պարտադիր վճարները): Պայմանագիրը գործել է մինչև 31.12.2006թ.:

8) Թողարկողը 17.02.2006թ. իր փոխկապակցված անձ հանդիսացող «Լեռնամետալուրգիայի ինստիտուտ» ՓԲԸ-ի հետ կնքել է գիտատեխնիկական արտադրանքի ստեղծման (հանձնման) թիվ 2 պայմանագիրը, համաձայն որի «Լեռնամետալուրգիայի ինստիտուտ» ՓԲԸ-ն կատարել է «Թեղուտի պղինձ-մոլիբդենային հանքավայրի սուպերգենեզի գոտուց վերցրած տեխնոլոգիական նմուշի միներալապետրոգրաֆիական կազմի և պետրոֆիզիկական հատկությունների ուսումնասիրություններ» գիտատեխնիկական արտադրանքը՝ 2,580,939 դրամ պայմանագրային գնով: Պայմանագիրը գործել է մինչև 31.03.2006թ.:

9) Թողարկողը 01.03.2006թ. իր փոխկապակցված անձ հանդիսացող «Լեռնամետալուրգիայի ինստիտուտ» ՓԲԸ-ի հետ կնքել է նախագծային աշխատանքների կապալի թիվ 09/2006 պայմանագիրը, համաձայն որի «Լեռնամետալուրգիայի ինստիտուտ» ՓԲԸ-ն կատարել է Թեղուտի պղինձ-մոլիբդենային հանքավայրի հանքաքարի հանույթի և վերամշակման աշխատանքներ, նախագծային աշխատանքային գծագրեր, գեոդեզիական և ինժեներա-երկրաբանական աշխատանքներ՝ 114,000,000 դրամով (ներառյալ ԱԱՀ): Աշխատանքների կատարումը նախատեսվել է ավարտել 30.12.2006թ: Սակայն, 15.11.2006թ. Թողարկողը «Լեռնամետալուրգիայի ինստիտուտ» ՓԲԸ-ի հետ կնքել է լրացուցիչ համաձայնագիր՝ աշխատանքային գծագրերի կազմման ելակետային տվյալների ճշտման կապակցությամբ: Աշխատանքի հանձնման ժամկետները սահմանվել են 3-րդ փուլի համար՝ 30.12.2006թ., 4-րդ փուլի համար՝ 30.06.2007թ.: Աշխատանքի կատարման ընդհանուր արժեքը մնացել է անփոփոխ:

10) Թողարկողը 30.03.2006թ. իր փոխկապակցված անձ հանդիսացող «Լեռնամետալուրգիայի ինստիտուտ» ՓԲԸ-ի հետ կնքել է սարքավորման վարձակալության թիվ 060330 պայմանագիրը, համաձայն որի «Լեռնամետալուրգիայի ինստիտուտ» ՓԲԸ-ն Թողարկողի տիրապետմանն ու օգտագործմանն է հանձնում սեփականության իրավունքով իրեն պատկանող Էլեկտրոնային տախտոմետր TSR-805՝ 185,000 դրամ ամսական վարձավճարով (ներառյալ ավելացված արժեքի հարկը): Պայմանագիրը գործել է մինչև 30.12.2006թ.:

11) 10.04.2006թ. Թողարկողն իր փոխկապակցված անձ հանդիսացող «Լեռնամետալուրգիայի ինստիտուտ» ՓԲԸ-ի հետ կնքել է նախագծային աշխատանքների կատարման կապալի մասին թիվ 10/2006 պայմանագիրը, համաձայն որի «Լեռնամետալուրգիայի ինստիտուտ» ՓԲԸ-ն պարտավորվել է կազմել և Թողարկողին հանձնել Ալավերդու հանքի կոմպրեսորային և օդափոխման կայանների աշխատանքային նախագծերը: Վճարումն իրականացվել է հավասարաչափ՝ ապրիլ ամսից մինչև օգոստոս ամիսը (ներառյալ)՝ ամսական 1,600,000 դրամ: Կատարվող աշխատանքների գինը (ներառյալ ԱԱՀ-ն) կազմել է 9,600,000 դրամ: Պայմանագիրը գործել է մինչև 31.08.2006թ.:

12) 01.08.2006թ. Թողարկողն իր փոխկապակցված անձ հանդիսացող «Լեռնամետալուրգիայի ինստիտուտ» ՓԲԸ-ի հետ կնքել է նախագծային աշխատանքների կատարման կապալի մասին թիվ 19/2006 պայմանագիրը, համաձայն որի «Լեռնամետալուրգիայի ինստիտուտ» ՓԲԸ-ն

պարտավորվել է կազմել և Թողարկողին հանձնել Ալավերդու հանքի և հարստացուցիչ ֆաբրիկայի վերակառուցման նախագծային աշխատանքները: Վճարումն իրականացվել է հավասարաչափ՝ օգոստոս ամսից մինչև դեկտեմբեր ամիսը (ներառյալ)՝ ամսական 1,800,000 դրամ: Կատարվող աշխատանքների գինը (ներառյալ ԱԱՀ-ն) կազմել է 10,800,000դրամ: Պայմանագիրը գործել է մինչև 30.12.2006թ.:

13) 01.09.2006թ. Թողարկողն իր փոխկապակցված անձ հանդիսացող «Լեռնամետալուրգիայի ինստիտուտ» ՓԲԸ-ի հետ կնքել է գիտատեխնիկական արտադրանքի ստեղծման (հանձնման) թիվ Գեo-8 պայմանագիրը, համաձայն որի «Լեռնամետալուրգիայի ինստիտուտ» ՓԲԸ-ն կատարել է Թեղուտի պղինձ-մոլիբդենային հանքավայրի հանքաքարի և ներփակող ապարների միներալապետրոգրաֆիական և պետրոֆիզիկական բնութագիրը առաջին հերթի (մինչև 890մ հորիզոն) բացահանքի սահմաններում՝ լրահետախուզման հորատանցքերի հանուկի տվյալներով՝ 9,500,000 դրամ պայմանագրային գնով: Պայմանագիրը գործել է մինչև 2007թ. փետրվար ամիսը:

14) 27.09.2006թ. Թողարկողն իր փոխկապակցված անձ հանդիսացող «Վալլեքս Գրուպ» ՓԲԸ-ի հետ կնքել է դրամական միջոցների կառավարման ծառայությունների մատուցման թիվ 060927/01 պայմանագիրը, համաձայն որի «Վալլեքս Գրուպ» ՓԲԸ-ն Թողարկողին մատուցում է դրամական միջոցների կառավարման ծառայություններ՝ ամսական 500,000 (առանց ԱԱՀ-ի) դրամ պայմանագրային գնով: Պայմանագիրը գործում է մինչև 31.12.2008թ.:

15) 01.10.2006թ. Թողարկողն իր փոխկապակցված անձ հանդիսացող «Վալլեքս Այ-Թի» ՍՊԸ-ի հետ կնքել է դրամական միջոցների կառավարման ծառայությունների մատուցման թիվ 061001/2 պայմանագիրը, համաձայն որի «Վալլեքս Գրուպ» ՓԲԸ-ն Թողարկողին մատուցում է համակարգիչների և համակարգչային կազմտեխնիկայի, հեռախոսակայանների և հեռախոսային գծերի սպասարկման, լոկալ ցանցերի նախագծման և մոնտաժման, ինչպես նաև կառավարման ծառայություններ՝ ամսական 1,260,000 (առանց ԱԱՀ-ի) դրամ պայմանագրային գնով: Պայմանագիրը գործում է մինչև 31.12.2007թ.:

16) 29.12.2006թ. Թողարկողն իր փոխկապակցված անձ հանդիսացող «Վալլեքս Մայնինգ» ՍՊԸ-ի հետ կնքել է ոչ բնակելի տարածքի ենթավարձակալության թիվ 061229 պայմանագիրը, համաձայն որի Թողարկողը «Վալլեքս Մայնինգ» ՍՊԸ-ին ենթավարձակալության է հանձնել Լոռու մարզի Մարգահովիտ գյուղի երկրաբանահետախուզական արշավախմբի բազա հասցեում գտնվող տարածքը՝ 463.2քմ մակերեսով: Տարածքի օգտագործման դիմաց ամենամսյա վճարը կազմում է 242,640 դրամ (ներառյալ ԱԱՀ-ն): Պայմանագիրն ուժի մեջ է մտել 01.01.2007թ.-ից և գործում է մինչև 31.12.2011թ.:

17) Թողարկողի հետ փոխկապակցված անձ հանդիսացող «Բեյզ Մեթըլս» ՓԲԸ-ի և Թողարկողի միջև մշտապես, որպես կանոն՝ տարեկան պարբերականությամբ, կնքվում են պղնձի, ոսկու և արծաթի խտանյութի ձեռք բերման պայմանագրեր: Մասնավորապես՝ 2007 թվականի համար 29.12.2006թ. կնքվել է «Պղինձ-ոսկու խտանյութի մատակարարման մասին» թիվ 061229 պայմանագիրը: Համաձայն նշված պայմանագրի, «Բեյզ Մեթըլս» ՓԲԸ-ն նախատեսել է 2007 թվականի ընթացքում Թողարկողին մատակարարել մինչև 40,000 չոր մետրիկ տոննա խտանյութ: Խտանյութի մատակարարումն իրականացվում է DDP Հայաստանի Հանրապետություն, ք.Ալավերդի Կիրովի 4 պայմանով՝ համաձայն ԻՆԿՈՏԵՐՄՍ 2000-ի պայմանների: «Բեյզ Մեթըլս» ՓԲԸ-ի կողմից մատակարարված խտանյութի սեփականության իրավունքի փոխանցումը կատարվում է խտանյութի ընդունման-հանձնման ակտի ստորագրման միջոցով: Պայմանագրով սահմանվում է ձեռք բերման գնի որոշման ժամանակահատված, համաձայն որի՝ յուրաքանչյուր ամսվա մատակարարված խմբաքանակի գնորոշման ժամանակահատված է համարվում հաջորդող երկրորդ, երրորդ կամ չորրորդ ամիսը (գնորոշման ժամանակահատվածի ընտրությունը պատկանում է Թողարկողին), որի վերաբերյալ Թողարկողը ծանուցում է «Բեյզ Մեթըլս» ՓԲԸ-ին՝ երկրորդ ամսվա վերջին օրացուցային օրվա ընթացքում: Յուրաքանչյուր ամսվա մատակարարված խտանյութի գինը որոշվում է նրա կազմում ընդգրկված մետաղների՝ գնորոշման ժամանակահատվածում Լոնդոնի մետաղների բորսայի (LME) գնանշումների համաձայն: Մեկ ՉՄՏ խտանյութի արժեքը որոշվում է որպես նրանում առկա պղնձի, ոսկու և արծաթի՝ պայմանագրով սահմանված կարգով որոշված գների հանրագումարի և խտանյութի վերամշակման և զտման համար կատարված ծախսերի տարբերություն: Խտանյութի մատակարարման խմբաքանակի դիմաց վճարումն իրականացվում է վերջնահաշվարկի ակտի հիման վրա, իսկ մինչ այդ կատարվում է նախնական վճարում՝ խտանյութի մատակարարումից հետո մինչև 15 բանկային օրվա ընթացքում:

18) 05.01.2007թ. Թողարկողն իր փոխկապակցված անձ հանդիսացող «Վալլեքս Մայնինգ» ՍՊԸ-ի հետ կնքել է քվարցային հանքաքարի մատակարարման մասին թիվ 070105/1 պայմանագիրը, համաձայն որի «Վալլեքս Մայնինգ» ՍՊԸ-ն պարտավորվել է Թողարկողի սեփականությանը հանձնել խոշոր կտորներով ոսկի պարունակող քվարցային հանքաքար (առնվազն 6,000 ԹՄՏ): Պայմանագրով սահմանվում է ձեռք բերման գնի որոշման ժամանակահատված, համաձայն որի՝ յուրաքանչյուր ամսվա մատակարարված խմբաքանակի գնորոշման ժամանակահատված է համարվում հաջորդող երկրորդ, երրորդ կամ չորրորդ ամիսը (գնորոշման ժամանակահատվածի ընտրությունը պատկանում է Թողարկողին), որի վերաբերյալ Թողարկողը ծանուցում է «Վալլեքս Մայնինգ» ՍՊԸ-ին՝ երկրորդ ամսվա վերջին օրացուցային օրվա ընթացքում: Յուրաքանչյուր ամսվա մատակարարված հանքաքարի գինը որոշվում է նրա կազմում ընդգրկված ոսկու՝ գնորոշման ժամանակահատվածում Լոնդոնի մետաղի բորսայի (LME) գնանշումների համաձայն: Մեկ ՉՄՏ հանքաքարի արժեքը որոշվում է որպես նրանում առկա ոսկու պայմանագրով սահմանված կարգով որոշված գնի հանրագումարի և հանքաքարի զտման համար կատարված ծախսերի տարբերություն: Հաշվարկված գնին ավելացվում է ավելացված արժեքի հարկը՝ օրենսդրությամբ սահմանված չափով: Հանքաքարի մատակարարման խմբաքանակի դիմաց վճարումն իրականացվում է վերջնահաշվարկի ակտի հիման վրա, իսկ մինչ այդ կատարվում է նախնական վճարում հանքաքարի մատակարումից հետո՝ 15 բանկային օրվա ընթացքում: Պայմանագիրը գործում է մինչև 31.12.2007թ.:

19) 07.01.2007թ. Թողարկողն իր հետ փոխկապակցված անձ հանդիսացող «Լեռնամետալուրգիայի ինստիտուտ» ՓԲԸ-ի հետ կնքել է հորատման աշխատանքների կատարման մասին թիվ 060104 պայմանագիրը, համաձայն որի «Լեռնամետալուրգիայի ինստիտուտ» ՓԲԸ-ն պարտավորվել է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով Թողարկողի շահագործմանը տրամադրված՝ ՀՀ Լոռու մարզի Թեղուտ գյուղի հարևանությամբ գտնվող Թեղուտի պղնձամոլիբդենային հանքավայրում իրականացնել սյունակային հորատման աշխատանքներ և Թողարկողին հանձնել համապատասխան քանակի հորատհանուկ (հորատման աշխատանքների ընդհանուր ծավալը կազմել է մոտ 6000 մետր): Հորատանցքերի յուրաքանչյուր մետրի հորատման աշխատանքների իրականացման արժեքը 47,000 դրամ է: Ըստ պայմանագրի աշխատանքները պետք է ավարտվեն մինչև 31.12.2007թ.:

20) 22.01.2007թ. Թողարկողն իր փոխկապակցված անձ հանդիսացող «Լեռնամետալուրգիայի ինստիտուտ» ՓԲԸ-ի հետ կնքել է նախագծային աշխատանքների կատարման կապալի մասին թիվ 01/2007 պայմանագիրը, համաձայն որի «Լեռնամետալուրգիայի ինստիտուտ» ՓԲԸ-ն կազմել է «Ջաջուռի կրաքարերի հանքավայր: Բացահանք» աշխատանքային նախագիծը՝ 3,000,000 դրամ ընդհանուր գնով (ներառյալ ԱԱՀ-ն): Աշխատանքների կատարումը պայմանագրով նախատեսվել է ավարտել մինչև 28.02.2007թ.:

21) 12.02.2007թ. Թողարկողն իր փոխկապակցված անձ հանդիսացող «Լեռնամետալուրգիայի ինստիտուտ» ՓԲԸ-ի հետ կնքել է գիտատեխնիկական արտադրանքի ստեղծման մասին թիվ 070212 ՀԼ պայմանագիրը, համաձայն որի «Լեռնամետալուրգիայի ինստիտուտ» ՓԲԸ-ն կատարել է Ալավերդու թափոնակույտի հանքաքարերի ֆլորացիոն հարստացման հանարավորության ուսումնասիրման աշխատանքներ՝ 8,000,000 դրամ պայմանագրային գնով: Աշխատանքների կատարումը պայմանագրով նախատեսվել է ավարտել մինչև 12.05.2007թ.:

22) 14.02.2007թ. Թողարկողն իր փոխկապակցված անձ հանդիսացող «Լեռնամետալուրգիայի ինստիտուտ» ՓԲԸ-ի հետ կնքել է գիտատեխնիկական արտադրանքի ստեղծման թիվ 070214 ՀԼ պայմանագիրը, համաձայն որի «Լեռնամետալուրգիայի ինստիտուտ» ՓԲԸ-ն կատարել է Թեղուտի հանքավայրի օքսիդացած հանքաքարերի հարստացման տեխնոլոգիայի մշակման աշխատանքներ՝ 13,700,000 դրամ պայմանագրային գնով: Աշխատանքների կատարումը պայմանագրով նախատեսվում է ավարտել մինչև 14.10.2007թ.:

23) 16.02.2007թ. Թողարկողն իր փոխկապակցված անձ հանդիսացող «Լեռնամետալուրգիայի ինստիտուտ» ՓԲԸ-ի հետ կնքել է ծառայությունների մատուցման թիվ 070216/1 պայմանագիրը, համաձայն որի «Լեռնամետալուրգիայի ինստիտուտ» ՓԲԸ-ն Թողարկողին ի պահ է հանձնել քրոմի հանքաքար և այդ նպատակով Թողարկողը պարտավորվել է ապահովել տրասպորտային միջոցներից բեռնաթափումը և պահեստավորումը, ինչպես նաև հնարավոր գնորդներին առաքելու նպատակով բեռնման գործողությունները՝ յուրաքանչյուր մետրիկ տոննայի համար 2,412 դրամ պայմանագրային գնով (ներառյալ ԱԱՀ-ն): Պայմանագիրը գործում է մինչև 31.12.2007թ.:

24) 19.02.2007թ. Թողարկողն իր փոխկապակցված անձ հանդիսացող «Լեռնամետալուրգիայի ինստիտուտ» ՓԲԸ-ի հետ կնքել է գիտատեխնիկական արտադրանքի ստեղծման (հանձնման) թիվ 31-2007-Հ պայմանագիրը, համաձայն որի «Լեռնամետալուրգիայի ինստիտուտ» ՓԲԸ-ն պարտավորվում է Ալավերդու պղնձաձուլական գործարանի տարածքում կատարել Դեբեդ գետի ջրերի, արտադրական կեղտաջրերի և հանքաջրերի ամենամսյա նմուշարկման աշխատանքներ՝ 260,400 հազ. դրամ ամսական արժեքով (ներառյալ ԱԱՀ-ն): Պայմանագրի գործողությունն ավարտվում է 31.12.2007թ.:

25) 20.02.2007թ. Թողարկողն իր փոխկապակցված անձ հանդիսացող «Լեռնամետալուրգիայի ինստիտուտ» ՓԲԸ-ի հետ կնքել է նախագծային աշխատանքների կատարման կապալի մասին թիվ 05/2007 պայմանագիրը, համաձայն որի «Լեռնամետալուրգիայի ինստիտուտ» ՓԲԸ-ն կազմել է «Ալավերդու հանք: Թիվ 6 բովանցքից վերև շտոկվերկի մշակման տեղային նախագիծ» աշխատանքային նախագիծը՝ 8,400,000 դրամ ընդհանուր գնով (ներառյալ ԱԱՀ-ն): Աշխատանքների կատարումը պայմանագրով նախատեսվել է ավարտել մինչև 30.05.2007թ.:

26) 01.03.2007թ. Թողարկողն իր փոխկապակցված անձ հանդիսացող «Բեյզ Մեթըլս» ՓԲԸ-ի հետ կնքել է տրանսպորտային միջոցների վարձակալության թիվ 070301 պայմանագիրը, համաձայն որի Թողարկողը «Բեյզ Մեթըլս» ՓԲԸ-ին վարձակալության է հանձնել իրեն սեփականության իրավունքով պատկանող «Atlas-Copco ST2D» ինքնագնաց ամբարձիչը, «LK» ինքնագնաց ամբարցիչը և «ՄՕԱԶ» ինքնագնաց ստորգետնյա բեռնատարը՝ համապատասխանաբար 1,000,000, 120,000 և 400,000 դրամ ամսական վարձավճարով (ներառյալ ԱԱՀ-ն): Պայմանագիրը գործում է մեկ տարի ժամկետով:

27) 12.04.2007թ. Թողարկողն իր փոխկապակցված անձ հանդիսացող «Լեռնամետալուրգիայի ինստիտուտ» ՓԲԸ-ի հետ կնքել է նախագծային աշխատանքների կատարման կապալի մասին թիվ 16/2007 պայմանագիրը, համաձայն որի «Լեռնամետալուրգիայի ինստիտուտ» ՓԲԸ-ն կազմում է «Թեղուտի ՊՄԿ»: Դուքանաձորի լցակույտային տնտեսություն» աշխատանքային նախագծերը՝ 39,600,000 դրամ ընդհանուր գնով (ներառյալ ԱԱՀ-ն): Աշխատանքների կատարումը պայմանագրով նախատեսվում է ավարտվել մինչև 30.09.2007թ.:

28) 21.05.2007թ. Թողարկողն իր փոխկապակցված անձ հանդիսացող «Լեռնամետալուրգիայի ինստիտուտ» ՓԲԸ-ի հետ կնքել է հորատման աշխատանքների կատարման մասին թիվ 070521 պայմանագիրը, համաձայն որի «Լեռնամետալուրգիայի ինստիտուտ» ՓԲԸ-ն պարտավորվել է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով Թողարկողի շահագործմանը տրամադրված՝ՀՀ Լոռու մարզի Ալավերդու պղնձի հանքավայրում իրականացնել սյունակային հորատման աշխատանքներ ստորգետնյա լեռնային փորվածքներից և Թողարկողին հանձնել համապատասխան քանակի հորատհանուկ (հորատման աշխատանքների ընդհանուր ծավալը կազմել է մոտ 2000 մետր): Հորատանցքերի յուրաքանչյուր մետրի հորատման աշխատանքների իրականացման արժեքը 53,000 դրամ է: Ըստ պայմանագրի աշխատանքները պետք է ավարտվեն մինչև 31.12.2007թ.:

29) 01.06.2007թ. Թողարկողն իր փոխկապակցված անձ հանդիսացող «Լեռնամետալուրգիայի ինստիտուտ» ՓԲԸ-ի հետ կնքել է տրանսպորտային միջոցի վարձակալության մասին թիվ 070601 պայմանագիրը, համաձայն որի Թողարկողը «Լեռնամետալուրգիայի ինստիտուտ» ՓԲԸ-ին վարձակալության է հանձնել իրեն սեփականության իրավունքով պատկանող ՎԱԶ-21213 ավտոմեքենան՝ 66,000 դրամ ամսական վարձավճարով (ներառյալ ՀՀ օրենսդրությամբ սահմանված հարկերն ու պարտադիր վճարները): Պայմանագիրը գործում է մինչև 01.06.2008թ.:

30) 20.06.2007թ. Թողարկողն իր փոխկապակցված անձ հանդիսացող «Լեռնամետալուրգիայի ինստիտուտ» ՓԲԸ-ի հետ կնքել է գիտատեխնիկական արտադրանքի ստեղծման թիվ 070620 ՀԼ պայմանագիրը, համաձայն որի «Լեռնամետալուրգիայի ինստիտուտ» ՓԲԸ-ն կատարում է Թեղուտի հանքավայրի սուպերգեն հանքաքարի երրորդ նմուշի հարստացման ուսումնասիրման, նրանց վերամշակման սխեմայի մշակման և հարստացման ֆաբրիկայի նախագծման նպատակով տեխնոլոգիական կանոնակարգի կազմման աշխատանքները՝ 11,500,000 դրամ պայմանագրային գնով: Աշխատանքների կատարումը պայմանագրով նախատեսվում է ավարտել մինչև 20.09.2007թ.:

31) 20.06.2007թ. Թողարկողն իր փոխկապակցված անձ հանդիսացող «Լեռնամետալուրգիայի ինստիտուտ» ՓԲԸ-ի հետ կնքել է հորատման աշխատանքների կատարման մասին թիվ 070720 պայմանագիրը, համաձայն որի «Լեռնամետալուրգիայի ինստիտուտ» ՓԲԸ-ն պարտավորվել է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով Թողարկողի շահագործմանը տրամադրված՝ ՀՀ Լոռու

մարզի Մարցիգետի հանքային դաշտի Ձաղիձորի տեղամասում իրականացնել սյունակային հորատման աշխատանքներ և Թողարկողին հանձնել համապատասխան քանակի հորատհանուկ (հորատման աշխատանքների ընդհանուր ծավալը կազմել է մոտ 1000 մետր): Հորատանցքերի յուրաքանչյուր մետրի հորատման աշխատանքների իրականացման արժեքը 52,000 դրամ է: Ըստ պայմանագրի աշխատանքները պետք է ավարտվեն մինչև 31.12.2007թ.:

32) 09.07.2007թ. Թողարկողն իր փոխկապակցված անձ հանդիսացող «Լեռնամետալուրգիայի ինստիտուտ» ՓԲԸ-ի հետ կնքել է գիտատեխնիկական արտադրանքի ստեղծման մասին թիվ 070709 ՀԼ պայմանագիրը, համաձայն որի «Լեռնամետալուրգիայի ինստիտուտ» ՓԲԸ-ն կատարում է Թեղուտի հանքավայրի առաջնային հանքաքարի նմուշի հարստացման ուսումնասիրման, նրանց վերամշակման սխեմայի մշակման և հարստացման ֆաբրիկայի նախագծման նպատակով տեխնոլոգիական կանոնակարգի կազմման աշխատանքները՝ 11,500,000 դրամ պայմանագրային գնով: Աշխատանքների կատարումը պայմանագրով նախատեսվում է ավարտել մինչև 20.09.2007թ.:

9.6. Արժեթղթերի գրանցման ներկայացնելուց հետո առնվազն մեկ տարվա ընթացքում չի նախատեսվում Թողարկողի կողմից այնպիսի գործարքի կատարում, որի գումարը գերազանցի թողարկողի ակտիվների արժեքի 10 տոկոսը:

9.7. Թողարկողը չունի այնպիսի պատվերներ, որոնք չեն կարող կատարվել առաջիկա մեկ տարվա ընթացքում:

10. Տեղեկություններ թողարկողի նախատեսվող գործունեության մասին

10.1. Թողարկողի ապագա գործունեության ծրագրերի վերաբերյալ տեղեկություններ.

10.1.1. Թողարկողն առաջիկա տարիներին նախատեսում է շահագործել Թեղուտի պղինձ-մոլիբդենային հանքավայրը՝ հաշվի առնելով այն, որ նշված հանքավայրի շահագործման իրավունքն առաջիկա 20 տարիների համար պատկանում է իրեն:

Թեղուտի հանքավայրը Հայաստանում իր մեծությամբ երկրորդ պղինձ-մոլիբդենային հանքավայրն է հանդիսանում: Երկրաբանահետախուզական աշխատանքները վկայում են այն մասին, որ Թեղուտի հանքավայրում առկա է երկակի սուլֆիդային հանքաքարով հարուստ, լավ զարգացած և նշանակալի հզորություն ունեցող գոտի: Թեղուտի պաշարները գնահատվում են 450 մլն տոննա հանքաքարի չափով, որում պղնձի և մոլիբդենի պարունակությունները միջինում կազմում են համապատասխանաբար 0,36% և 0,021%:

Թեղուտի հանքավայրի շահագործման ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ներդրումների չափը կազմում է մոտ 200 մլն ԱՄՆ դոլար: Հաշվի առնելով ծրագրի իրականացման համար անհրաժեշտ մեծածավալ ներդրումները, Թողարկողը ներկա փուլում ակնկալում է համագործակցել պոտենցիալ գործընկերների հետ:

10.1.2. Թողարկողի կարծիքով ներկայումս չկան այնպիսի գործոններ, որոնք կարող են բացասական ազդեցություն ունենալ արտադրանքի իրացման վրա, սակայն հնարավոր բացասական գործոններից կարելի է առանձնացնել՝
1) համաշխարհային շուկայում մետաղների գների էական նվազումը,
2) Թեղուտի պղինձ-մոլիբդենային հանքավայրի շահագործման աշխատանքների հետ կապված հնարավոր բնապահպանական խնդիրները:

10.2. Կապված բնապահպանական նորմերի հնարավոր փոփոխությունների հետ, Թողարկողի մոտ կարող են առաջանալ որոշակի պարտավորություններ, որոնք կարող են բացասաբար ազդել իր գործունեության վրա: Այդ խնդիրները մանրամասն ներկայացված են սույն ազդագրի 9.4 կետում:

10.3. Ինչպես արդեն նշվել է, մետալուրգիական գործունեությունը տեղական շուկայում մրցակիցներ չունի, իսկ տվյալ ոլորտում միջազգային միտումները, որոնք հիմնականում բնորոշվում են որպես խոշորացում, այնքան էլ բարենպաստ չեն փոքրածավալ արտադրության համար:

Թողարկողի կողմից թողարկվող պղնձի տարեկան ծավալը շատ փոքր է աշխարհում տվյալ ոլորտում գործող խոշոր ընկերությունների համեմատ: Իսկ տարածաշրջանում մրցակիցներ առկա չեն:

10.4. Թողարկողի կողմից ներկայումս քննարկվում են ժամանակակից տեխնոլոգիաների կիրառմամբ բնապահպանական խնդրի լուծմանն ուղղված տարբեր նախագծեր: Դրանցից մեկը նախատեսում է կրաքարի միջոցով թաց մաքրման եղանակով վնասազերծել գազերը և որպես հարակից արտադրանք ստանալ կիր: Երկրորդ ուղղությունը, որով ներկայումս ուսումնասիրություններ են արվում, ծծմբական թթվի արտադրամասի կառուցումն է: Ուսումնասիրման աշխատանքներում Թողարկողը համագործակցում է միջազգային և տեղական կազմակերպությունների և փորձագետների հետ՝ նշված հարցերում արդյունավետ լուծումներ գտնելու ուղղությամբ:

11. Տեղեկություններ թողարկվող (առաջարկվող) արժեթղթերի վերաբերյալ

11.1. Արժեթղթերի թողարկման (տեղաբաշխման) մասին տեղեկությունները.

ա) Թողարկողի կողմից սույն ազդագրի շրջանակում առաջարկվում են անվանական ոչ փաստաթղթային արժեկտրոնային պարտատոմսեր:

բ) Պարտատոմսերի հաշվառումն իրականացվելու է Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա ինքնակարգավորվող կազմակերպությունում:

գ) Թողարկման ընդհանուր ծավալն է 500,000,000 (հինգ հարյուր միլիոն) ՀՀ դրամ:

դ) Տեղաբաշխվող պարտատոմսերի քանակն է 10,000 (տաս հազար) հատ:

ե) Մեկ պարտատոմսի անվանական արժեքը 50,000 ՀՀ դրամ է:

զ) Պարտատոմսերի թողարկման մասին որոշմամբ պարտատոմսերի սեփականատերերի համար սահմանված են հետևյալ իրավունքները.

1. Պարտատոմսերի թողարկման, տեղաբաշխման, շրջանառության և մարման սպասարկման պայմաններով սահմանված ժամկետներում ստանալ պարտատոմսով նախատեսված արժեկտրոնները և մարման գումարը:
2. Թողարկողի կողմից պարտատոմսերի արժեկտրոնների և/կամ մարման գումարը սույն պայմաններով սահմանված ժամկետից ուշացնելու դեպքում յուրաքանչյուր ուշացրած օրվա համար ստանալ մարման ենթակա գումարի 0.1%-ի չափով տույժ:
3. Թողարկողի կողմից պարտատոմսերի արժեկտրոնները և/կամ մարման գումարը սահմանված ժամկետից ուշացնելու դեպքում ձեռնարկել պարտատոմսերի սեփականության իրավունքից բխող իր պահանջների բավարարման ուղղությամբ օրենքով թույլատրվող գործողություններ:
4. Թողարկողի կողմից պարտատոմսերի արժեկտրոնները և/կամ մարման գումարը սույն պայմաններով սահմանված ժամկետից ուշացնելու հիմքով (սնանկ ճանաչվելու արդյունքում) դատական կարգով լուծարման դեպքում օգտվել օրենքով պարտատիրոջ իրեն վերապահված իրավունքներից:
5. Տեղաբաշխման ավարտից հետո իր ցանկությամբ օտարել պարտատոմսերը ֆոնդային բորսայում (ֆոնդային բորսայում ցուցակված լինելու դեպքում) կամ արտաբորսայում՝ օրենքով սահմանված կարգով:
6. Օրենքով սահմանված կարգով գրավադրել պարտատոմսերը:
7. Թողարկողի՝ իր կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու դեպքում 08.08.2007թ. թիվ 070808 պայմանագրով սահմանված կարգով դիմել «Լեռնամետալուրգիայի ինստիտուտ» ՓԲԸ-ին (ՀՀ, 0010 Երևան, Խանջյան 19 հասցեով) և նրանից ստանալ Թողարկողի կողմից վճարման ենթակա ողջ գումարը (ներառյալ տոկոսները, պարտքը բռնագանձելու կապակցությամբ դատական ծախսերը և Թողարկողի կողմից պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով առաջացած այլ վնասները):
8. Օրենքով նախատեսված այլ իրավունքներ:

է) Թողարկվող պարտատոմսերը փոխարկելի չեն:

ը) Պարտատոմսերի մարումն իրականացվում է ՀՀ դրամով և անվանական արժեքով: Պարտատոմսերի մարման օր է համարվում տեղաբաշխման սկսման օրվան հաջորդող 18-րդ ամսվա համապատասխան օրը (եթե նշված օրը աշխատանքային օր չէ, ապա դրան հաջորդող աշխատանքային օրը): Պարտատոմսերի սեփականատերերի ռեեստրի փակման օր է համարվում պարտատոմսերի մարման օրը, իսկ պարտատոմսերի մարման գումարները վճարվում են պարտատոմսերի սեփականատերերին ռեեստրի փակման օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում: Պարտատոմսերի մարման գումարն իրավունք ունեն ստանալ փակման օրվա դրությամբ պարտատոմսերի սեփականատերերի ռեեստրում գրանցված անձինք (սեփականատերերը կամ անվանատերերը):

Թողարկողը պարտավորվում է մինչև պարտատոմսերի մարման օրը հաշվարկային բանկում բացված հատուկ հաշվի վրա կուտակել պարտատոմսերի մարման համար անհրաժեշտ դրամական միջոցները, ինչպես նաև մինչև պարտատոմսերի մարման օրվան հաջորդող օրը հաշվարկային բանկ ներկայացնել մարման գումարներ ստացող անձանց անհրաժեշտ տվյալները:

Հաշվարկային բանկը մարման գումարները վճարում է անկանխիկ ձևով՝ պարտատոմսերի սեփականատերերի ռեեստրում նշված բանկային հաշվին փոխանցելու միջոցով:

Սահմանված ժամկետում պարտավորությունները չկատարելու դեպքում յուրաքանչյուր ուշացած օրվա համար Թողարկողը պարտավորվում է վճարել մարման ենթակա գումարի 0.1%-ի չափով տույժ:

թ) Պարտատոմսերի թողարկման մասին որոշումն ընդունվել է 2007 թվականի հուլիսի տասին: Պարտատոմսերի տեղաբաշխման մասին (բաժանորդագրության կարգի) որոշումն ընդունվել է 2007 թվականի օգոստոսի 23-ին:

Պարտատոմսերի թողարկման և տեղաբաշխման մասին որոշումներն ընդունվել են Թողարկողի բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից:

Պարտատոմսերի թողարկման կամ պարտատոմսերում ներդրումներ կատարողների նկատմամբ սահմանված սահմանափակումներ չկան:

ժ) Պարտատոմսերի նկատմամբ իրավունքների և պարտավորությունների հաշվառումն իրականացնելու է Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա ինքնակարգավորվող կազմակերպությունը: Հասցեն՝ ՀՀ, ք.Երևան, Մ.Մկրտչյան 5բ, հեռ.՝ (+374 10) 566-446, 520-978, www.cda.am:

ժա) Պարտատոմսերի տեղաբաշխումը սկսվում է պարտատոմսերի գրանցման հայտարարագրի գրանցման օրվան հաջորդող հինգերորդ աշխատանքային օրվանից:

ժբ) Պարտատոմսերի տեղաբաշխումն ավարտվում է տեղաբաշխումը սկսելու օրվանից 10 աշխատանքային օր հետո:

ժգ) Որպես ապահովության միջոց Թողարկողն օգտագործում է իր հետ փոխկապակցված անձ հանդիսացող «Լեռնամետալուրգիայի ինստիտուտ» ՓԲԸ-ի կողմից տրված երաշխավորությունը, որի կապակցությամբ Թողարկողը «Լեռնամետալուրգիայի ինստիտուտ» ՓԲԸ-ի հետ 08.08.2007թ. կնքել է թիվ 070808 երաշխավորության պայմանագիրը: Համաձայն վերը նշված պայմանագրի՝ յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ կհամարվի այդ պայմանագրին միացած, երբ սեփականության իրավունքով ձեռք բերի Թողարկողի պարտատոմսերը և/կամ ստորագրի որևէ փաստաթուղթ, որը կհավաստի պարտատոմսեր ձեռք բերելու փաստը:

ժդ) Պարտատոմսերի տեղաբաշխման գինը որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$P = \frac{N}{(1 + t * R/m)} * \left\{ c * \sum \frac{1}{(1+R)^{j-1}} + \frac{1}{(1+R)^{n-1}} \right\}$$

որտեղ՝

P – Պարտատոմսերի տեղաբաշխման գինն է,
N – Պարտատոմսի անվանական արժեքն է,
R – Պարտատոմսի դիմաց վճարվող կիսամյակային տոկոսադրույքի բացարձակ արժեքն է,
t – Մինչև տվյալ արժեկտրոնի վճարումը մնացած օրերի քանակը,
m – ընթացիկ կիսամյակում ընդգրկված օրերի քանակն է,
c – կիսամյակային վճարվող արժեկտրոնային տոկոսադրույքն է,
n – արժեկտրոնների վճարումների քանակն է,
j – արժեկտրոնի տվյալ հերթական համարն է, որը փոփոխվում է տվյալ պահից մինչև վերջնական մարում մնացած արժեկտրոնների վճարումների քանակից կախված:

ժե) Տեղաբաշխվող պարտատոմսերը բաժնային չեն և փոխարկելի չեն:

ժզ) Պարտատոմսերի դիմաց վճարումները կատարվում են ՀՀ դրամով՝ մինչև պարտատոմսերի տեղաբաշխման ավարտի օրը: Վճարումներն ընդունվելու են անկանխիկ ձևով՝ «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» փակ բաժնետիրական ընկերությունում բացված 25000102000810 բանկային հաշվին փոխանցումների միջոցով: Ընդ որում՝ եթե ներդրողների կողմից դրամական միջոցները Թողարկողի նշված բանկային հաշվին վճարվել են մինչև կոնկրետ աշխատանքային օրվա ժամը 13:00-ը, այդ դրամական միջոցները մուտքագրված են համարվում դրանց վճարման օրը, իսկ եթե համապատասխան գումարները վճարվել են կոնկրետ աշխատանքային օրվա ժամը 13:00-ից հետո, ապա դրանք մուտքագրված են համարվում վճարմանը հաջորդող աշխատանքային օրը և համապատասխան պարտատոմսերի տեղաբաշխման գինը որոշվում է այդ օրվա հաշվարկով:

ժէ) Թողարկողի կողմից վաճառվում է 50,000 (հիսուն հազար) ՀՀ դրամ անվանական արժեքով 10,000 (տաս հազար) հատ պարտատոմս, որոնց տեղաբաշխման գինը որոշվում է սույն բաժնի ժդ) կետում նշված բանաձևով: Պարտատոմսերը նախատեսվում է տեղաբաշխել հետևյալ կերպ՝

- 8,000 հատ պարտատոմսերը (որն իրենից ներկայացնում է թողարկված պարտատոմսերի ամբողջ ծավալի 80%-ը և կազմում 400,000,000 (չորս հարյուր միլիոն) ՀՀ դրամ), տեղաբաշխվելու են տեղաբաշխողների (տեղաբաշխման խմբի) միջև: Նշված գործընթացը կարգավորվում է Թողարկողի և «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի միջև 28.08.2007թ. կնքված համապատասխան պայմանագրով: Տեղաբաշխման խմբի անդամների վերաբերյալ տեղեկությունները ներկայացված են հաջորդ կետում:
- 2,000 հատ պարտատոմսեր (100,000,000 (մեկ հարյուր միլիոն) ՀՀ դրամ ընդհանուր ծավալով) տեղաբաշխվելու են բաժանորդագրության եղանակով: Բաժանորդագրությունն իրականացվելու է համաձայն «Արմենիան Քափըր Փրոգրամ» ՓԲԸ 23.08.2007թ. բաժնետերերի ընդհանուր ժողովի թիվ 070823/01 որոշմամբ հաստատված «Արմենիան Քափըր Փրոգրամ» ՓԲԸ-ի պարտատոմսերի տեղաբաշխման կարգի:

Պարտատոմսերի բաժանորդագրությունն իրականացվելու է «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի կողմից: Պարտատոմսեր ցանկացող ֆիզիկական և/կամ իրավաբանական անձինք կարող են մասնակցել բաժանորդագրությանը միայն պարտատոմսերի տեղաբաշխման պայմաններում նշված ժամկետում և պարտատոմսերի ազդագիրը ստանալու պահից առնվազն 30 ժամ հետո: Ներդրողները կարող են ազդագիրը ստանալ «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ում (հասցե՝ ՀՀ, ք. Երևան 0010, Խանջյան 13/2) կամ նրա ինտերնետային կայքից (www.armswissbank.am):

Տեղաբաշխման ընթացքում պարտատոմսերի ձեռք բերման հաստատումը և Թողարկողի բաժնետերերի 10.07.2007թ. ընդհանուր ժողովի թիվ 070710/01 որոշմամբ սահմանված պայմաններն ընդունելու համաձայնություն տալը ներդրողն իրականացնում է պարտատոմսերի ձեռք բերման հայտը սահմանված կարգով լրացնելու և «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ին ներկայացնելու միջոցով: Ներդրողների կողմից հայտերը կարող են ներկայացվել տեղաբաշխման ընթացքում ցանկացած աշխատանքային օրվա ընթացքում՝ ժամը 10:00-16:00: Ինչ վերաբերվում է Թողարկողի բանկային հաշվին դրամական միջոցների փոխանցմանը, ապա՝ ժզ) կետով սահմանված ժամկետներում:

Բաժանորդագրության ընթացքում պարտատոմսերի տեղաբաշխման գինը որոշվում է սույն բաժնի ժդ) կետով սահմանված բանաձևով, ըստ որի պարտատոմսերում ներդրման եկամտաբերությունը հաշվարկվում է արժեկտրոնային եկամտաբերությամբ՝ տարեկան 10 տոկոս:

Պարտատոմսերի ձեռք բերման հայտի օրինակը ներկայացված է Հավելված 3-ում:

ժը) Տեղաբաշխումն իրականացվում է երաշխավորված եղանակով, որի համար Թողարկողը տեղաբաշխվող պարտատոմսերի ընդհանուր անվանական արժեքի 0.7%-ի չափով պարգևատրում է տեղաբաշխողներին: Երաշխավորված տեղաբաշխում իրականացնելու կապակցությամբ Թողարկողն «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի հետ 28.08.2007թ. կնքել է երաշխավորված տեղաբաշխում կազմակերպելու մասին պայմանագիր, իսկ «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ն «Զարգացման Հայկական Բանկ» ԲԲԸ-ի և «Ֆյուչեր Կապիտալ Մարկետ» ՍՊԸ-ի հետ 27.08.2007թ. կնքել է տեղաբաշխողների խումբ ստեղծելու մասին պայմանագիր:

Տեղաբաշխման խմբում ընդգրկված անձանց վերաբերյալ տեղեկությունները ներկայացված են ստորև բերված աղյուսակում՝

Ֆիրմային անվանումները	«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ	«Զարգացման Հայկական Բանկ» ԲԲԸ	«Ֆյուչր Կապիտալ Մարկետ» ՍՊԸ
Կազմակերպական իրավական ձևը	Փակ բաժնետիրական ընկերություն	Բաց բաժնետիրական ընկերություն	Սահմանափակ պատասխանա-տվությամբ ընկերություն
Փոստային հասցեն և կապի միջոցները	ՀՀ, ք. Երևան 0010, Խանջյան 13/2, հեռ. 52-95-93, e-mail: info@armswissbank.am, www.armswissbank.am	ՀՀ, ք. Երևան, 0015, Պարոնյան 21/1 հեռ. 59-14-00, e-mail: info@armdb.com, www.armdb.com	ՀՀ, ք. Երևան, Այգեձորի 69, բն. 20, Հեռ. (093) 49 09 19
Ձեռք բերման ծավալը և Պարզևատրման չափը	5000 հատ պարտատոմս Տեղաբաշխվող պարտատոմսերի ընդհանուր ծավալի 0.4%-ի չափով (որպես Գլխավոր տեղաբաշխող) և իր կողմից ձեռք բերվող պարտատոմսերի ընդհանուր անվանական արժեքի 0.3%-ի չափով:	2000 հատ պարտատոմս Որպես տեղաբաշխման խմբի անդամ՝ իր կողմից ձեռք բերվող պարտատոմսերի ընդհանուր անվանական արժեքի 0.3%-ի չափով:	1000 հատ պարտատոմս Որպես տեղաբաշխման խմբի անդամ՝ իր կողմից ձեռք բերվող պարտատոմսերի ընդհանուր անվանական արժեքի 0.3%-ի չափով:
Նրանց կողմից առաջարկվող գինը և քանակը	Չի նախատեսվում	Չի նախատեսվում	Չի նախատեսվում

ժթ) Նման տեղեկություններ առկա չեն:

ի) Թողարկողի բաժնային արժեթղթերի նշանակալից սեփականատերերը, փոխկապակցված անձինք, ինչպես նաև կառավարմանը մասնակցող անձինք չեն պատրաստվում սույն ազդագրի օգտագործմամբ պարտատոմսեր գնել կամ վաճառել:

իա) Պարտատոմսերի տեղաբաշխումից ստացվող եկամտի չափը՝ հանած արժեթղթերի թողարկմանն առնչվող ծախսերի չափը, նախնական հաշվարկներով կազմում է շուրջ 493 մլն դրամ: Նշված գումարն ուղղվելու է Թողարկողի շրջանառու միջոցների համալրմանը:

իբ) Պարտատոմսերի դիմաց նախատեսվում է վճարել արժեկտրոնային եկամուտ՝ տարեկան 10% տոկոսադրույքով: Արժեկտրոնները (տոկոսագումարները) վճարվում են կիսամյակային պարբերականությամբ՝ ՀՀ դրամով, պարտատոմսի անվանական արժեքի 5 տոկոսի չափով:

Արժեկտրոնները (տոկոսագումարները) վճարվում են պարտատոմսերի սեփականատերերի ռեեստրի փակման օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում: Արժեկտրոնները (տոկոսագումարները) ստանալու իրավունք ունեն փակման օրվա դրությամբ պարտատոմսերի սեփականատերերի ռեեստրում գրանցված անձինք (սեփականատերերը կամ անվանատերերը):

Արժեկտրոնները վճարվում են անկանխիկ ձևով՝ հաշվարկային բանկի կողմից, որը համապատասխան գումարները Թողարկողի հաշվից փոխանցում է սեփականատերերի համապատասխան բանկային հաշիվներին:

Պարտատոմսերի թողարկման պայմաններով սահմանված ժամկետներում պարտավորությունները չկատարելու դեպքում Թողարկողը յուրաքանչյուր ուշացրած օրվա համար պարտավորվում է վճարել մարման ենթակա գումարի 0.1%-ի չափով տույժ:

իգ) Պարտատոմսերում ներդրում կատարող անձը եկամուտ կարող է ստանալ հետևյալ դեպքերում՝

- պարտատոմսերի դիմաց ստացվող տոկոսից,
- մինչև մարումը վաճառքի և գնման գների դրական տարբերությունից (կապիտալի հավելաճ):

Թողարկողի պարտատոմսերից ստացվող եկամուտը ենթակա է հարկման շահութահարկով (իրավաբանական անձանց համար) և եկամտահարկով (ֆիզիկական անձանց համար):

Հայաստանի Հանրապետությունում շահութահարկ են վճարում ՀՀ-ում ստեղծված կազմակերպությունները և ոչ ռեզիդենտները (օտարերկրյա պետություններում ստեղծված կազմակերպությունները, ինչպես նաեւ միջազգային կազմակերպությունները եւ դրանց կողմից Հայաստանի Հանրապետությունից դուրս ստեղծված կազմակերպությունները): Ընդ որում վերջիններիս համար հարկվող օբյեկտ է համարվում հայաստանյան աղբյուրներից ստացվող հարկվող շահույթը: Հարկվող շահույթը հարկատուի համախառն եկամտի և «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքով սահմանված նվազեցումների դրական տարբերությունն է: Շահութահարկի գումարը հաշվարկվում է հարկվող շահույթի նկատմամբ՝ 20 տոկոս դրույքաչափով:

Ոչ ռեզիդենտ կազմակերպությունների համար շահութահարկը հաշվարկվում է այլ դրույքաչափով: Այսպես՝ եթե ոչ ռեզիդենտը հայաստանյան աղբյուրներից ստանում է պասիվ եկամուտներ (տոկոսներ, կապիտալի հավելաճ և այլն), ապա նրա հարկային գործակալը պարտավոր է գանձել շահութահարկ՝ 10 տոկոս դրույքաչափով:

ՀՀ-ում եկամտահարկ են վճարում ՀՀ ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձինք: Ընդ որում ռեզիդենտ է համարվում այն ֆիզիկական անձը, որը հարկային տարում սկսվող կամ ավարտվող տասներկուամսյա ցանկացած ժամանակահատվածում գտնվել է Հայաստանի Հանրապետությունում ընդհանուր առմամբ 183 օր և ավելի, կամ ում կենսական շահերի կենտրոնը գտնվում է Հայաստանի Հանրապետությունում: Հարկվող եկամուտը հարկատուի համախառն եկամտի և «Եկամտահարկի մասին» ՀՀ օրենքի դրույթներին համաձայն իրականացված նվազեցումների դրական տարբերությունն է: Պարտատոմսերից ստացված եկամուտները՝ կապիտալի հավելաճից, ենթակա չեն հարկման, իսկ տոկոսները հաշվառվում են համախառն եկամտում և հարկվում են 10 տոկոս դրույքաչափով: Պարտատոմսերից ստացված եկամուտների հարկման կանոնները նույնն են ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձանց համար:

Ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձանց, ինչպես նաև ոչ ռեզիդենտ իրավաբանական անձանց համար հարկային գործակալ հանդես է գալիս Թողարկողը:

իդ) Տեղաբաշխման ավարտից հետո երկրորդային շուկայում պարտատոմսերի շրջանառությունը (պարտատոմսերով գործարքների կատարումը) կազմակերպվում է արտաբորսայում, իսկ Հայաստանի ֆոնդային բորսայում վերջինիս կանոններով սահմանված կարգով ցուցակվելու պահից նաև՝ Հայաստանի ֆոնդային բորսայում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

իե) Պարտատոմսերի նկատմամբ սեփականության իրավունքը գրանցվում է Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա ինքնակարգավորվող կազմակերպությունում կամ օրենքով սահմանված կարգով լիցենզավորված այլ պահառուի մոտ: Պարտատոմսերի նկատմամբ սեփականության իրավունքը փոխանցվում է ՀՀ օրենսդրությամբ և պահառուի ներքին կանոնակարգերով սահմանված կարգով:

իզ) Օտարերկրյա ներդրողների կողմից տվյալ պարտատոմսերով կատարվող գործառնություններն առանձնահատկություններ չունեն, բացառությամբ սույն բաժնի իգ) կետում նշված հարկային առանձնահատկություններից:

ՆԵՐԴՐՈՂԸ՝ ԾԱՆՈԹԱՆԱԼՈՎ ՍՈՒՅՆ ԱԶԴԱԳՐԻՆ, ՊԵՏՔ Է ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ԳՆԱՀԱՏԻ ՏՎՅԱԼ ԱՐԺԵԹՂԹԵՐՈՒՄ ՍԵՓԱԿԱՆ ՆԵՐԴՐՄԱՆ ՌԻՍԿԸ՝ ՄԻՆՉԵՎ ՁԵՌՔ ԲԵՐՄԱՆ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ: